

Բնագր

ԱՅԿԱԿՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՆՈՒԵՍԻ

Գ. ՏԱՐԻ 1964
Օ Գ Ո Ս Տ Ո Ս 8

پاكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد اوتين كارنيك قزاجيان

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

•

բԱԳԻՆ
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
 ԵՒ ԱՐԲԱՆՍՏԻ

ՎԱՐՁ ԽՄԱԳԻՐ
 Կ. ՍԱՌԻՆԻ
 ԽՄԱԳԻՐՆԵՐ
 ԵՄ. ՊՕՅԱՃԵԱՆ, Պ. ՍՆԱՊԵԱՆ

ԽՄԱԳՐՈՒԹՅԱՆ
 ԱՆՂԱՄՆԵՐ
 Յ. ԳԵՂԱՐԳ
 Յ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
 Վ. ՕՇԱԿԱՆ

ԽՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԷ
 ED. BOYADJIAN
 B. P. 1153, BEYROUTH - LIBAN
 Հեռագրային թիվ 252786/14

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Յ. ՋՈՐԵՑԻ
- ԱՐՄԱՆՏ
- Մ. ԵՐԷՑԵԱՆ
- Ա. ԵՐԿԱԹ
- ՇԱՀԱՆԴՈՒԵՏ
- Մ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ
- Մ. ՄԻՐՁԷ
- Յ. ՏԻՐԱՆԵԱՆ
- ԵՂ. ՊՕՅԱՃԵԱՆ
- Պ. ՍՆԱՊԵԱՆ
- Վ. ՕՇԱԿԱՆ
- Լ. ՄԿՐՏՁԵԱՆ
- ՏՕԲԹ. Գ. ԱՍՏԱՐՃԵԱՆ
- Ե. ԳԱՍՊԱՐԵԱՆ
- Բ. Փ.
- • • • •
- ՆՇՄԱՐՆԵՐ
- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ



Բագրու

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Գ. ՅԱՐՈ, ԹՐԻ 5 07-ՈՍԹՈՍ 1864 ՎԵՂԱՐԻԿ

Վ Ե Ղ Ա Ր Ի Կ

Յ. ԶՈՐԵՑԻ

Դեռ ժամ մը առաջ, ուրիշ երիտա-
սարդ մըն էր, երբ պարսպ ձեռքով ներս
մտաւ:

Հիմա, անդէտէն տարրական ըն-
թերցարան մը եւ պզտիկ բառարան մը
ձեռքին, օրհորդ Վեղարիկի տունէն դուրս
էլլողը բուրբուկին ուրիշ երիտասարդ մըն
է:

Առաջինը՝ ինքն էր, Տիգրանը:
Երկրորդը՝ Տիգրանն է դարձեալ:
Նո՛ր ինքը սակայն:

Առաջ, սիրտ չունէր: Սէր չունէր:
Հիմա, սիրով լեցուն սիրտ մը եւ
սրտով լեցուն սէր մը՝ կուրծքին տակ
կրակ կը դառնան:

Աղուո՛ր, քա՛ղցը կրակ:
Տիգրան կը զգայ, կը տաքնայ:
Եւ, կ'այպանէ՛ ջիշ առաջ, նոյն առ-
տինանէն, դէպի Վեղարիկին յարկարա-
ժինը բարձրացող երիտասարդը, տան
ժուլանկան լպիբշ հերոս մը, զոր ինք չէ
այլեւս:

Երբեմն այդ Տիգրանը եղաւ: Մե-
նայն:
Այո՛ մահը լաւ է, երջանկացնող:

Սուգին գոյնը՝ ճերմակ: Արցունք
չունի: Փպտուն է:

Արդէն, անա կը ժպտի նոր Տիգրա-
նը:

Յարկ մը վար իջնելէ ետք, կը կե-
նայ սանդղամատի մը վրայ:

Կը նայի ետեւ, յետոյ՝ վեր:
- Վեղարի՛կ...
Մաքէն կ'ըսէ:

Կ'ուզէ վեր էլլել նորէն: Կը վարա-
նի:

Արդէն, երկու օր վերջ, զինք պիտի
տեսնէ դարձեալ:

Միշտ պիտի տեսնէ:
Յետոյ՝ լուրջ պէտք է ըլլալ: Նորէն
վեր էլլելը՝ վար իջնել մը պիտի ըլլայ
անշուշտ:

Ո՛չ, ո՛չ:
Այլեւս, ե՛ս չեմ ներեր իրեն նսեմ բա-
նէր:

Եւ, արու, արադ քայլերով կը շա-
րունակէ էջը:

Տե՛ս:

Եւ, արու, արադ քայլերով կը շա-
րունակէ էջը:

Տե՛ս:

Եւ, արու, արադ քայլերով կը շա-
րունակէ էջը:

Handwritten signature or mark.

բու հանելիք լուսախողորմով զուարթանալ սկսած էր գեղեցիկ փողոցը:

Տիգրան, Վայսրոյ մը եւ ժպիտ մը լրթներուն, կը քայլէ գոհ՝ յաջողած գիւտարարի մը պէս հպարտ:

Իր գի՛ւտը:

Աշխարհն ու աստղերը բովանդակելու չափ մեծ է: Անհունօրէն թանկագին:

Անունը սէր է իր գիւտին:

Տեսակը՝ զո՛ւտ, իրա՛ւ, ազնի՛ւ:

Հիմա, կեանքը իմաստաւորող, է՛մաստը բիւրեղացնող միա՛կ քաղցր դադունիքը՝ երբ դադունիք չէ՛ սյուեա իրեն համար, կը զարմանայ թէ՛ առաջ ինչպէ՛ս կ'ապրէր այդպէս անիմաստ ու մեռած:

Կը քայլէ: Կը մէլէ:

Աստղիկ, Շուշան, Եւզին:

Յետոյ՝

Նէլա, Էլիզ, Ժանէթ, Ռոզիկ...

Հազար երազ արժող գեռ քանի՛, քանի՛ կրրի-ֆրէնսիեր վայելից՝ վայելներուն ամէնէ՛ն անվայել երջանկութիւններով:

Բայց, իրաւ սիրոյ հոգեկան քաղցր բանաստեղծութիւնը անհաղորդ մնաց իրեն:

Իրենց նաեւ:

Արդէն, այդ ցնծուն սպիտակահերթուն հետ իր ունեցած կապը սէր չէր իսկական:

Այլ, սեւերու փոխադարձ անասնականութիւն մըն էր՝ չա՛նա-չաներով, բուրխաներով, ա լա Փարիզ փարթիւներով զբաղաբախութեամբ:

Ձէ՛, ուրի՛շ է այս Վեղարիկը...

Երկայն մազեր, խոշոր աչքեր ունի վեղարագոյն:

Սիրտը՝ վեղարի պէս հպարտ, մաշո՛ւք:

Ուրիշ է, ուրի՛շ է աղուորութիւնը այս աղուորին:

Եթէ կենայ գեղեցկութեան որեւէ արձանուհիի մը առջեւ, առա՛նց մերկանալու ալ՝ կրնա՛յ նախանձի կրակը վառել անոր մարմարեայ պա՛ղ օրտին մէջ:

Հաւատացէ՛ք:

« Վեղարի՛կ... »

Նորէն կ'ըսէ, մտքէ՛ն նորէն:

Դիմացը, քառուղիին մօտ, ելեկտրա՛վառ կարմիր ու խոշոր «?» մը կայ:

Անդադար վառելով-մարելով, շարժանը կարի դայիք ընկալի մը կարեւորութիւնը կը յատկանշէ: Հիմա, վայրկեան մը, Տիգրանով կը հետաքրքրուի կարծես: Ու կը հարցնէ.

— Կը սիրես ?... Տիգրան, կը սիրես ?... կը սիրես ?... իրա՛ւ կը սիրես ?... ?... ?... կը սիրես ?... ?... ?... ?... ?...

Տիգրան կը ժպտի կարմիր «?»ին + Կը ժպտի բո՛ւր լոյսերուն:

Կը քայլէ երջանիկ:

Լաւ է այսպէս:

Ամէն բան իր աչքերուն՝ փոխուած, աւելի՛ գեղեցկացած, ուրա՛խ կ'երեւի:

Գեղարուեստասէր տեսակի Ներքիւլ մը, դադունօրէն, առասպելական մեծ վրձինով մը՝ լուսեղէն նոր երանդներ կարծես տուած ըլլայ քաղաքի իրիկնութիւն համայնապատկերին:

Հիմա, Տիգրանին այնպէս կը թուի թէ՛ աստղերը շա՛տ վար իջած են իրենց գլխիքէն: Աւելի՛ խոշոր, աւելի՛ աղուոր կը փայլին:

Գոյներու հեշտանքը շատ կը դեղեցկանայ, խայտ կու տայ Տիգրանի հոգիին:

Հոմի գոլուանքին մէջ իսկ սիրտ կայ, սէր կայ այս իրիկուն, օրուն քրնական եւ արուեստական ամբողջութիւնը՝ իրական, տեսանելի բանաստեղծութեան մը կը վերածուի տակաւ՝ Վեղարիկի ժպիտին պէս գեղ ու քաղցր:

Կը քայլէ:

Բացօթեայ, արդիական, իր յաճախած օրնարանը ահա:

Հոն, լուսնակի աղուոր ֆօնչերքօ մը, մայնասփիւռէն նախ շիտակ կ'երթայ կեղրոնի աւազանը, մայնական ջրանոյշ մը կ'ըլլայ, եւ, ցայտադրելի ոլորտներուն մէջ, նազիկի ձեւերով լողալէ՛՛ հաք կը սփռուի, կը հասնի Տիգրանին, կը զօրփացնէ անոր ճակատը, կը շոյէ լսողութիւնը հոգին, ու ներս կը հրաւիրէ:

Ձի մերձե՛ք, Տիգրան:

Անկիւնի կապոյտ սեղանին շուրջ ա-

ւելի՛ կանաչ կայ, աւելի՛ ծաղիկ ու խաղաղութիւն:

Կ'երթայ, կը նստի:

Յետոյ, նո՛ր միայն կ'անդրադառնայ թէ անդերէն տարրական դասագիրք մը եւ պզտիկ բառարան մը ունի՝ ձեռքին:

Կը դնէ գանոնք սեղանին վրայ:

Մօտեցող սպասեակը Հայ մըն է, իրեն ծանօթ:

- Բարի եկաք, պարոն Տիգրան, հազար բարի: Պարոն Յակոբը մին՝ կ'էր գտնէ ձեզ այսօր, - կ'ըսէ ան՝ սեղանը սրբելով:

- Յակոբ կու դայ, բայց՝ ուշ: Գուհի ինձի քափէ մը պատրաստէ, Մարգիս, շաքարը քիչ:

- Մերո՛վ, - կը հեռանայ:

Տիգրան կը վառէ Վայսրայ մը ես, կը վերցնէ դասագիրքը սեղանին վրայէն, եւ, օրհորզ վեղարկին հետ անցուցած հանձնի պահը վերապրելու համար, ծը-խելով զի սերտէ՞ անդերէն իր դասը.

- I - ես, you - դու, դուք, he - ան, we - մենք, they - անոնք: Արեմն՝ I, you, he, we, you, they ... այս դերանունները սորվեցայ արդէն: She - ան, այսինքն՝ վեղարկել, անշուշտ շատ գոհ պիտի մնայ ուղիմուսներէս եւ աշխատասիրութենէս...

Աւ, Տիգրան, կուշտ-կուշտ, շատ բարձրաձայն կը խնդայ մտքէն: Կը խընդայ մարելու ստիճան:

Պատճառը:

Մի անպարէք իմանալ:

Տիգրան կը խնդայ, կը խնդայ...

Յետոյ, կը շարունակէ սերտողութիւնը՝ ձայնը անզգալարաբ բարձրացընելով.

- To sit - նստիլ, to see - տեսնել, to put - դնել, to go - երթալ ...

Մարգիս կը բերէ սուրճը:

Տիգրան տարուած է ընթերցանութեամբ եւ վեղարկելով: Ձի տեսներ դայն: Կը շարունակէ լսելի ձայնով.

- To write - գրել, to stand - կենալ, to call - կոչել, to sing - երգել...

Մարգիս կը դիտէ, կը լսէ, կ'ապշի:

Հանկու՛ւկ:

- Աժէն օր սրճարան դալով, անզլե-րէն տեսակ-տեսակ թերթեր կարդալը ձեռակերպութիւն է եղեր: Մարդը տոկաւին նո՛ր կը սկսի սորվիլ անգլերէնը: Ես, իմ կարսօն խալովս, իրմէ շատ աւելի լաւ գիտեմ ուրեմն... - ալապէս մտածելով, Մարգիս լուծած կը կարծէ հանելուկը, եւ... քաղաքավարօրէն քրմ-ծիծաղելով, կ'ըսէ.

- To drink - խմել... սուրճը կը պաղի, սըր...

Տիգրան կը սթափի:

Դասաւանդող վեղարկին պատկերը մտքէն կը հեռանայ յանկարծ:

- Հա՛... սուրճը... շնորհակալ էմ, Մարգիս... բաւ տրինի - խմել հը... լա՛ւ, լա՛ւ... շնորհակալ էմ... - կ'ըսէ Տիգրան՝ անակնկալի եկած մարդու բռնագրօսիկ ժպտով:

Մարգիս, կ'նքն ալ կը ժպտի՝ միա-միտ դիտակցութեամբ սակայն:

Ապա, կը հեռանայ՝ ինքն իրեն խոսելով.

- Անշուշտ որ շնորհակալութիւն պիտի յայտնէ քեզի, կարսօն Մարգիս, անգլերէն բառ մը սորվեցաւ քեզմէ... Ճ

Յակոբ սրտակից ընկերն է Տիգրանին:

Մաքուր, պաղափարակա՛ն, քիչ մը շատ կատակասէր երիտասարդ մըն է այս մէկը:

Կարդացած էք ժան Մոնթեսքի «Վշտիմ Գեղեցկութիւնը» վիպակը: Պարծառ, անկեղծ հոգիի տէր, դուարթ Բիէռ Մարսէլ մը կայ հոն:

Հայ Յակոբին եւ Ֆրանսացի Բիէռ Մարսէլին միջեւ եղած տարբերութիւնը ցեղային է միայն:

Եթէ դերասան մը եղած ըլլա՞ր Յակոբ, կրնար Նափուլէօն Պոնափարթի դեմը խաղալ առանց մաֆիոսի:

Երկրայտի է ան սակայն: Մաւալուն գործի տէր մարդ, որ օրուան աշխատանքը վերջացուցած, ներս կը մտնէ ահա եւ կ'ուղղուի դէպի Տիգրանին սեղանը:

Շատ սերտ մտերիմներ զիրար չեն բարեւեր: Ուղղակի կը խօսին:

- Հը՛, մեր Կարապետիկը ի՞նչ յաջողութիւն արձանագրեց այսօր: Աչքերուդ մէջ բաներ մը կը կարդացուին... ուրախ կ'երեւիս, Տիգրան... - Կոտորով կ'ըսէ Յակոբ:

- Ոչ միայն ուրախ կ'երեւիմ, այլ, ուրախ եմ արդէն...

- Օ՛ր...

- Այո, Յակոբ, այնքա՛ն ուրախ եմ: Երկրաչափ ես, բայց զժուա՛ր թէ կարողանաս չափել ուրախութեանս անհունութիւնը. չես կրնար, - կը խօսի Տիգրան՝ դէմքին առնական գեղեցկութեան վրայէն գուտարթ հոյ մը անցընելով:

- Ուրախ եմ անկարողութեանս համար: Բայց նախ ներկայացո՛ւր տեսնե՞ք սա անչափելի ուրախութիւնը: Թերեւս կարենամ չափել դա՞ն...

Տիգրան չի խօսիր: Սիկառէթ կը հըրամցնէ:

Կը վառէ Յակոբ, կը ծխէ, ու՛
- Հը՛, կրցա՞ր տեսնել... կրցա՞ր խօսիլ հետը... ի՞նչ խօսեցար... - կը հարցնէ բարի հետաքրքրութեամբ:

Տիգրան չի պատասխաներ:
Կը ժպտի միայն:

- Պատմէ՛, ո՛ւր տեսար, ինչպէ՞ս տեսար, ի՞նչ խօսեցար, ի՞նչ ըսաւ, ի՞նչ ըրիր... - այս անգամ արագ, մտահոգ հետաքրքրութեամբ կը հարցնէ ճնափուլէօնը, որ տեղեակ էր իր բնկերով վերջին օրերու տնն ծաւանկան վազվազներուն եւ առ Վեղարիկ լսելը արամազրութիւններուն:

- Օ՛ր. այո՛, տեսայ զինք. տեսա՛յ... - կը պատասխանէ Տիգրան երանութեամբ:

- Յետո՞յ...

- Յետոյ, մէկ ժամ միասին եղանք, քով-քովի, դէմ-դիմաց...

- Ուրե՛մն... մէկ ժամ միասին, հը՛...

- Եւ դէմ-դիմաց: Ձինք ճաննալէս ի վեր, առաջի՛ն անգամ ըլլալով, այսպէս շատ մօտէն վայելեցի իր ճաշխարհիկ տեսքը, նաեւ՝ Մոնա Լիզան մոռցը-

նել տուող իր ժպիտը...

(Ապսպրանքի պէտք չկայ: Կարող Մարգիտ լաւ կը ճաննայ զիրենք: «Քափէ, շաքարը քիչ»: Ուրիշ բան չեն խմբեր այս հայ խալիսանները:

Մարգիտ, անշիտագէտի հովեր առնելով՝ «Այ ուիշ ետ օջ...» կ'ըսէ, կը հրամցնէ, կը հեռանայ):

Կը շարունակուի ընդհատուած խօսակցութիւնը:

- Ըսէ՛, Տիգրան, ո՛ւր միասին եղաք, ո՞ր դրօսարանի մէջ...

Այս անգամ թերահաւատութեամբ կը հարցնէ Յակոբ:

Ան լա՛ւ կը ճաննայ Վեղարիկը:
Ո՞վ կրնայ մօտենալ պատուի մօրմնացում այս հայ դեղուհիին:

Ո՞վ կրնայ զարպատել անոր սիրտը:
Ո՞վ:

Ո՛չ ոք:

Քանի՛ քանի՛ պլամ Կլէֆ երիտասարդներ, սիրոյ քանի՛ վարպետ նաւաստիներ դէպի Վեղարիկ նաւարկել փորձեցին:

Բայց իրենց պերճանաւերը յուսահատութեան ծովածայրերու հանդիպեցան ու խորտակուեցան:

Իսկ անհունօրէն ուրախ սա Տիգրանը...

Պատասխանը ուշացնելով՝ խայծ տալ ուզող սա երջանիկ յովա՛ղը հապա...

- Ըսէ՛, Տիգրան. Վեղարիկին հետ ո՛ւր միասին եղաք. իրա՛ւ, եղա՞ք... - պահանջկոտ շեշտով կը հարցնէ դարձեալ Յակոբ:

- Իր տան մէջ:

- Երտա՞կ կ'ըսես, Տիգրան, չե՞ս կատակեր...

- Ինչո՞ւ կատակեմ: Հաւատա՛ւ: Իբր յարկարածինը դացի...

Յակոբ չի խօսիր:

Միրտը կը նեղուի: Կը մտահոգուի:
- Իրա՛ւ կ'ըսեմ, իր յարկարածինը դացի... ի՞նչ պատճառ ո՞նիս տարակուսելու, բնկե՛ր... «Թովմա»...

- Հիմա, ալ չեմ տարակուսիր, այլ, կը զարմանա՞մ...

- Կը դարձանա՞ս...
 - Ինչպէ՞ս գացիր իր տունը: Բա՛րո-
 թովին անծանօթ մըն ես իրեն: Պարզ
 բարեւի մը արժողութեամբ կապ մը իսկ
 չկայ Վեղարիկին եւ քու միջեւ: Յարգե-
 լի պատճառ մը կամ հասկնալի սոնչու-
 թիւն մը առանց ունենալու ինչպէ՞ս գա-
 ցիր Վեղարիկենց...

- Յարգելի պատճառը ստեղծեցի,
 պատճառէն ալ առնչութիւն մը ստեղծ-
 ունցաւ, ու դացի:

- Ուրեմն, մտերմօրէն կ'եզրակացը-
 նեմ: Տոն ժուամ մը՝ աներեսութեան
 մրցում եթէ կազմակերպուի, կրնայ ա-
 խոյեանական մրցանիշի տիրանալ... կը
 Փնտր՛հաւորե՛մ...

Տոն ժուամ:
 Մահիբը դարձած այս անունը, ա-
 ռաջի՛ն անդամ ըլլալով, մեծ տարողու-
 թեամբ հայհոյանքի մը չափ տղեղ կը
 չնչէ երբեմնի Տոն ժուանի ակնջին:

Յակոբի մտերիմ եզրակացութեան
 դէմ՝ մտերմօրէն կը զայրանայ Տիգրան:
 - Պէտք է խօսքերդ չափե՞մք-ձեռք եւ
 կիրթ ըլլաս, բարոյազէ՛տ Մծրնացի,
 Յակոբ՝ Հայրապետ, Հայրապետ պատ-
 ուելի, իմացի՛ր, ես Տոն ժուան չե՛մ, կը
 հասկնա՞ս, Տոն ժուան չե՛մ, Տոն ժուան
 չե՛մ, չե՛մ, երբե՛ք:

- Տոն Տիգրան ես - կարուկ ու պազ
 կը սրբազրէ Յակոբ:
 Տիգրան աւելի՛ կը զայրանայ:
 Զայրոյթէն, վայրոյցը հակառակ
 կողմէն կը մտէ անգիտակցաբար:

Այս անակնկալ սխալը ժպիտ կը
 պատճառէ իրեն:
 Ծիլթըրին հետ կը մարի բարկու-
 թիւնն ալ:

Կը հանդարտե՛...
 Ու, սուրճին վերջին ուժպը կուլ կու-
 տայ:
 Նաեւ՝ վերջին խօսքը Յակոբին:
 Կը լռէ:
 Պօսողը Յակոբը կ'ըլլայ նորէն.
 - Հետաքրքրական է շատ: Ի՞նչ կըր-
 նայ ըլլալ այդ յարգելի պատճառը, որ
 քեզ առաջնորդած է դէպի Վեղարիկ...
 - Իմացայ որ բաւական բարձր կըր-

թութիւն ունի, գեղեցիկ դասարան մը
 շտկած է իր յարկաբաժինին մէջ, եւ
 անգլերէն դասեր կու տայ...

- Հը՛... - լատ սրուած հեռաքըր-
 քութեամբ կ'ընդմիջէ Յակոբ - յե-
 տո՛յ...

- Յետոյ ի՞նչ կ'ուզես որ ըլլայ, -
 հանդուրատօրէն կը պատասխանէ Տիգ-
 րան - դացի իր քով, յայտնեցի թէ մի
 քանի տարի մերը Ամերիկա պիտի մեկ-
 նիմ եւ կ'ուզեմ անգլերէն սորվել...

- Աղէ՛կ...

- Վեղարիկ՝ «ուսուցանելը կրօնք»
 է, պատշաճտ եմք ըսաւ, որճանադրուե-
 ցայ եւ առաջին դասս առի - I you, to
 write, to stand, to sing:

Եկուր Յակոբ եղի՛ր, լաւ ճանչցի՛ր
 Տիգրանը, ու, եթէ կրնաս, զսպէ բարձ-
 րաճայն խնդուքի ահագի՛ն որոտ մը, որ
 կրնայ սիրտ ու կուրծք պայթեցնել զը-
 պըւելու պարագային:

Զայնասիւնուէն լսուող երաժշտու-
 թիւնը՝ Հայու համարձակ խնդուքով ու
 հայերէն բարձրաճայն խօսքերով կը հա-
 մեմուի:

- Հա՛... հա՛... հա՛... դո՛ւն...
 դո՛ւն... հա՛, հա՛, հա՛... իրա՛ւ, դո՛ւն,
 Տիգրան... դո՛ւն... բազմատիպ
 համալսարանակա՛նդ... աշակե՛րտ ար-
 ձանապրուեցար... հա՛, հա՛, հա՛... Ե-
 րեք տարի Գալիֆորնիա, Միչիգըն հա-
 մալսարան... յետոյ՝ Պոսթըն, ՔըՖթ
 համալսարան... յետոյ՝ մեծ տիտղոս-
 ներու սկզբնատու շէս գիտեր քանի՛ լա-
 տին գիբեր... յետո՛յ... յետո՛յ... յե-
 տայ սի՛նչ... ճանդիբէն ըլտ բրիմը մը
 ի ձեռին՝ to stand եւ to sing - «Ա-
 ւա՛ղ փառացս անցուորի»... Հա՛...
 հա՛... հա՛...

Պահիկ մը կը լռէ Յակոբ: Կը լըջա-
 նայ: Կը շարունակէ:

- Այսքան վարպետորդի էզորորդ
 մը ըլլալդ չէի երեսակայնի: Բայց ըն-
 դունէ որ այս բազմապիսի հնարամտու-
 թիւններդ եւ վազվազեմբող անվայել
 բաներ են ի վերջոյ: Այ տարիքը բուսա-
 կա՛ն առած երիտասարդ մըն ես, Տիգ-

բան, եւ քանի որ հասարակ մէկը չես, ուրեմն պէտք չէ հասարակ ըլլաս: Կեանքը, ընթացքը երբեք համապատասխան չեն դիրքեր, ուժումիդ, Գիրտեմ, խօսքերըս պայլի աւետարան են քեզի համար: Երան գան դիտես, բայց արարքներու ճերմակ չըլլալը կ'անգիտանաս գծրախտարար: Մեծ, զնահատելի ընդունակութիւններ ունիս, սակայն, մէ՛ղք, հազար մեղք, խղճի ձայն լսելու տարրական կարողութիւնը կը պակտի քեզի...

Տիգրան գլուխը ծռած էր: Կը վերջընէ: Կը խօսի:

- Կը սխալիս, Յակոբ, այո՛, առաջ, խղճի ձայն լսելու տարրական ընդունակութիւնը կը պակտի բնտի. իսկ հիմա՝ բարձրագո՛յնը կ'աւելնայ մէջն, կը յորդի ու կը յուշէ զիս... կը հասկնա՞ս...

- Անկեղծութիւն ըսուածը արդեօք որբո՞ն չկայ այս բանաստեղծութեանդ մէջ:

- Ընդհակառակը, կեղծիք ըսուածը այնքան չկայ խօսքերուս մէջ, որքան հիմա գուն կաս սա կապոյտ թաղարին քով՝ որպէս ասհաւատ փշեմիջ: Այ թո՛ւ խօսիմ քեզի...

- Աչի՛նչ խօսիր, Տիգրան, խօսքս լսէ, գործադրէ՛, որ հաւատամ անկեղծութեանդ:

- Խօսիր:

- Մի՛ մտնեար, տոնժուանական հնարամտութեանդ ճանկերը մի՛ նետեր այս մաքուր հայ աղջկան: Վարդի պէս աղուոր թօղիկներ, ժանկիներ, ժաշիկներ ունիս: Երջանկութիւնը շատ ատան է քեզի համար: Հեռո՛ւ կեցիր այս աղջկան սուղ պատիւէն: Փոխանակ անգլերէն ճարտարութիւնը արդարութիւն սորվիր, եւ անբիծ վեղարիկ մը խելքէ-ճամբէ մի՛ հաներ:

- Խելքէ պիտի հանեմ, Յակոբ, եւ իմ ճամբայէս պիտի քաշենք միասին: Առանց վեղարիկի՝ երջանկութիւն չկայ ինծի համար: Այլեւս, վեղարիկը կեանքիս իմաստն է, կեանքիս իմաստը՝ վեղարիկ:

- Օ՛... այսքան...
- Եւ աւելի՛: Կը սիրեմ վեղարիկը:

Կ'իմանա՞ս, Յակոբ, կը սիրե՞մ... գիտե՞ս ինչ ըսել է... այսինքն՝... սիրե՛լ... ու ես կը սիրեմ...

- Եւ դուն կը սիրե՞ս... Թէ՛քսիքսար սէրերը սէր ձգած են մէջը. սիրելու հագեկան կարողութիւնը ունի՞ս, Տիգրան:

Իսկապէս, սիրելու հագեկան կարողութիւնը առաջ լուսէր, երբեք չունէր Տիգրան:

Հիմա ունի՛:
Ունի՛: Վեղարիկը զայն շնորհեց իր գեղեցկութեամբ, գեղեցիկ յըլուքեամբ եւ պատկառելի անբծութեամբ:

Անունը արդարացնող չես դիտեր ինչ մը ունի այս աղջիկը, ինչ վեհուքիւն մը:

Տիգրան, լպիրշ տրամադրութիւններով դացած էր անոր քով, բայց ուսուցչուհիին վեհութեան առջեւ պղտրկացած էր ինքն իր մէջ, ու փոխուած յանկարծ:

Եւ, փոխուած ներաշխարհին մէջ զգացած էր մեծ սիրոյ մը մեծ կրակը: Մաքուր, գեղեցիկ, բիւրե՛ղ կրակը, որ քաղցրորէն կ'այրէ երիտասարդ համալսարանականին ողջ էութիւնը:

Անկեղծ կը խօսի Տիգրան: Կը սիրէ՛ վեղարիկը՝ սէրերու ամէնէն՝ իրակաւորով, ամէնէն՝ բանաստեղծականով...

Իրա՛ւ, իրա՛ւ:

- Հաւատա՛, Յակոբ:

Տիգրան կը սիրէ: Եւ, արդէն, կը սկսի կարօտնալ ահա: Կը տառապի՝ վեղարիկէն հեռու ըլլալուն համար...

Աչքերը կը մատնեն իր անդրանիկ սիրոյն անդրանիկ յուզումը:

Յակոբ զայն կը տեսնէ հողիտ՛ի ալ: Կը հասկնայ:

Եւ, իր ընկերոջ տրամադրութիւնը զուարթացնելու համար՝ ճուրիտ, սիրոյդ կենսա՛ցը խմենք, Տիգրան՝ կ'ըսէ, ուխտի բերել կու տայ:

Կը խմեն:

Յետոյ՝ նորէ՛ն, նորէ՛ն...

Կը խմեն, կը... պայծառանան ու կը մեկնին:

Անոնց կտուէն, Սարգէս, անմեղ միամտութեամբ զեղաւ պայ, Ժոյ էկէն՝ ըսել չի մոռնար:

Ճ

Վեղարի՛կ...
 Երկու օրը երկու դար կ'ըլլայ: Բայց կ'անցնի:
 Տիգրան կը փութայ «դպրոց»:
 Իր աղուոր «ուսուցչուհիին» Հանդէպ ունեցած սէրը՝ կարօտով բաղձապատկըած է, կարօտը՝ սիրով:
 Վեղարիկ, Ժպիտներու ամէնէն քաղաքավարը այտերուն, կը շիճաւորէ իր Համալսարանական աշակերտը:
 - Բարի եկաք, պարօն Տիգրան, Հըրամեցէ՛ք:
 Կը նստին:
 - Հառւ ար ի՞նչ ? լաւ սորված էք ձեր դասը...
 - Շատ լաւ, օրինորդ Վեղարիկ, գիրքս ալ գրեցի, - կը պատասխանէ Տիգրան՝ ինքն իրմէ ամնալով...
 - Ուրախ եմ, շատ ուրախ, միշտ պէտք է սորվել, պարօն Տիգրան, միշտ պէտք է գրել: «Յաջողութեան ոսկի բանալին յարատեւութիւնն է» կ'ըսէ Շէյք-ըբրիբ: Պէտք է միշտ աշխատել: Ուրեմն լէ՛ք սա սքարք, այսինքն՝ սկըսինք...
 Տիգրան, այդ վայրկեանին, սեղանին առջեւ նստած, Սարգեանի «անսլանաք սիրողիմ» պէս, տարուած, վերայցած էր Վեղարիկի կախարդիչ դեղեցկութեան Հանդէպ:
 Պատէն կախուած ժամացոյցին զանգակ-կկուն «ժամը 4» կ'երզէ: Տիգրան ուշքի կու գայ, Վեղարիկի խօսքերուն վերջին բառը կը լսէ միայն...
 - Հը՞... Հա՛... այո՛, այո՛... սկըսինք...
 Կը բանայ դասնադիրքը...
 - Կ'ուզէ՞ք որ նախ ես կարդամ անդամ մը, պարօն Տիգրան:
 - Լաւ սորված եմ, պէտք չկայ...
 - Կարդացէ՛ք ուրեմն:
 Տիգրան, մեծ դժուարութեամբ, ըսկընակի անհամարձակութիւն կը կեղծէ, եւ կը սկսի կարգալ իր դասը...
 - Այ - ես, ի՞նչ - դուն, դուք...
 Կը լսէ: Կը զայրանայ քիչ մը:
 Տոնժուանական երբեմնի Տիգրանին

կողմէ սկսուած այս խաղին, ստախն շարունակութիւնը դժուար կու գար իրեն:
 - Շարունակեցէ՛ք, պարօն Տիգրան - քաղաքավարութեամբ կը հրամայէ Վեղարիկ:
 - Ի՞նչ - դուն, դուք, եի - ան...
 Ան...
 Ո՞վ:
 Յակոբը:
 Տիգրան կը յիշէ ակամայ:
 Յակոբը...
 Անկե՛ղծ, կծո՛ւ Յակոբը...
 Իրեն այնպէս կը թուի թէ մտերիմ ընկերը կեցած է իր ետեւ ու կը պոռայ շատ բարձրաձայն...
 - Պէյրուս, Հայ Սե՛ն...
 - Ուր - մենք, տե՛յ - անոնք...
 - Դալիֆորնիա՛... Սթէնֆը՛րս Համալսարան...
 Չա՛ր Յակոբ, Դե՛ս կը խնդա՛յ ալ բարձրաձայն...
 Վեղարիկ կը նայի Տիգրանի դասադրքին շնայող աչքերուն, ու կը խոտովի...
 Ուրեմն, կը լսէ՞ Յակոբին աղաղակն ու ծիծաղը...
 Տիգրան, շուարած մարդու լայն եւ անորոշ ժպիտ մը կը պատցնէ գէժքին վրայ, «Յակոբը ընկերս է, այսպէս է, ներողամիտ եղէք՝ ըսել կ'ուղէ եւ կը շարունակէ ընկերցումը:
 - Թու սիր - նստիլ, քու սի - տեսնել, քու փուք - գնել, քու կօ - երթալ...
 - Պոսթը՛ն... Թը՛ֆթ Համալսարան...
 Օ՛, Հերի՛ք, Յակոբ, Հերի՛ք: Չգէ՛ վերջանայ ընթերցումը: Կը բաւէ՛, Յակոբ, մի՛ խնդար...
 - Թու... քու... քայք - գրել...
 Հի՛մա, ի՞նչոր «աշակերտին» այնպէս կը թուի թէ Յակոբ կը մօտենայ Վեղարիկին եւ ականջին կը փոփայ...
 - Թու... քու... քայք Հեղեղուն մի՛ Հաւատաք... անգլիերէն վիպակներ կը գրէ...
 Հերի՛ք զուարմանաս, Յակոբ, Հեղեղուն ըրէք: Ըրածդ մի՛մոտութիւնն է, կարճ՛ուկ

Նախորդին...

- Թու սրէնտ - կենալ... քու գոլ - կոչել... քու... սի... սի... սի...

Կը դժուարանայ կարգալ Տիգրան: Իր մէջ համալսարանական մարդը շատ կը խոսվի, կը յուզուի...

Ձոր ու կայուն կաւի կտոր մը չես գիտեր ինչպէ՞ս կը գոյանայ կոկորդին մէջ...

- Թու... սի... սիմի - երգել...

Անբեհ'ս Յակոբ, զուարթ անկողն...

Հիմա ալ, անկիւնի մէծ ուտիոյին վրայ, ձօնէրի մը պէս կեցած, ամբիկ-լան երգիչներու քիթ-բերան ծոճոկը վարպետօրէն կեղծելով, փօքէլ ծաղ-բերք մը կը թոցնէ...

- «Աննարիպա

Ձնաշխարհիկ

Մայ Վեղարիկ,

Ձնաշխարհիկ,

Գօգալ տարլինկ

Tcha | tcha | tcha |

Կը սիրեմ քեզ,

Հուստատ

If you love me

As I love you,

Հոգի կու տանք իրարու,

Կ'ուտենք քօնքօն,

Et nous chantons,

- Soukou | Soukou | ...

Տիգրան չի կարգար այլեւս:

Ծաղրերգը այնքան կը զայրացնէ գինք, որ դատապարտը կը ձգէ մէկ կողմ:

Յետոյ, ոտքի կ'ելլէ յանկարծ, ա-րագ կը վառէ սիկուսէթ մը, ու, ծխելով կը ճեմէ ջղայնոտ:

Յակոբ չքացած է արդէն...

Բայց ծաղրերգին բոտերը տակաւին կը խժժան ականջին մէջ:

Երիտասարդը կը շարունակէ ճեմել ջղայնոտ: Կը ծխէ, սիկուսէթի փոշին կը թօթուէ արագ արագ: Երբեք նկատի չ'առնիր «ուսուցչուհին», որ գինք կը դե-տէ սպառած, ու, ներսէն, կը վիրաւոր-

ուի՝ նկատի չ'առնուելուն համար:

Բայց մը կը մօտենայ, քրոջական անկողն ժպտում կ'ըսէ.

- Հանդարտեցէ՛ք, պարո՛ն Տիգրան, ի՞նչ ունիք... անհանգի՞ստ էք արդ-եօք...

Տիգրան, առանց ուշադրութիւն դար-ձրնելու Վեղարիկին, կը նստի, գլուխը կ'առնէ ակերուս մէջ, ու, լուռ, ներսէն կը լսէ ձայն մը, որ պոռալով կ'ըսէ, կը կրկնէ.

- Կեղծի՛ք...

- Կեղծի՛ք...

- Կեղծի՛ք...

Պահ մը կը դնայ այսպէս, սրտնե-ղած՝ ներսի ձայնին ունկնդիր:

Յետոյ, երբ դուրսը կը վերցնէ, կը տեսնէ Վեղարիկը, որ խոհանոցէն կու գայ, սուրճ կը բերէ:

- Հրամմեցէ՛ք, պարո՛ն Տիգրան, պարտալ անցուցած ձեր տարիներո՛ւն հա-մար կը նկուրիք: Աշխատանքով կարելի կ'ըլլայ դարմանել ամէն բան. հրամմե-ցէ՛ք...

- Անմե՛ղ աղջիկ... - Ինչդուրէկ ձայ-նով կ'ըսէ Տիգրան, հինով՝ նոր սիկա-ուսէթ մը կը վառէ, եւ, լուռ ծխելով, կը խմէ... աշխարհի ամէնէն լուռ եփուած սուրճը...

Կը հանդարտի...

- Անցնինք մեր նոր գասին... կ'ըսէ Վեղարիկ, կը ժպտի անոյ՛, ու կը դար-ձընէ դասապարտին էջը:

- Լէսըն քու - դաս երկրորդ...

Հանդարտութիւնը կը հեռանայ, ե-րիտասարդը ոտքի կ'ելլէ անմիջապէս եւ կը խօսի.

- Ահ, օրիորդ Վեղարիկ, չափէն ա-ւելի անտրամադիր եմ. նոր դասը պիտի չկրնամ առնել. կը խնդրեմ որ ներդա-միտ ըլլաք. յաջորդ դասին տուէք նոր դասը...

- Լա՛ւ. ուրեմն երկու օր ետք:

Ի՞նչ առաջ, գիրքն ու տետրակը ձեռ-քին, Վեղարիկի տունէն ներս մտնողը ուրիշ Տիգրան մըն էր. ուրախ, երջա-նիկ, ժպտուն Տիգրան մը...

Հիմա, գիրքն ու տետրակը սեղանին վրայ ձգած, արագ քայլերով գուրս ել-լողը բոլորոյի՛ն ուրիշ Տիգրան մըն է. զրացուած, շա՛տ տխուր Տիգրան մը,

լսելը անհրեճութիւններէ ալ վերջնակա- նապէ՛ս հրաժարած, լուրջ հայ երիտա- սարդ մը, որ կ'այլապէս ինքզինք՝ իր կեղծաւորութեան համար:

Ձէ՛, չէ՛:

Ատութեամբ մօտենալ չէր ուզէր Վե- ղարիկին, զոր կը սիրէ իրաւօրէն:

Ձէ՛ր ուղեր կեղծիքի դերասան ըլլալ: Արո՛ւ մնալ կ'ուզէր. Տիգրան մնալ: Ես

Օր մը ետք:

Արուեստի Տան մէջ. Թէյասեղան մը՝ ի պատիւ Գայիֆորնիոյ Սթէնֆորտ հա- մալսարանի մեծաճշտակ դասախօսներէն Փրոֆ. Մարք Պլէքուէլի, որ մասնաւոր հրաւերով, Մերձաւոր Արեւելք եկած է, կարգ մը քաղաքներու մէջ դասախօսու- թիւններ տալու:

Սեղաններու շուրջ պատկառելի ժար- դեր կան - Ամերիկեան հիւպատոսարանի մեծ պատմիչներ, քաղաքին կրթական տնօրէնը, հոգեւոր պետեր, ամերիկացի եւ անգլիացի յայտնի դէմքեր, անուանի բժիշկներ, որոնք Փրոֆ. Մարք Պլէքուէլի հրրեմնի աշակերտներն են:

- Լէյտիզ Էլնա մէքսլըն, անհունօ- րէն ուրախ ենք այսօր, որովհետեւ, պատիւ ունինք մեծարելու յայտնի գիտնա- կան եւ անմոռանալի ուսուցիչ փրոֆէ- սէօր Մարք Պլէքուէլը

Ոտողը Տիգրանն է, որ փրոֆ. Պլէք- ուէլի յատկանշելի աշակերտը եղած ըլ- լալուն, իրեն տրուած էր այդ պատիւը: Անշուշտ, անպիտան կը խօսի Տիգ- րան: Իայց կը խօսի այնքա՛ն սահուն, այնքա՛ն հոտուն, որ կ'ըսես... Ձրչիւի աղբոր տղան է, կ'ըսես՝ ուրիշ լեզու չի դիտեր Ձրչիւի պէս, միայն անպիտան գիտէ...

Տիգրան կը խօսի... կը խօսի...

Սակայն, մի քանի վայրկեան ետք, Ձրչիւի աղբոր տղան կը փոխուի յան- կարծ, կ'ըլլայ... շարսանճազցի Մկրտ- տիչ աղբոր մը թոռը եւ կը սկսի շաք- փաք խօսիլ անպիտանը...

Բառերը կը դանդաղին, ուշ կը հաս- նին լեզուին, դժուար դուրս կ'ելլեն խօս-

քերը, որոնք շինծու հազերով կ'ընդհատ- ուին, իմաստը կը խեղդուի...

Փրոֆ. Պլէքուէլ շատ կը դարձանայ ասոր համար...

Տիգրանը պերճախօս տղայ է. բայց ինչո՞ւ համար այսպէս... ինչո՞ւ այս ձախողութիւնը...

Հին ուսուցիչը ի՞նչ պիտի գիտնար, թէ այդ վայրկեանին, իր պերճախօս ա- շակերտին նայուածքը հանդիպած էր նոր ռուսացուհիին՝ ճշող նայուածքին...

Երեկոյթին կազմակերպիչները Գո- լէճի շրջանաւարտներն էին: Վեղարիկն ալ, որպէս նախկին գոլէճական, ներ- կայ էր հոն, կարգադրիչի կապուտ ժա- պաւէն ունէլ: ալ բազուկին:

Թէ՛յի զաւաթը ձեռքին, խարուած, զայրացած իշխանուհիի մը պէս, Վեղա- րիկ կեցած է ահա թէ՛ անդին, մարմար- եայ սիւնին քով, եւ, էգ առիւծի նախ- ուածքով կը նայի Տիգրանին:

Կը մտաբերէ՝ անգլիէն ատրրական դաս մը տալը, ուսուցչուհիի թէ՛ մը հը- պարտ իր կեցուածքը, դաս կարգացնե- լը...

Կը յիշէ իր գերակայութիւնը դասի պահուն, եւ, հիմա, ներսէն, կը ծիծա- ղի իր միամտութեան վրայ:

Ծիծաղը կ'ծու է, սուր:

Վեղարիկի... ՈՍուհին այնքա՛ն կը վերաւորուի, որ զայրոյթը կ'աւելնայ տակաւ...

- Ձա՛ր աշակերտ... - կ'ըսէ սեղմած ատամներուն մէջէն, ու կը հեռանայ ա- րագ:

Տիգրան խօսքը կարճ կը կապէ այլ- եւս: Բարի դալուատ կը մաղթէ փրոֆ. Պլէքուէլին, կը նստի:

Ուրիշներ ալ կը խօսին: Տիգրան չի լսեր, չի հասկնար: Թէյասեղանին առ- ջեւ բացակայ ներկայ մըն է ինք:

- Թէ՛յի կը պողի արդէն, Տիգրան, մտքով հոս չես անկասկած: Ի՞նչ, ռու- սուցչուհին՝ իր «պարիկ» աշակերտին թեւէն քաշելով իր հե՛տ տարաւ եւ հի- մա կը պատժէ՞ զայն արդեօք... - Հաս- կընալի ժպիտով կ'ըսէ Յակոբ, որուն աչքէն ոչինչ կը վրիպի:

Ճ

Դուռը սպասուհին կը բանայ :
 - Զո՞վ կ'ուզէք, պարոն :
 - Օրիորդ Վեղարիկին հետ խօսիլ կ'ուզեմ :
 - Կը ցաւիմ, տունը չէ օրիորդը :
 - Ինչպէ՞ս թէ տունը չէ. այսօր... դասի օր է...
 - Քիչ առաջ մեկնեցաւ :
 - Ե՞րբ կը վերադառնայ արդեօք :
 - Զե՞մ գիտեր :
 Ներդուրիւն ինչորոշ ժպիտ մը : Եւ դուռը կը դռցուի :
 Տիգրան կը մնայ պահիկ մը գոց դուռն առջեւ, կը ջերէ սկանջին ետեւը, Վեղարիկին երէկ գիշերուան գայրոյթը կը յիշէ, Վթերեւս, իսկապէ՛ս՝ տունը չէ՞ կը մտածէ ու կ'իջնէ վար :
 Կ'երթայ դարձեալ սրճարան, զո՞վ կանաչին, աղուոր ծաղիկներուն եւ գաւաթ մը ուխտի մէջ մեղմացնելու իր տաք յուզումը :

Ճ

Յաջորդ օր նորէն կը զարնէ դուռը :
 Նորէն՝
 - Շատ կը ցաւիմ, պարոն, օրիորդ Վեղարիկը տունը չէ, ջերէ առաջ մեկնեցաւ, չեմ գիտեր թէ երբ կը վերադառնայ...
 Կանխիկ կը պատասխանէ սպասուհին՝ չար ժպիտով, որուն իմաստը լաւ կը հասկնայ Տիգրան :
 Նկատի չ'առնելու գայն, ու քայլը առաջ կը նետէ ներս մանկու համար :
 Ամէն գնով, կ'ուզէ անպայման տեսնել Վեղարիկը, յայտնել իր սէրը, որ պէտք չէ այսպէս սկսել, բայց սկսաւ այսպէս...
 Կեղծիքը պէտք չէ ըլլար, բայց եղաւ, պատահեցաւ : Հիմա, կարեւորը՝ կը սիրէ զինք անկեղծօրէն...
 Սպասուհին կը փորձէ արդիւն մուտքը :
 - Կը ցաւիմ, պարոն...
 - Մի ցաւիք, օրիորդ, ես կը սպասեմ զինքը : Հիմա ուր օր է կու գայ : Թերեւս... Եկած է արդէն... - ըսելով,

քաղաքավարէն մէկ կողմ կը հրէ սպասուհին ու ներս կը մտնէ :
 Սրահին մէջ, դաշնակին առջեւ նըստած է Վեղարիկ, եւ ձայնադրուած տետրակ մը կը թերթատէ :
 Երբ Տիգրան կը մտնեայ իրեն, անփութօրէն կը դոցէ տետրակը, կը զննէ զայն դաշնակին վրայ, ճաշատուրեանի կիսանդրիին քով :
 Ապա իր նուրբ, երկար մատները կը սանի ստեղծարարին, եւ,՝ նայուածքը վեր, անորչ կէտի յառած, մեղմօրէն նուագել կը սկսի :
 Երրտասարդը կը կենայ իր քով :
 - Բարե՛ւ, Վեղարի՛կ... - կ'ըսէ տարօրինակ մտերմութեամբ :
 Վեղարիկ չի պատասխաներ : Կը նըստէ՝ նայուածքը առանց վար առնելու :
 Տիգրան կ'ազդուի, բայց կը խօսի :
 - Բարեւա յարգել չեա ուզէր (Վեղարիկ՝ մտէն - որովհետեւ յարգելի չէ...), իրատեք ունիս (Վ.՝ մ - հետս եգալի՛ր ալ կը խօսի...), կեանքիս մէջ, Վեղարիկ, առաջին անգամ ըլլալով, ներդուրիւն ինչորոշ կ'ուզեմ (Վ.՝ մ - չի՞ խնդրեր պարտնը, խնդրե՛լ կ'ուզէ...):
 Գիտեմ, թանկագին արժանապատուութեանդ վշտացուցի (Վ.՝ մ - այդի՛ս ուրեմ փոր օր) : Կը հաւատամ վեհանճարութեանդ, ահա թէ ինչու կը պահանջեմ որ կանխես զիս ներդումտութեանդ (Վ.՝ մ - պիտի խնայեմս, այս մարդը որքա՛ն հայ է... Անբազմաութեամբ պէտք է կանխե՛լ գիմֆ. կը գծուարանայ՝ անբազմութիւն խնդրելու էգէ մը. պէտք է կանխե՛լ, չի խնդրեր, կը պահանջէ...)
 Եթէ մերժէք, ես պիտի գանիմ իմ անձէս...
 Վեղարիկ կը նուագէ, նայուածքը առանց վար առնելու :
 - Խօսէ վերջապէս, ջէն պահելը շատ հասարակ է, Վեղարի՛կ :
 I'm not here - կը խօսի Վեղարիկ՝ դիւրքը չփոխելով :
 - Լա՛ւ, - կ'ըսէ Տիգրան, - բայց ես հոս եմ հիմա : Ոտքի վրայ ըսեմ ըսելիքըս : Ու երբ դուն գաս, երբ հոս ըլլաս, խօսքերս փոխանցէ... ջեզի : Զե՛մ տեսք,

այո՞ շիտակ խօսքով՝ սրիկայութեամբ
ժօտեցայ զեզի: Մի՛ հարցնեք թէ ինչ-
պէս, ես ալ չեմ գիտեր, փոխուեցայ,
բոլորովին փոխուեցայ: Ու հիմա, Հա՛յ
երիտասարդի խօսք, կը սիրեմ զեզ՝
կեանքէս աւելի, կը սիրեմ անկեղծ...

- Կեղծիքով, կը սիրես անկեղծ
կեղծիքով: - զրեթէ պոռալով կ'ընդմիջէ
Վեղարիկ, յանգիմանական կտրուկ նայ-
ուածք մը կը նետէ Տիգրանին, յետոյ,
նորէն վեր, անորոշ կէտ մը գիտելով,
կը շարունակէ նուազել անհանդարտ...

- Ձեռ հաւատար, իրաւունք ունիս,
բայց մի՛ նեղուիր եթէ ըսեմ թէ անիրաւ
է չհաւատալը: շիտակ չէ՛: Ես շիտակ
հոգիով, շիտակ կը սիրեմ զեզ, կ'ուզեմ
զեզի հետ շիտակ կեանք մը ապրիլ...

- Իսկ ես, շիտակ կեանք մը ապրե-
լու համար, շիտակ կ'աւտեմ զեզ եւ ծուռ
արարքդ, պարո՛ն համալսարանական:

- Մի՛ ըսեր այդպէս:

- Ըսի՛ ըսելիքս:

Ու կը շարունակէ նուազել Վեղա-
րիկ՝ կնոջական վշտացնող անտարբերու-
թեամբ: Կը նուազէ ձեզ՝ երազներու
հանդարտութեան մէջ թաղուած երա-
ծիշտի մը պէս:

Տիգրան, առանց մտիկ ընելու, լուռ
կը մնայ մի քանի վայրկեան: Վեղարի-
կին փոստ անտարբերութիւնը սրտին կը
զպի ու կը վշտացնէ զայն:

Վերջին բան՝

- Ես Հա՛յ երիտասարդի խօսք ըսի,
Հայ աղիկայ հաւատքը չունեցար, Վե-
ղարիկ, երանի վերջնականապէս ժողոված
ըլլայի ուսումս, երբ դուն չես ուզեր
մոռնալ կեղծիքս, զոր ես կ'աւտեմ այլ-
եւ... Երանի դիտցած ըլլայի անգլե-
րէնը. այդ պարագային թերեւս հաւա-
տայի խօսքերուս եւ իմ ըլլայիք...

Տիգրան կը սկսի քայլի զէպի դուռը:
Վեղարիկի մտքէն, սրտէն տաք յու-
զում մը կ'անցնի:

Փնտռածը գտած երջանիկ հոգիի աղ-
ուռը յուղում մըն է ասիկա, որ կը փաթ-
թըի իր երազին, իրականացնել կ'ուզէ
զայն:

Երա՛զը: -

Հին է, զեղեցիկ է, երա՛զ է, ուր՝
ղինք իբրա՛ւ սիրող մը սիրելու տենչը կը
բարբախէ սրտին պէս, միշտ սրտին հետ:
Կը մտածէ: -

Ահա մարդ մը, տաքչուի Հայ ե-
րիտասարդ մը: Ի՞նչ պին իրեն՝ լեզու մը
ամբողջ, որուն տիրացած է տարբերորա՛ւ
հիզով, մոռնա՛լ կ'ուզէ: -

Ահա սիրելի խենթ մը, որ իր սիրոյն
անկեղծութեան հաւատք չտածուած ըլ-
լալուն համար զայրանալով՝ կը փափա-
քի շառած ըլլալ համալսարանական
պատկառելի կրթութիւն մը:

Վերջին հաշուով՝ ի՞նչ կ'արժէ ինք,
ո՞վ է ինք: - Վեղարիկ մը, էդ մը:
Բայց, մեծ աշխատանքով տիրաց-
ուած բարձրագոյն ուսում մը՝ աշխարհի
բոլոր էգերէն լա՛տ աւելի կ'արժէ:

Օ՛, որքան ճիշտի՛ն է. որքա՛ն Հայ
է այս երիտասարդը, որ կը մեկնի անա՛ւ:

Վեղարիկի մտածումներուն տեւո-
ղութիւնը մէկ ակնթարթէն աւելի չէ,
մէկ ստեղէն միւսը մատնահարելու տե-
ւողութիւն մը լոկ:

Տիգրանի առաջին քայլափոխին, Վե-
ղարիկ ոտ ստեղ մը կը մատնահարէ ուժ-
գին, ոտքի կ'ելլէ յանկարծ աւ՛:

- Կեցի՛ր, - կը հրամայէ բարձրա-
ձայն՝ սէրը յայտնելէ առաջ, իր մէջի
վշտացած ուսուցչուհին ձեռով մը հաշ-
տեցնելու, հանդարտեցնելու համար:
Երիտասարդը կը կենայ, զէժքը՛ չԷ-
բան:

Հայուհին կը ժօտենայ անոր, կը
կենայ դիմացը, պահիկ մը լուռ կը դի-
տէ զայն՝ համակրանքի յորդուն նայ-
ուածքով:

Յետոյ, շրթներուն աջ կողմը զեզի-
ցիկ շակերտ մը կը բանայ ժպիտով՝

- Ձե՛ր փափաքի դիտցած ըլլալ
անպիւբէնը, Տիգրան, հիմա ե՛ս այլեւս
կ'ուզեմ դաս անել զեզմէ...»

Կ'ուզէ, երեք անոյշ ակնթարթներով
կախմանկէտ կը դնէ խօսքին ետեւ ու
ձախ այտին ժպտուն զծիկներով կը զոցէ
շակերտը:

Յ. Զ.

ԱՐՄԱՆՏ**Ա Պ Ի Ե Լ Ա Յ Ն Պ Է Ս**

Դատասարտուած ենք բոլորս ապրելու,
Մենքնեղու՛՛նք...

-Ո՛վ կեանք անպատրանք,
Սովորել են այժմ աչքերս քո մութին,
Խռոչին, խուփին, -

Քո մութերի մէջ քայլում եմ հիմա
Անվախ, անվարան,
Իմ կարծիք՝ վահան,

Առանց փոփոզում լռոյսի նիզակի՛
Քայլում եմ ահա,
Անխորտափ, անահ,
Քո մութերի մէջ՝

Ուր կան ճահիճներ նեղի ու դաւի...-

Վարժուել են այժմ աչքերս քո մութին,
Խռոչին, խուփին,
Հոգիս՝ քո աւուրն
Միրտս՝ քո բոքին, -

Բայց՝ կրկին, կրկին, չգիտեմ ինչու՛,
Դողում է հոգիս
Այս ազդամուղջում,
- Հաւատս է կազում՝
Կասկածի փուշը
Իր ստում, ստում...

✱

Ես գիտեմ հիմա՛ որքա՛ն մաքուր են
Մեր վէտ շեղների ճիւղերը ազուար,
Որքա՛ն անարատ է կաթը հայ մօր,
Եւ որքա՛ն սեւ են, անթափանց ու բուք՝
Նախամահի հոգին ու սիրտը անգութ...

Ես գիտեմ հիմա՛ նոյն Պիղատոսն է
Եւ նոյն Յուդան իսկաբնութացի,
Որ՝ չկան Յօրըն ու Սամարացին,
Ես գիտեմ հիմա՛

Որքա՛ն արդար է գայլալսքը Հայի,
Որքա՛ն հոգեմաշ՝ կարօտը մրա,
Որքա՛ն բնական՝ մանուկը արդար
Ու՛ խորը, խորը հաւատքը մրա...



Տե՛ս, ինչպէս քեթեւ,
 Մանուկը անհոգ քիթքեռ է որսում,
 Ու երբ ընկնում է իր ջիւղ տշխրի երկինքը մաքուր
 Իմ հոգու խորունկ լնի մէջ տխուր՝
 Տեսնում եմ Աստուծան,
 Որ երա խօսունք ընթերի միջից
 Նայում է տրտում:
 Ու հարցնում է ինձ մանուկը խելօք.
 - Ինչու ես տխուր...
 Տխուր եմ, տխուր՝ իմ ազնիւ հոգի, -
 Ասում եմ երան, -
 Զի ես կորցրել եմ երկու անկումս
 Բան այս աշխարհում...
 Մէկը՝ մարմարէ սիւնն է մեր հոգու լուսէ տանարի,
 Լոյսի մի սիւն է մեր ճամբուն մթին,
 Ու առանց նրան մարդ խեղճ է որքա՛ն,
 Փուչ է կեանքն իր
 Ու մահը՝ դաժան.
 Կեանքն՝ լոկ տանջանք,
 Վախերի կայան.
 Եւ անառագաստ, անդեկ, անթիակ՝
 Մակոյկ է ընկած փոթորկի բերան.
 Օ՛, առանց նրան մարդ խեղճ է որքա՛ն,
 Մի մութ նկուզ է, չունի պատուհան.
 Եւ դու՛ ռ՛վ մանուկ իմ խելօք ու հեզ, -
 Օ՛, դու նրանով հարուստ ես որքա՛ն, հարուստ ես
 որքա՛ն...
 Մի՛ւսը՝ կայանն է մեր հոգու վերջին,
 Ու առանց նրան մարդ խեղճ է, չնչին,
 Դռոցոջ տերեւ է, տերեւ՝ հողմավար,
 Արմատախիլ ծառ,
 Բնագուրկ ծիծառ...



Մանուկ պիտ՛ լինել, օ՛, մանուկ, մանուկ,
 Որպէսզի զգալ, հաւատալ, սիրել
 Այնպէս՝ որ երբեք չեմք կարող մէկ էլ
 Տեսնել ու զգալ, հաւատալ, սիրել, -
 Մանուկ պիտ՛ լինել.
 Մանուկ՝ բնական ու հաւատարար,
 Կանուկ՝ ինքնատիպ եւ պարզ ու անկեղծ,
 Մանուկ՝ տեսնող ու մեծ բանաստեղծ,
 Մանուկ՝ Աստուած, իմաստուն ու հեզ:
 - Ո՛վ իմ մանկութիւն,
 Ո՛վ իմ մանկութիւն...



Ընկա՞ն մի առ մի ասույցների պէս,
 Աննշմար, անտես,
 Կեանքիս երկնքից՝ օրերս բուրեան,
 Ու հետքի վրայ նրանց ածխացած՝
 Թախծում է հոգիս ու հեծկլսում լուռ.
 – Բայց մոխիրները դեռ տաք են, հոգիս,
 Եւ փախչող ու գող՝ ժամանակի, տես,
 Ոտքերն են այրում, ոտքերը՝ բուսիկ,
 Եւ անհունները նրանց փոսփորէ,
 Տե՛ս, յուսաբարում են իմ նամբան մթին,
 Բայց՝ կրկին, կրկին, չըզիտեմ ինչո՞ւ
 Դողում է հոգիս
 Այս ազգամուղջում,
 – Հաւատես է կողում՝
 Կապածի փուշը
 Իր ստում, ստում...



Տեսել եմ, տեսել՝
 Թէ ինչպէս հսկայ արծիւք ծովի,
 Թռելքն է քացել իր հագար ու մի,
 Ուզել է գրկել յուսինը անհաս,
 Եւ փուլ է եկել ինքն իր վրայ՝
 Իմ հագու նման,
 Ո՛հ, հագա՞ր անգամ,
 Բայց եւ անվեհառ՝ փորձել է կրկին
 Կրկինքը գրկել, հասնել աստղերին.
 Եւ հիացել եմ, լացել քերկրանքից
 Ի տես աննուան այդ մեծ խոյանքին
 Ու հաւատիմ խոր,
 Որ կարծես չունեմ,
 Էլ չունեմ այսօր...



Հալած մեռալ է հասում բոցանուտ,
 Այս հիւլէական, տնդաւար դարու
 Ժեռ կարծէքն ի վար,
 Եւ նարճատիւն կայ
 Եւ հուր, ծուխ ու մուր մեր գլխի վերայ:
 Ճեղքում հիւլէն է գառում ու հասում,
 Երակներիդ մէջ մուրցեալ հրկէզ,
 Ու միապագա կազկանձը ջազի

Մզոցում է յար ջղերդ պրկուած
 Ու մրճահարում՝ գանգոց տօթակէզ,
 Կործել են գլխիդ
 Բորք, հրակարմիր մի կաթսայ կարծես:
 Ու դառնում ես դու,
 Գառնում հալի պէս շուրջդ մտազար,
 Պտտում ես դու՝ լեզուդ կախ, ծարաւ,
 Ու մի գլխիվայր կախուած կատուի պէս՝
 Հոգիդ՝ ջղագար, հոգիդ՝ անօթի՝
 Ա՛հ, գար է, գո՛ւր է քախանձում
 Նշոյլ մի սիրոյ, մի նշոյլ գութի:
 Արիւնն է խուժում քո աչքերի մէջ եւ քո ուղեղի,
 Եւ լսում ես դու, սպարտուած յաղթութեամբ,
 Ա՛հ, կարծես արդէն,
 Կեանքիդ խօյրքում այս նկարնօթացի
 Ձայնը ջախջախման հսկայ ժայռի դէմ...



Մենք՝ մենք չենք բնու,
 Մենք՝ օտար ենք մեզ.
 Օ՛, մենք վառում ենք,
 Խամբում, քամում ենք.
 Ծամում ենք, փորում մեր սիրտն ու հոգին,
 Ուզում ենք գտնել, հասկնալ մենք մեզ.
 Ուզում ենք քուքս գալ «Ես»ի նստեցի մեր
 Ու նախքան ազատ՝ վեր, վեր, դէպի վեր,
 Ու երկրպագել վեհին, գեղեցիկին,
 Ձգտել միշտ լոյսին, յղկել մեր հոգին,
 Բաշտտն գնել ուրիշի վերջին,
 Ու սիրել, սիրել, սիրել՝ ամենքին,
 Սակայն՝ բանտապետ մեր «Ես»ին կու՛
 Մտնում ենք կրկին խուցը մեր մարմնի՝ մզոցում
 ու հին՝
 Ուր արիւնախամն բազէն ցանկութեամբ, անզոր
 փորձութեամբ
 Հալածում են յար տատրակը հագու՛
 Մի մաւթ անկիւնում
 Ու քեւարախում...



Մենք չենք հաւատում ինչ որ լսում ենք,
 Ինչ որ՝ տեսնում ենք նայնիսկ մեր աչքով:
 Մենք հեռացել ենք իրարից այնքա՛ն,
 Որ անձանօթներ ենք ասես հիմա,

Տեսնելիս իրար՝ համբայ ենք փոխում,
Մէկ-մէկից փախչում,
Ու՛ մեզնից անգամ...

~

Զենք կարող այլևս մենք հպարտանալ՝
Թէ՛ մենք նուիրուած ընկերն ենք մէկի,
Եւ ոչ էլ ուռենի՛
Որ ունենք ընկեր մի հաւատարիմ.
Բայց՝ ունենք, ունենք,
Թշնամի ունենք մենք հազար ու մի...

~

Զենք տեսնում յամալի մենք լաւն ու գեղը,
Նկատում ենք շուտ
Տգեղն ու գէշը,
Ու միայն, միայն՝ շան նեխած լէշը, -
Զենք տեսնում նրա
Զիւնի պէս ներմակ ատամնաշարը,
Այլ՝ լէշը, լէշը,
Ու անիծելով երկինք ու գետին՝
Մեր քիթը բռնում, անցնում ենք փութով...

~

Դատապարտուած ենք սալայն ապրելու,
Մեռնելու՛ մահու,
Բայց՝ ապրել այսպէ՛ս...
Օ՛ր, սակայն պիտի գիտնանք մահու
Ինչպէս պիտ՝ մեռնել...:

Թե՛հրան

ԱՐՄԱՆՏ

ՍԵՐՈՒ ԵՐԵՑԵԱՆ

ԳՈՒՆ ԳԻՏԵՍ ԱՅԼԵՒՍ...

147-2000

Ամբողջ երկու տարի չէինք տեսնուած իրարու հետ, եւ բնաւ միտքէս ալ չէր անցներ առիթով մը փնտռել այդ հին օրերու Նուարդը եւ հետը ժամանակ անցընել: Վերջապէս, տարբեր ուղղութիւններու ճամբորդներ եղած էինք այլեւս եւ ինչ որ պատահած էր մեր միջեւ ժամանակին, պատմութեան կը վերաբերէր միտքս, ու այդպէս աւելի լաւ էր երկուքիս համար ալ:

Բայց պատահեցաւ, առիթով մը, երբ փողոցէն կը քալէի առանձին, որ դիմացս ելլէ: Անկեղծ ըլլալու համար խոստովանիմ, ե՛ս էի դիմացը ելլողը:

Պապ-Իտրիսի պողոտային վրայ էր: Նրբ նշմարեցի զինք դիմացի մայթը, անձանթ մը թուեցաւ: Ինչպէ՞ս ճանչնայի: Բոլորովին տարբեր մէկն էր: Անցորդները պահ մը նայուածքին կը պարտեցնէին վրան եւ սպա, կը շարունակէին քալել, կարծես ակամայ ու դժկամակութեամբ:

Անցայ իր գտնուած մայթին վրայ: Կարծեմ, պէտք չկայ բացատրելու թէ ինչու: Արդէն, քոյր էրիկ մարդիկը իրարու կը նմանին, ի՛նչ հանգամանքի եւ ի՛նչ տարիքի մէջ ալ գտնուած ըլլան: Սքանչելի է ամէն կիս, որ իրենց չի պատկանիր:

Սակայն, այն պահուն, երբ աչքերս վրան պիտի սեւեռէի, ինծի ամէն ինչ ունայնութիւն թուեցաւ եւ որոշեցի այդ վայրկենական քմահաճոյքէն հրատարել: «Ք վերջոյ», կը փորձէի ինքզինքս համոզել, «ե՛րբ է, ընդամենը սկիւարի մը

պիտի նետեմ վրան եւ յետոյ, պիտի նրկասեմ զինք անկարելի երազ մը եւ ուրիշ ոչինչ»:

Այս մտածումիս մէջն էի, երբ նկատեցի, որ անձանթ թուող աղջիկը Նուարդն է եւ ինծի կը նայի: Չեմ յիշեր, թէ որքան տեւեց այդ պահը: Միայն դիտեմ, այդ ժամանակամիջոցին, ան, շատ բնական շարժումով մը ձախ ձեռքս առաւ: Այնպէս մը բռնեց, այնպէս մը զննեց, կարծես տակուին իրը եղած ըլլար, կորսնցուցած եւ սպա, վերադառած իր մէկ առարկան...:

Ես, որ ոչ մէկ ատեն ստորակայութեան զգացում չեմ ունեցած ամուսնացած ըլլալու համար, այդ պահուն, պիտի ուզէի որ ուրիշ մէկը ըլլամ, այսինչը, այնինչը կամ հինը, որ ոչ մէկ բան ունենայ ձախ ձեռքի մատնեմաւին վրայ...:

- Ո՞ւր կ'երթաս. վերջապէս հարցուց:

- Չեմ գիտեր, պատասխանեցի:

Պարզ ուղղամտութիւն չէր ըրածը: Իսկապէս, չէի գիտեր, թէ ուր կ'երթամ: Հաւանաբար, ձեզի ալ յաճախ կը պատահի նոյն բանը: Կ'ըլլայ որ, ճամբայ մը բռնեմ ու քալեմ աննպատակ, մինչեւ որ զգամ, թէ յոգնած եմ այլեւս:

- Միեւնոյն խենթն ես ուրեմն. խընդաց:

- Խենթերուն ամէնէն անվնասը հասնաբար, փոխադարձեցի:

Ժպտեցաւ ինծի վերաւորակուն: Այդ

1

ժպիտը: Երբեք պիտի չմոռնամ զայն:

- Հետս կու գա՞ս. ըսաւ:

Այս անդամ, հին օրերու Նուարդին ձայնն էր: Զայն մը, որուն այնքան վարձրած էի: Այդ պահուն ինծի այնպէս թուեցաւ, որ ես բոլորովին առանձին եմ, եւ հալածող ու դատապարտող շուք մը չկայ ետեւս:

Գացինք:

Համբայի կողմը տեղ մըն էր: Եթէ չեմ սխալիր, շատ շատ, երկրորդ յարկի մը առջեւ կանգ առինք, որովհետեւ, յատկ կը յիշեմ, շէնքին մէջ վերելակ կար, բայց մենք աստիճաններէն բարձրացանք:

Նուարդ զոտը զարկաւ ուժգին: Այնպէս էին շարժումները, կարծես տան մէկ շփացած անդամը եղած ըլլար:

Գուռը բացողը երիտասարդ մը եղաւ: Թուի ղէմքով, ներմակ ակունքով եւ անուրի պէս սեւ աչքերով երիտասարդ մը, որ սիրալիր ու պահանջուած քաղաքավարութեամբ մեզ ընդունեց:

Ամուրիի մթնոլորտ մը կար. առաջին առթիւ, այս էր աչքի զարնողը: Յետոյ՝ անկիւնի տիւտնը, քովի քապլէթը, որուն վրայ մէկզմեներ դրուած էին: Ուրիշ անկիւն մը, երեք հաս կաշիէ թիկնաթոռներ կային. ուրիշ քապլէթ մը, եւրոպական խմբիչի շիշերով եւ ամերիկեան սիկարէթի տուփերով: Կարծես այս բոլորը չէին բաւեր, չէր մոռցուած նաեւ Թէյի Ռիֆորտըրը, որ կասկածելի մեղմութեամբ այսպէս կոչուած, թեթեւ երաժշտութիւն կ'արտաբերէր:

- Պարոն Հայկ Մանուէլեան. ներկայացուց զիս Նուարդ:

- Ուրախ եմ ծանօթանալուս, ըսաւ ու ձեռքս սեղմեց:

- Պարոն ձեզ... .

- Նմանապէս ուրախ եմ. փոխադարձեցի ես ալ իմ կարգին ժպտելով:

Պարոն ձեզը խկապէս ուրախ էր հետս ծանօթանալուն թէ ոչ, որոշապէս չքմ կրնար ըսել: Ինծի թուեցաւ, պարզ քաղաքավարական արտայայտութիւն մըն էր ըրածը եւ ուրիշ ոչինչ: Յամենայն

զէպս, ասիկա իմ անմիջական տպաւորութիւնս էր: Գալով ինծի, անվարան կրնամ յայտնել, բառին իսկական առումով տխուր էի. ինչպէս կ'ըսեն, մահուան չափ տխուր, երբ ես ալ իմ կարգին պատասխանեցի, թէ նմանապէս ուրախ եմ: Վերջապէս, ուրախանալիք բան մը չէի գտնիր: Ընդհակառակն. սիրտս սկսաւ նշուել եւ անծանօթ վիշտ մը համակեց զիս:

Սակայն, խօսակցութեան ընթացքին, սկսայ համակրել ձեզին: Նախապէս, գրեթէ համոզուած էի, թէ կ'ատեմ զինք: Կամաց կամաց, տեղի տուաւ զդացումս: Սքանչելի ժպիտ մը ունէր: Սանկ, թիկնաթոռին մէջ օրօրուած ատեն, Բալսէլի գաւաթը բերնին տարած պահուն, այնպէս մը կը նայէր Նուարդին, կարծես մտքին մէջ թակոթին մէկ բանաստեղծութիւնը կ'արտասանէր...:

Կարծեմ, անհրաժեշտ է որ յայտնեմ, թէ ձեզ հնդիկ մըն էր: Եր Իմտիպ մէջ պաշտօնեայ, Հակառակ իր արեւմտեան նիստ ու կացին, կը զգայի որ, ինծի հարազատ բան մը կայ վրան: Թե՛րեւս ասիկա կու գար հնդկական միաբնակից սիրելիս: Բուն փափագ մը ունեցայ հետը խօսելու Եօկայի, Կանտիի եւ այլ բաներու մասին. բայց կը թուէր, ասոնք նշանակութիւն չունէին այդ պահուն: Կը խմէր, կը ծխէր եւ Նուարդը կը դիտէր:

- Նու, ըսաւ ձեզ Նուարդին. կը հանի՞ս քիչ մը պատուհանը բանալ, ամբողջ սեննակը ծուխի մէջ է... .

Նուարդ գնաց պատուհանը բանալու:

Հետուոր Արեւելքէն հնդիկ աղայ մը եւ Միջերկրականի փեթերէն հայ աղջիկ մը իրարու հանդիպած էին Պէյրութի մէջ եւ իրարու կ'այցելէին: Ասիկա այնքան շփոթեցուց զիս, որքան Նուարդին Նու կոչուելը:

Նու, Նուարդէն դեղեցի՞կ կը հընչէր արդեօք: Մարդ որքա՞ն սխալական կրնայ ըլլալ յաճախ. ժամանակին, պահեր կ'ունենայի եւ կը թուէր թէ աղ-

Ղիկ մը Նուարդ պէտք է կտուի հմայիչ ըլլալու համար:

- Նո՛ւ. ըսի բարձրաձայն եւ ակամայ ժպտեցայ դառնօրէն:

Նուարդ կարծես զգաց ժտածումս.

- Գիտե՞ս, պարոն Մանուէլեանք ասուանացած է. յայտնեց:

Մինչ այդ, ե՛ս իսկ չէի անդրադարձած, թէ պահած եմ մտի ձեռքս եւ ոչ մէկ շարժում կ'ընեմ անով:

- Իրա՛ւ. հարցուց ձէք. այնպիսի չէլտով մը. կարծես շքանշանի նման բան մը ըլլար ամուսնութիւնը:

- Երկու տարիներէ ի վեր. անկցուցի, Նուարդին աչքերուն մէջ նայելով:

- Ուրախ եմ, շատ ուրախ. փայլեցան ձէքին աչքերը: Յետոյ, անկցուց:

- Չուակ օւնի՞ս:

- Տղայ մը, Վիզէն անունով. մտաւորապէս մէկ պարեկան է. մանրամասնեցի:

- Ես շատ կը ցաւիմ այս քաղաքի մանուկներուն վրայ. շարունակեց. Պէյբրութը խեղդուած քաղաք մըն է. երբեք չեն մտածած նոր սերունդին մասին. կանայստքի չկայ, հանրային պարտեղներ չկան. մինչդեռ, ուրիշ քաղաքներու մէջ...:

Օ՛, ի՞նչ սարսափելի է շատ բան դիտելու, շատ քաղաքներ պտտելու: Մինչ այդ, չէի գիտեր, թէ Պէյբրութի մանուկներուն վիճակը որքերդական է: Ո՞րք Վիզէն, զժքախտ Վիզէնս. ուրիշ քաղաքներու մանուկներուն պէս ընդարձակ պոզոտաներով թաղերու մէջ պիտի չկարենայ բնակիլ. հանրային պարտէզներու մէջ պիտի չկարենայ հաճոյանալ: Լիրաններ, որ իրաւամբ կը հպարտանայ իր բնական գեղեցկութիւններով, մայրիկ պատմական ծառերով եւ անդի-մադրելի անտառներով, ինչո՞ւ այդքան «ծլատ» գտնուած է իր մայրաքաղաքի մանուկներուն հանդէպ...: Որո՞ւ պէտք է բողոքել, որո՞ւ պաղատիլ այս մեծ աղէտին համար...: Անգութ ձէք, անսիրտ, թուփ տղայ. դուն, որ մտքիդ մէջ Թակոր կրնայիր արատանել, հրպարտութեամբ հայրենիքիդ վխբխիզ-

մին մասին խօսիլ, ինչո՞ւ գէշ բաներ ըսիր, սիրա վիրաւորող ճշմարտութիւններ յայտնեցիր:

Անշուշտ, ինչպէս հակառակը գար-մանալի պիտի ըլլար, ես հեղկերէն չեմ գիտեր. կը խօսէիք ուրիշ լեզու. մը. Անգլիացիներու լեզուն:

Առաջին անգամն էր որ բոլորովին օտարի մը հետ կը խօսէի անգլերէն եւ տաղիքն անգամն էր մանաւանդ, ախսէի խմելու ժամանակ կը խօսէի Շէյքսպիրի այդ գեղեցիկ լեզուն: Ինծի այնպէս կու գար, շատ սահուն ասուցանութիւն մը ունէի եւ հայերէնին պէս համարձակ էի խօսակցութեանս մէջ: Այս երեսոյթը կը վերագրէի ոչ թէ կարողութեանս, որ խոստովանիմ, այնքան ալ նախանձելի չէ, այլ այն խմիչքին, որուն մէջ անգլիական իկարազիր կայ անկասկած...:

Մինչ այս բոլոր պատահած զէպքերը, անկիւնի Թէլի Ռիքորաքը-ը քանի մը անգամ սպառեցաւ ու քանի մը անգամ նորոգուեցաւ: Ընդդ այն ասան, երբ լուծութիւն տրեց, եւ ես մտքիս մէջ խօսակցութեան նիւթ կը պատրաստէի, ձէք եւ Նուարդ ելան պարելու:

- Շատ կը ցաւիմ, որ ուրիշ աղջիկ չկայ. ըսա՛ւ ձէք, պարը վերջացնելէ ետք:

- Գիշ մըն ալ քեզի հետ պարեմ. առաջարկեց ինծի Նուարդ:

- Մէջքս լաւ բռնէ, թող նախանձի. փոխաց ականջիս, երբ կը պարէիք:

Հիմա, լաւ չեմ յիշեր, մէջքը սեղ-մեցի՞ թէ ոչ: Յամենայն դէպս, եթէ նոյնիսկ հնազանդեցայ, չեմ կարծեր որ խեղճ ձէքին նախանձը շարժելու համար եղած ըլլար:

Երբ սթափեցայ՝

- Նա՛ւ, ըսի, Նա՛ւ, դուն խենթ ես...

Նուարդ խնդաց: Այդքան բարձր ու այդքան անտարբեր խնդուք չեմ տեսած սեւ աղջկայ մօտ:

Երբ նստայ, որոշած էի մեկնիլ: Եռք մը սկսած էր հետապնդել զիս, յարչարել, դատապարտել: Արդեօք ամէ՞ն ամուսնացած մարդ հողեկան տրւայտանք կ'ունենայ արգիւտած հաճոյք-

ներու ընթացքին: Ընչո՞ւ եկայ, ինչո՞ւ յիմար գտնուեցայ, կ'ըսէի ինքզինքիս: Այնպէս թուեցաւ, թէ տեղ մը եկած եմ, ուր կրնայի չգալ: Կաշիէ թիկնաթոռի մը հրաւիրուեցայ, ուր պէտք չէր նստիլ...:

- Ո՞ւր պիտի երթաս. հարցուց ձէք:
- Պարելու համար մէկ աղջիկը քիչ է երկուքիս. ըսի, ու գուրս նետուեցայ: Բազաբապետարանի շրջերը վառած էին, երբ սրճարան մտայ: Զարմանքով նկատեցի, որ այն սրճարանն եմ, ուր սովոր էի նստիլ Նուարդին հետ: Դիտեցի շուրջը. ծանօթ յաճախորդներ չէին մընացած գրեթէ, բայց կեանքը նոյնը կը թուէր: Երկու տարի բացակայած էի այս տեղէն: Երկու տարի երկրագունդը դարձած էր ինչն իր վրայ առանց բան մը փոխելու:

- Կը սիրեմ...
- Վերջը ի՞նչ պիտի ըլլայ...
- Անունդ գեղեցիկ է...
- Վաղը նորէն եկուք...

Խօսքեր, խօսքեր, խօսքեր: Այսպէ՞ս էի ես. այսպէ՞ս են ասոնք, այսպէ՞ս պիտի ըլլայ Վիգէնս, իմ խեղճ Վիգէնս...:

Երբ գլուխս վերցուցի, տեսայ որ Նուարդը ինձի կը մօտենայ: Ընթացիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, այս պատմութիւնը զարգացնելու համար երեւակայութեամբ չքերի զինք հոս: Ինչ էր սեփական ոտքերովը եկաւ, հին ժպիտովը. հին քայտուածքովը: Վերջապէս, սրճարան մըն էի, ուր յաճախ եկած էր եւ թերեւս ալ, կը շարունակէր դալ:

- Հետուէն քեզ տեսայ, ըսի, հանգիստիմ. բացատրեց:

Դիտեցի զինք. շրթներուն նոր կար-

միր քսած էր եւ աչքերուն մէջ գինովութիւն մը կար:

- Կը սիրե՞ս այդ տղան, վերջապէս հարցուցի, խուսափելով ձէքին անունը տալէ:

- Դուն գիտե՞ս այլեւս, թէ ես սիրոյ չեմ հաւատար...

- Բայց ես քեզի նախապէս ըսած էի, թէ պարզ բարեկամութիւն մըն էր մերինը. տեղեակ էիր որ սիրածս Հալէպ կը գտնուէր...

- Սակայն Հալէպը հետու էր եւ կը կարծէի, թէ սկսած ես մտնալ գայն...

- Ի՞նչ իրաւունքով այդպէս կը կարծէիր:

- Զիս թեւերուդ մէջ առած պահուն, աչքերդ կը դոցէիր, կը դողայիր եւ աղուոր խօսքեր կ'արտասանէիր...

Ճ

Մի կարծէք թէ Հպարտութեամբ լեցուած ըլլալու համար է որ այսքան բծախնդիր մանրամասնութեամբ կը պատմեմ այս բոլորը: Արդէն, սկսելէ առաջ, կը վախնայի սխալ հասկացուելէ:

Այն օրէն ի վեր, երբ Նուարդին կողմէ հրաւիրուեցայ, երբ ձէքին սենեակը այցելեցի եւ ուիքի խմեցի, ա՛նօրինակ զրացում մը կայ մէջս: Յանցապարտութեան զրացում մը:

Հաւանաբար, հոգիս չկարենայ հանդարտութիւն գտնել, մինչեւ որ մարդկային թերի օրինադիրքը չտրբադրուի եւ օր մը չկանչէ դիս դատարան ու չդատարտէ, պատժական այսինչ յօդուածին համաձայն, կանխամտածուած ոճիրով Նուարդ անունով աղջկայ մը զրացումը մեռցուցած ըլլալու համար:

Ս. Ծ.

Ե Ր Կ Ի Ի Ղ

Ա՛հ, կը վախճամ որ նրագին ցօղը կը հառնի,
Եւ չեմ կրնար վերջացնել մատեանն այս մուշ,
Ուր կան էշեր սոկեմանն, էշեր կապոյտ,
Եւ քոչուններ անծայրածիր հորիզոնի:

Նրազը դեռ չբացուած վարդ մ'է գարունի,
Հարստին շունչը կտրեցաւ, կային անտուտ
Քարեր՝ որոնք յղկուեցան, ուր հասանուտ
Կշռոյթին մէջ երգի մը սիրտը կ'արիւնի:

Բայց մինչեւ իսկ, եթէ փակուի դուռը, քերուս
Ապարանքէն կանչենն ձայներ, արձագանգեն
Լոյսին գաղտնի մըմըրուած հին ազօրներս,

Եւ ես դառնամ հոն՝ ուր էի զերդ սերմնացան,
Որ կապեց օր մը լըռութեան սուրբ մուտքէն
Ոսկի որայ մը հասկերովն իր ծիածան...

ԱՐՄԷՆ ՆՐԿԱԹ

ՍԻՐՏԸ՝

ՈՐ ԿԸ ՄԵՐԺԷ

ԾԵՐԱՆԱԿ . . .

Գրեց՝

ՇԱՀԱՆՊՈՒՆՑ

Բերքաբաղէն ետք ծառի մը ճիւղին մէկ ծալքին, մոռցուած հասուն պտուղ մը նշմարած էք անշուշտ, կոչահարուած, արևուզ եփուած, հասունութեան ամբողջական համով, որ կուրծք կու տայ հովերու հարուածներուն: Տեսած էք անոնց կծկուած մինակութիւնը, բայց ըզզացած էք անոնց յոյսին յամառութիւնը, նուաբաղի սպասումով...

Առանձնութիւնը չէր որ միայն զինք կը դառնացնէր, այլ նաեւ Հոսող տարբերին տրտում ճշմարտութիւնը, որուն թէև բնական երևույթ մը ըլլալուն համոզուած էր, սակայն երբեք չէր ներքայդ բնականութիւնը ստեղծողին:

Կանուխէն որբացած մըն էր: Մնացած էր մինակ, միս մինակ: Պղտիկ սենեակի մը մէջ, ուր կը ծնէին տխուր տնտիւքներ ու մաշող մաթառումներ: Երբեմն յոռետեսութիւնը կը հեռանար ու ինքզինք կը գտնէր երազին գիրկը, որ կը հիւսուէր ու կը հիւսուէր, կ'ըլլար հեքիաթ մը հմայիչ:

«Բայց ինչո՞ւ կանուխ մեռած են ծնողքս: Ինչո՞ւ մինակ գոյութիւն մըն եմ ես, ինչո՞ւ ոչ ոք կը փնտռէ զիս»: Այս մտածումները կը շղթայէին իր ուղեղը ու զայն կը սեղմէին կարծր կապանքով:

Աշխատանքէն վերադարձին, իր ամառի խուցը գամբարանային զրոշմ անէր կարծես, որմէ կը սոսկար: Սակայն երբեմն կը վանէր սեւ միտքերը եւ կ'ապրէր գեղեցիկին աննշանքով: Կը տենչար կարելին, որ միշտ այլ անկարելի կը մընար: Կը զգար թէ իր նախկին թարմութիւնը կը թթուէր: Հայելիին բարեկամութիւնը կը խզուէր եւ հեղձանքի առարկայ կը դարձնէր զինք:

Առաւօտ մըն էր, երբ իր քարեկամ հայելին իրեն ցոյց տուաւ մազի առաջին սպիտակ թելը եւ կնճիտի կարճ գիծ մը՝ ճակատի կեղբորին:

«Բանի՞ տարեկան եզայ՝ մտածեց յանկարծ ինքնիրեն, արդէն իսկ պարտաւճ եմ: Քառասունին հասա՞յ՛ք «Այո» պատասխանեց ձայն մը իր սրտին խորէն, «ոչ» ըսին շրթները, «այո» հաստատեց հայելին... ու Մանիշակ ափերով ծածկեց զէմքը:

Հրաշք պահու մը սպասումով երկար տատապեցաւ: Հեռաւոր ովկէանոսի մը ափին շինուած նաւահանգիստ մըն

էր կարծես, ուր ոչ մէկ նաւ ալցի կու գար... Բայց իր հոգին որքան հիւրընկալ էր եւ իր բաղակները որքան բաց էին, գրկելու համար հիւրերը յապաղած:

Միշտ կը յիշէր քարացնող գրառատները: Բայց ինչո՞ւ այդ անապարանքը տարիներու, ինչո՞ւ փութկոտութիւնը կեանքին, երբ ինք դեռ չէր ապրած դիւթանքը քան տարիքին, չէր վայելած խանդաղատանքը երեսունին, եւ չէր ճաշակած հասունութիւնը քառասունին: Հրամանաւոր առնել բոլորէն, այդ անցած բոլորէն, լոյս չհամբուրած բոլորէն ու մահանալ, երբ արիւն կար էութեան մէջ, երբ շունչ կար հոգիին մէջ:

Մտորումներու ալիքը կը տարուբերէր զինք, երբ քաղուեցաւ իր մենաոր խուցին դուռը: Բարեկամուհի մըն էր: Մտերիմին մուտքը թեթեւցոյ տրամադրութիւններուն ծանրութիւնը, մանաւանդ որ եկողը կատակի աղջիկն էր, եւ զիտէր համը միտիթարանքի խօսքերուն քաղցրութեան:

- Ձայնասփիւռը քովդ է, Հայկական ժամն է, իսկ դուն... Քիչ մը ժպտէ: Կը կարծես թէ ես քեզմէ շատ աւելի ուրախ մէկն եմ: Ա՛լ չափը կ'անցընես:

Կէս-կատակ, կէս-չիտակ խօսքեր փոխեց Մանիշակի սրտին սեւութիւնը իսկ Հայկական երաժշտութիւնը երազի նոր ալիք մը բերաւ մութ սենեակին մէջ, - Միծեռնակ...:

- Շատ կը սիրեմ այս երգը - ըսաւ Մանիշակ վերջապէս բերանը բանալով - Հայաստանցիներն ալ երգելուն համը կը հանեն: Ի՞նչ անուշ կ'երգեն, ի՞նչ ալ աղուոր ձայն ունին:

Մինչ «Միծեռնակ»ը կը թռէր ու կը հասնէր Աշտարակ, Մանիշակ զայն կը վերազարձնէր ու թափառակիսն թեւտուրը բոյն կը շինէր աղջկան սրտին մէջ...

- Ժամանակին ես ալ երգած եմ այս երգը: Հիմա ոչ երգչախումբ մնաց ոչ ալ երգելու սիրտ: Արդէն ձայնս ալ մարած է: Անցեալ օր խոհանոցին մէջ երգ մը երգեմ ըսի, կոկորդոս քերուեցաւ ու ձայնս մարեցաւ: Ան ալ թշնամացաւ ին-

ծի: Բոլորը, բոլորը, այս ի՞նչ չար բախտ...:

Մանիշակ թաղուեցաւ լուսնի շատ խորունկ մէկ խաւին մէջ: Թեքեալ յուշերու սողանցք մը կար այնտեղ: Յո՞ւշ, արդեօք ի՞նչ տեսակ յուշեր էին Մանիշակինը: Միրային արկածային դրութիւն մը, տղու մը համբո՞յրը, խոստումնադրութ՞ սիրակա՞ն մը, մերժուած սէ՞ր մը...:

Ձայնասփիւռը կը շարունակէր ըսպառել իր «շունչը»:

«Միծեռնակ Մարիք»...

- Այս երգն ալ նոր էլաւ: Չեմ գիտեր բայց շատ կը սիրեմ: Տխուր բան մը կայ մէջը: Շատ կը խօսի սրտին:

- Յաջորդ երգը քու բախտիդ Մանիշակ, նայինք ինչ պիտի երգուի:

Մանիշակ նստուածքին ձեւը փոխեց, կարճ կարուած մազերը ափերով յարգարեց ու սպասեց գեղեցիկին ակնկալութեամբ:

«Մոռանա՛լ, Մոռանա՛լ»: Տէրեանի սրտում բանաստեղծութիւնը հնչեց Պատանիների յուզող ձայնով: Մանիշակ արմատանալու, աչքերը չնայան ու յուսահատութիւն նայեցաւ ձայնասփիւռին, միտքին կրկնելով, «Մոռանա՛լ, մոռանա՛լ»... Բայց ի՞նչը մոռնար, ի՞նչպէս մոռնար, երա՞զը, յո՞յրը, կարո՞տը, տենչա՞նքը, սէ՞րը:

«Ձայնիւ, յաննայ, չկանչել, հեռանալ»: Վերջին բառէն ետք լուսնի շարունակուեցաւ որպէս տրամօրօր մեղեդի:

- Այսօր շատ մեղամաղձոտ կ'երեւիս, ըսաւ հիւր-բարեկամուհին: Տէրեանին ըսածին համար պէտք չկայ տխրելու: Այո՛, մոռանալ: Ծիշող ըսեր է մարդը: Մոռցի՛ր բոլորն ալ, լա՛ւն ալ, շա՛րն ալ, քանի որ անոնք քեզ մոռցած են, դուն ալ մոռցի՛ր զանոնք: Իմացաւ զնայց: Քիչ մը խենթ եղիք, ինծի պէս, կեանքը թեթեւ առ, եղածը ինչ է որ, մենք ալ պիտի մեռնինք, դո՞նէ խնդալով մեռնինք: Ու կարճ գաղարէ մը ետք աչքը յարեց:

- Այսօր քու փալիւզ պիտի նայիմ, ստիկա նոր խաղ մըն է, ես ալ նոր սոր-

վեցայ, Վիշաբ մոռնալու լաւագոյն միջոցը փալն է: Տէրեանին ալ խօսքը մը տիկ ըրած կ'ըլլանք: Բայց պիտի հաւատաս ըսածներու: Ելի՛ր, խաղաքարտերը բեր:

Մանիշակ բերու խաղաքարտերը, որոնք բարեկամուհիին մատներուն մէջ պիտի «մարգարէանային»:

- Երեք շաբաթ, երեք օր, կամ երեք ժամ: Աղուոր բախտ մը կայ քեզի: Դուն անակնկալի պիտի գաս, բայց իրականութիւն պիտի ըլլայ:

Մանիշակ թերահաւատութեամբ կը հետեւէր Փալիմ, իսկ բարեկամուհիին առակել «ներշնչուած» կը շարունակէր:

- Մի զորմանար եթէ ըսեմ, թէ երկու թեկնածու սենիս, մէկը թուի, մէկը խարտեաշ: Բախտը խարտեաշ պիտի ըլլայ:

Մանիշակին տրամադրութիւնը պայծառացաւ: Ուրեմն ինքն ալ առարկայ պիտի զառնար մըցանքի, զինք ալ պիտի ճանչնան եւ իրեն համար զօհողութիւններ պիտի ըլլան: Փնտռուած ըլլալու դերագոյն երջանկութիւնը զգաց: Ուրեմն ինք լքուած մէկը չէր: Բախտը պիտի ծպտէր իրեն եւս: Այդ բուպէին Մա-

նիշակի դէմքին նայողը դիւրութեամբ պիտի կարգար անոր հոգիին ճառագայթումը, անոր աչքերուն արասսովոր փայլը: Կարծես կ'ապրէր դեռատի աղջկայ մը երջանկութիւնը, որովհետեւ ինք ալ ունէր հոգիին խորը չբացուած ծալք մը, չքրքրուած խաւ մը, ուր անկասկած կ'ապրէր տաք գոյութիւն մը: Ի՞նչ փոյթ թէ պարանոցը պարպուած ըլլար իր «հիւթ»էն, ի՞նչ փոյթ թէ խորշոմները խտանային աչքերուն շուրջ, եւ ի՞նչ փոյթ թէ բիրբերուն փայլը չունենար հին հրգեհումը, բայց կար իր սիրտը, ազնկան շմաշած սիրտը, չթառամող սիրտը, որ կը մնար անխաթար, օր մը զայն բանալու յոյսով սպասուած էակին: Սիրտը պիտի պաշտպանէր զինք, թէեւ ուշ, բայց այնքա՛ն անուշ պսակումով: Այդ կը թելադրէին բարեկամուհիին Փալիմ «մարգարէութիւնները»: Վերջապէս ինքն ալ պիտի պարծենար իր կանացիութեամբ, որովհետեւ զի ու չէր թօշնած հինէն դրոշմուած կանացի կնիքը՝ հրապոյրը, հոգ չէ թէ աղօտ, հեռուէն լսողը երգի մը արձայանգին չափ: Դալիքին յոյսը լուսաւորեց Մանիշակի խաւար խուցը, եւ զինք բարձրացուց երանութեան կապոյտ երկինքը...:



ՍՄԲԱՏ ԵԱՆՆԱԶԱՐԵԱՆ

ԲԱՐԵՀԱՄ ԱՂԲԻԻՐԸ

Վանքէն քիչ հետու, ծաղկաւէա բը-
լուրի մը կողքէն կը բխէր ան, անուշ հե-
րագի մը մեղմութեամբ:

Երբ իր ջուրերը՝ մթին խորութիւն-
ներէն դուրս աշխարհ կու գային, եւ ա-
րեւը անոնց թաւշեայ այտերը քնջօրէն
կը շոյէր, թեթեւ ժպիտ մը կը ծաղկէր
անոնց վրայ, որ, սպա, լայննալով ու
խորանալով, կը վերածուէր զուարթ ծի-
ծաղի մը:

Անշուք եւ կուսական աղբիւր մըն էր
ան, որուն մէջ, արեւածագը իր տառփին
զոյններն ու երազները կը սիրէր թափել
ամէն առաւօտ:

Դէպի դարձար հոտոզ ջուրին կանա-
չազարդ եզերքները՝ զեփիւտին հետ կը
սիրուէին շարունակ եւ, մելանուշ
սըւարտցներով, երազական հովուերգու-
թիւններ կը յօրինէին:

Միջոցին մէջ կանգնած զմբէթները՝
խնկարոյր նայուածքով մը անոնց շարա-
ճըճի խաղերը կը ղիտէին, եւ ազրիւրին
զուարթ կարկաչէն անոնց պաղ առանձ-
նութիւնը կը տաքնար:

Անոնք կը նմանէին եպիսկոպոսնե-
րու՝ սրունք, կանգնած զմայլելի եւ բու-
րումնաւէտ համայնապատկերի մը առ-
ջեւ, կ'ըմբռնէին թէեւ լիովին անոր
կախարդական գեղեցկութիւնը, սակայն,
ոտզմոտաշունչ անզբաղարձումով մը, կը
նկատէին զայն պարզապէս, որպէս զգա-
յարանական թոյլ ու մեղուոր զեղում,
ըսելով իւրովի, որ այս զեզեցիկ արեւ-
ւաշող աշխարհը ուրիշ բան չէ, եթէ ոչ,
ծաղրանկարը միւս աշխարհին:

Սե սակայն, հակառակ այս խառա-
բարոյ եւ անարդար դատակնիքին, աղ-
բիւրը կը շարունակէր կարկաչել: Զե-
փիւտը խոտերուն ու ծաղիկներուն հետ
խելախորէն կը համբուրուէր: Թռչուն-
ները՝ ծառերուն եւ անոնց երերուն ըստ-
ուերներուն մէջ կը թռչկոտէին: Ամպե-
րը՝ կարապներու պէս, լուացուած կա-
պոյտին մէջ կը լողային: Լեռները՝ հե-
թանոսական մերկութեամբ, արեւին
տակ կանգնած՝ լողանք կ'առնէին: Պու-
րակները՝ անըջային երազանքի մէջ խո-
րասոյժ՝ մելանուշ երգեր կը յօրինէին:
Մշակները՝ արեւախանձ արտերուն մէջ,
իրենց կարմրածեռ սիրուհիները կը համ-
բուրէին:



Վանքին ինը վարդապետներէն՝ Ծե-
բունապարդ Եղիշէն էր միայն, որ հոգ
կը տանէր այդ աղբիւրին: Հողեկան ան-
խըզէի կապով մըն էր կապուած անոր
հետ: Իրեն միայն ծանօթ էր այդ կա-
պը: Ուրիշ ո'չ ոքի:



Պատանեկութեան իր տարիքին էր,
եւ Վարդապետի ուխտին, երբ իր սիրած
աղջկան հետ, աղբիւրին քարերուն վը-
րայ նստած՝ առաջին համբոյրը կու տա-
յին իրարու եւ երազներ կը հիւսէին:
Իրենց տաք գիրկընդխառնումներու
միջոցին, անծանօթ եւ խելազար դըն-
դակ մը վերջ կու տայ անմեղ աղջկան

կեանքին: Անոր գիտկին տալեւ կ'երգ-
նու, որ այդ համբոյրը պիտի չկրկնուի
երբեք ուրիշի մը չըթնեբուն վրայ, եւ
ինչ պիտի հրատարի աշխարհէն եւ նուիր-
ուի վանքին:

Երբ վարդապետ ձեռնադրուեցաւ, եւ
սեւ փիւրնը անոր հապուցին, զգաց մէ-
կէն որ իր արեւը մտեր էր, եւ իր կեան-
քը՝ սպաւորի մը կեանքը պիտի ըլլար
ընդմիջտ, միթաբարութիւն փնտուելով
միայն աղբիւրին ճիւղոցներուն, եւ մե-
նաստանին անհուն լուսութեան մէջ:

Ամէն անգամ որ աղբիւր կ'այցե-
լէր, անթառամ ծաղիկներու եւ զինար-
փի բարակ բոյրին հետ խառնուած կը
զգար, ուրիշ բոյր: Յիշատակներու ա-
նու բոյրը:

Աղբիւրը կը շնչէր: Ջուրերը կը ժրպ-
տէին իրեն անհուն գորովով, եւ անոր
ականջին կը փոստային այնպէս՝ ինչպէս
իր աւազին համբոյրին մէջէն լսուող
կցկտուր ու սիրազեղ ձայները: Ու իր
հոգիին ստույցը կը հայէր անոնց հպու-
մէն, եւ իր սեւաւոր գոյութիւնը կը լու-
սազոհակուէր անմեկնելի յոյզերով:

Երիչ վարդապետը՝ ճերմակ նար-
տուաբարերով եզերուած փոքրիկ աւազան
մը շինէր էր ակին շուրջ, ուր, ջուրերը
կը կարկաշէին սիրազեղ բառերու պէս,
եւ ուր, արեւը կը ցոլցար անոր վճիտ
ու անարատ նայուածքին պէս:

- «Անմահութիւնը անտարակուսելի
իրողութիւն մըն է» - կը մտածէր ան:
«Իրողութիւն մըն է նաեւ այն, որ հոգին
կը կորսնցնէ իր մարդկային ձեւն ու կեր-
պարանքը, եւ հոսանուտ գոյացութեան
մը պէս կը տարածուի ու կը թափանցէ
բնութեան բոլոր երեւոյթներուն մէջ»:

Երբ աղբիւրին քովը կը նստէր եւ
անոր զուլալ ջուրերուն մէջ կը նայէր,
հոն կը թուէր տեսնել՝ հեղուկ գո-
յութիւնը իր սիրածին - Բարնիսաւ-ին,
որ կը հոսէր լուսեղէն մտածումի մը
ծիածանազոյն շողերու պէս: Կը ճառա-
գայթէր ազամանդեայ աչքի մը կախար-
դական ժպիտին պէս, եւ կը հեւար սի-
րարորք արտի մը շնչահատ համբոյրին
պէս:

Հոն կը նստէր, ժամե՛ր, ժամեր, եւ
իր նայուածքը կը փոէր անհուն գորո-
վով, կատարներով ցցուն իր հայրենի
աշխարհին վրայ:

Տարօրինակ գոյացութիւն մըն է հո-
գին: Ունի անսահման կարողութիւններ:
Կրնայ մտնել մարդկային Հիւսուածքին
մէջ, եւ մտածել, շարժիլ ու խօսիլ: Կըր-
նայ իջնել գեանին խորութիւններուն մէջ
եւ գուրս գալ անկէ՝ որպէս զուլալ ու
ականակիտ աղբիւր: Կրնայ կերպարա-
նափոխուիլ բարձրաթիւլ արծիւներու,
կապոյտին ջուրերէն ըմպելու համար:
Կրնայ վերածուիլ հրեղէն ներկերու՝ ա-
րեւածագերու բոցերը գունաւորելու հա-
մար, եւ կրնայ լեցնել անհունութիւնը՝
ակնազարդ գիշերներ ստեղծելու համար:

Ինչո՞ւ ուրեմն սգալ: Ինչո՞ւ մորմո-
քիլ: Ամենուր է ան: Ամէն երեւոյթի մէ-
ջէն թեղի կը նայի: Կը խօսի թեղի հետ՝
զանազան լեզուներով: Թուշուներու թըր-
թըռուէն երգերով: Կանանչին զովաշունչ
ծփանքով: Մանիակներու անօթխած
նայուածքներով: Սիրազառ վարդին ցո-
ղաթուրմ ալտերով: Մեղրագետին զան-
դազաւարժ ու պղտոր դնաքով: Փըր-
փուր ամպերու մերկամարմին լրգանքո-
վը: Սուրբ Կարապետի գանգերուն խո-
րախորհուրդ զօղանջներով:

- Հոգ տար այդ աղբիւրին - կը
մրմնջէր ան ինքնիրեն: Չէ՞ որ անով
է որ կը լուսաւորուի սեւաւոր գոյու-
թիւնը»:

Կարժէ՛ այս աշխարհին համար աշ-
խատիլ: Բան մը կերտել: Տոկուն, մնա-
յուն բան մը՝ անոր կրանիթեայ լեռնե-
րէն: Հետեւի՛նք անոր օրինակին: Ուժե-
րու եւ զօրութիւններու կարճացած այդ
մեծ դունդին կենցաղին, որ կը դառնայ
ու կը դառնայ, գիշերներով ու ցերեկ-
ներով՝ իր գոյութիւնը գեղեցկացնելու:
Ժածքերով ու մրրիկներով՝ դիւցազներ-
գութիւններ յօրինելու: Հրարուխներով
ու հեղեղներով՝ իր ներքին խոտվքը ար-
տայայտելու: Կոյս անտաններով իր կո-
ղերը զարգարելու: Յարաւարժ ովկիան-
ներով՝ իր համայնապատկերը գեղազար-
դելու:



Ու վարդապետը, ասկէ, անկէ, Գար- տուճարնը կը բերէր եւ աղբիւրը կը գեղեցկացնէր:

Ամէն առաւօտ եւ ամէն երեկոյ, ժամերգութենէն ետքը, Հոն կու գար ան ծանրաքայլ ու խոհուն, եւ անգիտակցաբար թօթուելով իր փիլոնը խոնկին ու մաղաղաթնիկուն բոյրերէն, կը մտնար աղբիւրին: Կը նայէր անոր: Ափ մը ջուր կ'ըմպէր, եւ անխելի ձայնով մը կը մրմնջէր.

- Բարեհամ աղբիւր...

Բարութիւնն ալ ունի իր բազմապիսի շնորհները: Կրնայ ջուրի վերածուիլ եւ ծարաւներ յաղեցնել: Քրտինքի վերածուիլ՝ եւ աշխատանք պտղաւորել: Ծաղիկներու վերածուիլ՝ եւ նեկտար մատակարարել:

Կրնայ դառնալ արեւ, եւ կեանք պարգեւել: Մտածում՝ ճառագայթել: Երևակայութիւն՝ սլանալ: Աղայանք՝ գթալ: Աղօթք՝ ունկնդրել:

Կը նայէր, երազանքով, մրմնջող ջուրերուն: Հոն շարժուող հրեղէն գիծերուն... կանացի մերկութեան... Հրայրքոտ ծփանքին, եւ աչքերը քնազդարար կը բարձրանային գէպի գմբէթները, որոնք, յափշտակութեան մէջ քարայցած՝ իրեն կը նայէին:

Թեթևօրէն կը ժպտէր, եւ կը զգար խորապէս, որ գեղեցկութիւնն է Տիեզերքի իշխանութիւն, եւ անոր շնորհ- ներովն է, որ կը նկարագրողուի ան իր բազմապիսի երեսներովը, իր անթառամ գոյններովն ու երանդներովը, իր մշտավառ յոյզերովն ու զրգիւններովը՝ երբ ան՝ իր քայլերը դէպի վանքը կ'ուղղէր, կը մտածէր ժպտազին, որ, այժմ, զըմբէթները, իր բացակայութեան, աւելի համարձակութեամբ կ'ըմբռնէին տեսարանին գեղեցկութիւնը, եւ կը տաք- նային՝ աղբիւրին ճառագայթած ջերմութեամբը:

Գիտե՞ն թէ, որքա՞ն կը զողան ասոնք իրենց դիրքին բարձրութենէն, եւ մենակեցութեան ցուրտէն:



Երբ իր խուցը կը վերադառնար, անկիւնը գետնողուած սեղանի մը առջեւ կը նստէր, եւ մոմի լոյսին տակ, Թանձր տետրակի մը մէջ կը սկսէր գրի առնել իր ամէնօրեայ պատահարներու թելադրած մտքերը:

Աղբիւրն էր կեդրոնակէտը անոնց: Անոր ծիծաղկոտ կարկաչը կը շարունակէր լսուիլ իր խոնաւ ու բորբոսած խուցին մէջ, սւր ժամազիբքն ու սաղմոսը, նրբեմն իրենց տեղերը անհանգստօրէն կը շարժուէին, եւ կը թուէր տեսնել ասոնց կողերուն վրայ՝ մէկ-մէկ խոժոռ աչք, որոնք շեշտակի իրեն կը նայէին սպաննագին:

Ի՞նչ ոգուտ, սակայն: Եթէ արտառուաթոր բոլոր սաղմոսները կրակ դառնային, եւ վճռէին հրոյ ճարակ դարձնելու վարդապետին մտապատկերները, անկարող պիտի ըլլային խանձել, նոյնիսկ, անոնց ամենափոքր մասնիկը:

Անոնք, ընդհակառակն, առեղծուածային զօրութեամբ մը աւելի պիտի կենդանանային, փորելու համար վանքին հիմերը, եւ շինելու նոր տաճար մը, նոր ստեղծ ճարտարապետութեամբ եւ բնութենապաշտ հաւատքով:

Շատ միեւնոյն կը զգար ինքզինքը իր խուցին մէջ: Մինակ եւ անընկեր: Սուրբերու եւ ճգնաւորներու պատկերները որեւէ կերպով չէին կրնար մեղմել անոր մենակեցութեան դառնութիւնը: Անոնց փիլիսոփայութիւնը ողբերգական մոլորում մը կը նկատէր ան, պարզապէս: Անիմաստ ժխտում արևուողոյ այս աշխարհին, որ բնութեան կատարելատիպ ձեռակերտներէն կարելի է համարել:

Պէտք է վայելել այս աշխարհին գեղեցկութիւնները, ըմպելով անոր մատուցուած գինիէն: Պէտք է սիրել արեւուն ջերմ ընկերակցութիւնը: Ռափշտակուիլ ծիածանազարդ երկինքովը: Ունկնդրել թռչուններու անուշ ճառագիւններուն: Դիտել՝ սքնթաց ջրերու զու- նագեղ շատրուանները: Ահեղաթափ ջրը- վէժներու փրփրակուտակ զալարումնե-

րը: Լուս դիւերներու աստեղային կապոյտը: Արեւախանձ ժանկալներու ցորենարոյր երազները: Ձմրութեան կանաչին թաւեայ ծփանքները: Հասած աղջիկներու շուշանային մերկութիւնները: Միայնոց ուղեղներու ճարճատոց կրքակները: Խնչարարած բանակներու կատաղի ճակատամարտները:

Այո՛, դեղեցիկ է այս աշխարհը: Շա՛տ գեղեցիկ: Բայց ուշ է: Զէ՞ք ճշմարտեան ցամաքը: Բայ է, եւ պատրոյզը աւրուած աչքի մը պէս թեւ կը նայի:

Ճ

Կը ժտած է վարդապետը:

- Ի՞նչ կը մնայ ինձ, այժմ, ընե՛ր: Երազե՛լ ու ապրի՛լ: Ապրի՛լ ու հալի՛լ:

- Ի՞նչ մեծ ողբերգութիւն, էթէ մեր երազանքի աղբիւրը ցամաքէր, եւ ճշմոյցը դառնէր:

- Ի՞նչպէս կարելի պիտի ըլլար, այն ատեն, կենդանութիւն տալ ցուրտ ու կիսամութ խուցիս, եւ բնակելի դարձնել զայն:

- Աշխարհիս բոլոր աղօթքները անկարող պիտի ըլլային տաք ալիք մը նետելու անոր սառնամանիքին վրայ:

- Բարեհաճ աղբիւրը, սակայն, կը կարկաշէ, եւ սենեակիս այլապէս խոնաւ լուսութիւնը կը կենդանանայ, կը շնչէ:

Կը բարախէ: Արարչական կարողութիւն ունի ան: Շունչ կը փչէ իմ բազմաթեւ հիւսուածքիս: Անոր լարներուն վրայ երգեր կը յօրինէ, եւ երեւակայութեան մէջ ճարճատուն բոցեր կը նեախ: Ամէն տեսակ պատկերներ կը նկարէ, եւ անոնց երակներուն մէջ արիւն կը ներարկէ: Տաք, կայտառ, քողածածուկ մերկութիւններ: Մօտք կը նստին: Քեզ հետ կը խօսին, կը խնդան, կը զբօղան: Զիրենք ծածկող բարակ շղարշներովը՝ երեսներդ կը շոյին: Ճկուն եւ անշօշափելի՛, խոյս կու տան թեզմէ ու մարմինդ կը տաքնայ: Խուցիչ կը լիցուի կենդանի շունչով: Գրիչը մատներուդ մէջ կը խլրտի: Հոյանի թեւերու հպումը կը զգաս, տենդոտ ու խոտվայոյզ: Ժամօք մը կը սկսի ներսդ: Հոգեմարմնական ժամօք: Ամբողջ էութիւնդ կը կայտառանայ, եւ գուն դրելէ կը դառնիս: Ալիքերդ կը գոցես: Ճակատդ կը քրանի: Մանրօրէն կը հեւտա ու կը սուզիս երազիդ շուրերուն մէջ: Անոր շոյանքներուն ու փայտանքներուն: Անոր տաքուկ ու դողդոջուն շրթներուն: Անոր արեքցուցիչ դիմութեան՝ որ միգամման շղարշներու պէս թեւ կը ծածկէ, ու կ'օրօրէ:

- Ի՞նչ պիտի ըլլար իմ սեւաւոր դոյութիւնս՝ սոսնց այդ հրաշագործ աղբիւրին:

Ս. Շ.

ՄԻԱԿ ՄԻՈՋԷ

Կ Տ Ա Կ Ը . . .

Տեղի՞ն էր Հայրապետ աղբոր զանաթիւնը: Իրաւունք ունէ՞ր այդպէս պոռայկանչելու, աշխարհը իրար անցընելու լոկ անունի մը փոփոխման համար: Կրնամ ըսել, մեզի համար ծիծաղելի, իրեն համար սակայն, կարծես կենաց եւ մահու խնդիր էր:

Ի՞նչ էր պատահածը:

Ձինք «Ալէն ժան» (օտարականներու գրասենեակը) կանչեր են, «Միւսիւ Հայրապետ, - ըսեր են իրեն, - դիմումնադիւրդ ընդունուած է, Հպատակութեանդ թուղթերը եկած են, այժմ Փրանս. քաղաքացի պիտի դառնաս, բայց, լաւ կ'ընես եթէ սա երկարապատում, դժուարահընուն, «եան»ով վերջացող անունդ փոխես, աւելի կարճ եւ յստակ անուն մը որդեգրես»:

Հայրապետ աղբարը այս լսելով զայրացած, գրեթէ կատաղած, դուրս նետուած էր գրասենեակէն, ու հիմա, տեղէտեղ, սրճարանէ-սրճարան կը դեպքերէր պոռայ կանչելով, իր գցաւը պատմելու զիչ մըն ալ դառնացած հոգին թեթեցընելու համար...

- «Թարգման մը, Թարգման մը... Փրանսերէն գիտցող լսկոտ մը որ հետս դայ, ըսելիքները լաւ մը հասկցնէ այդ անպիտաններուն...»:

Սուրճի դաւաթ մը առջեւ, օրուան լրագիրը ձեռք երբ Հայրապետ աղբարը ցցունեցաւ դէմն: «...է՛, «փաթաթենի բոնաստեղծ», միշտ, ամէն օր թուղթ, գրիչ, թերթ ունիս առջեւդ, լեզուդ ալ միշտ կը պլպլայ, յայտնի է որ խելքդ ալ Խարբերդի մեր պարոմ Պաղտանարիմ յափ աշխարհի բաներուն կը հաս-

նի, հարկաւ ասոնց լեզուէն ալ հասկնալու ես: Տէ՛ ել երթանք բան մը հասկըցուր այդ «պուտայաններուն»:

- Ի՞նչ է, ի՞նչ է պատահեր Հայրապետ աղբար, բարին ըլլայ: Որո՞նց մասին է խօսքը: Ինչո՞ւ այդքան զայրացած ես: Ո՞վ քու հաւիդ գըջ ըսած է: Նստէ սուրճ մը վերցուր:

- «Սուրճ խմելու ատեն է... Սուրճ խմելու սի՛րտ մնաց... Որո՞նց մասին է խօսքը, չես գիտեր, սա «Ալէն ժան» նըստած «սպառաչներու մասին»:

«Ես իրենց լեզուէն «չաթ-փաթ» կը հասկնամ, բայց, ինչ որ ըսին ինծի այնտեղ, լաւ հասկցայ: Գիտե՞ս ինչ... «Հը պատակութեանդ թուղթերը եկած են»: Ըսէ է՛... Այդ մարդուկները կ'ուզեն որ Հայկական-պատուական անունս նետեմ, «եան»ն ալ վերցունեմ ու նոր, «բատի-Փայ»է անուն մը առնեմ... ասի եղա՞ւ...:

Մտածեցի որ Հայրապետ աղբարը սխալ հասկցած ըլլալու էր, որով, ուղեցի իր ցանկութիւնը կատարել: Գիտէի որ Հպատակութեան պարագային այդպիսի տոաջարկներ կ'ըլլային, բայց պարտադիր չէր ոչ ոքի համար:

- Երթանք Հայրապետ աղբար, - ըսի, - երթանք ինչո՞ւ չէ, դուրս կը կոտորեմ, խօսքը չեմ կոտորեր, միայն զիչ մը զուսպ եղիր, զիչ մը կամաց, ցած խօսէ, մանաւանդ հոն, այդ մարդոց առջեւ, դիտե՞ս հոն պաշտօնատուն է:

- «Սո՛, դու ալ սկսար բարակնալ: Հապա՛ ինչի՞օ դրիչը կը բռնես, յոդուածներ կը գրես, «Հայը Հայ պահենք կը «զոսս»... Հայը ինչպէ՞ս Հայ կը պահուի... Հայը ինչպէ՞ս Հայ մնացած է մինչեւ օրս... «Պուտայ»: Միբարա-

նական պատմութիւններ գրելով, չէ նը «քաֆէ քրեմ» խմելով...

«Հա՛, թերթերու մէջ պապի» անու- նիդ կը հանդիպիմ: Դուն ալ «եանքը վեր- ցուցիք ես, «ԱՅճի՛ հաց» անուանիդ վը- րայէն «եանք»ը վերցունես նը ալ ճիվե՛րս կը մնայ տեղը...»

Կը ճանչնայի Հայրապետ աղբարը, մանուանդ անոր Հայու մաջուր հոգին, ստոր Համար ալ վշտանալու տեղ լայնո- րէն ժպտեցայ իրեն ու ճամբայ ելանք:

Ճամբու ընթացքին, Հայրապետ աղ- բարը իր արտին վրայ կուտակուած գառ- նութիւնները մերթ դայրոյթով, մերթ յուզումով, յաճախ խոր հասարակութիւն թափեց առջեւ: «...Պիտի՛ թարգմանես, ինչ որ պիտի ըսեմ այդ «սարսափոյնն- րուն» պէտք է որ բառ առ բառ թարգմա- նես: Կ'ուզե՞ն, լաւ... չե՞ն ուզեր, ճի- վերէս վար, թուղթն ալ իրենց, հպատա- կութիւնն ալ»:

- Լաւ, կը թարգմանեմ, - ըսի - զինք հանդուստանելու համար:

Հասանք պաշտօնատուն, ներս մը- տանք: Հայրապետ աղբարը կարծես թէ կրիւի կը պատրաստուէր: - Ի՞ր շարժու- մները այդպէս ենթադրել կու տային ինծի, - զէմքը մտալլ, աչքերը կարմը- բած, խոշորցած, ջղուտ մեղքերուն վը- րայ ժամ կար:

Յայտնի էր որ, անոր նախորդ հան- դիպումը աղմկոտ պէտք էր եղած ըլլար: Ներս մտնաք թէ չէ, բոլոր նայուածքնե- րը դէպի մեր վրայ ուղղուեցան: Ու մը- ուրջուտք մը սրահին մէկ ծայրէն միւսը շրջան ըրաւ:

Ներկայացանք ուր որ հարկ էր:

Երիզաւոր, թիւ մը բարձր պատուան- դանի մը ետեւ նստած էր խոշոր կաղ- մով, հարուստ պիւրիտով պաշտօնեայ մը: Երբ մեզ նշմարեց, ակնոցները շտկեց, վիզը երկարեց դէպի մեր կողմը...» Ա՛, սէ վու միւսիւ եան...»

- Այո՛, մենք, - պատասխանեցի հան- գարտ:

Պաշտօնեան, Հատ-Հատ, Հաստա- տուն շեշտով մը կրկնեց իր նախորդը

ստծները, ու վարժանք յայտնեց որ Հայ- րենակիցս անտեղի դառնացած՝ եւ գայ- րոյթով մեկնած էր:

Ըսի թէ լաւ չէր հասկնար Փրանսե- րէնը, եւ ապահովարար այդ էր պատճա- րը:

«Ի՞նչ ըսիր... Ինչպէ՞ս չեմ հասկը- նար... Ինչպէ՞ս չի հասկցայ... հասկը- ցայ ստոր ըսածները, բայց իր ըսածնե- րը իմ դործիս չի դար, հասկցա՞ր զըզմ- պօ՞, կշտամբեց զիս:

Աչքով ըրի որ հանդարտի: Քիչ մը կամաց խօսէ, - ըսի:

Բայց, Հայրապետ աղբարը շրեց: «Հիմա դու ալ իմ ընկերներս թարգմա- նէ այդ մարդուն: Կ'ուզեմ որ հատ հատ, բառ առ բառ ըսես ըսելիքներս: Ըսէ այդ մարդուն որ մենք ալ «վախտին» մարդ էինք, տուն-տեղ ունէինք: «Չաղա-չո- լուխ», արտ ու տոյգի, եղ ու զոմէշ, միեր ու իրեն պէս...»

«Այդ բոլորը թողուցի ետեւ, ճիշդ կ'ըլլար ըսել այդ բոլորը թաղուեցան ա- ռանց աղօթքի ու դերեզմանի... Հիմա, այստեղ, այսօր, այս երկրին մէջ «հայ- մաթիօս»: Ի՞րը միւթարութիւն եւ Հը- պարտանք, իրր հարստութիւն կամ ժա- րանդ անոնցմէ մնացած է միմիայն ա- նուան... Եանով վերջացող գծուարա- հընչուն անունս... Կ'ուզէք որ ա՞տ ալ թաղեմ, ա՞տ ալ ուրանամ, ա՞տ ալ ծա- խեմ... Ի՞նչ, ես բոշայի ծնո՞ւնդ եմ...»:

Հայրապետ աղբարը այս նախադա- սութիւնը արտասանեց բարձր, պոռա- լով, գրեթէ կատղած, ինքն իրմէ ելած երեւոյթով մը:

Ես, շուարուն, որոշ շափով այլայլ- լած, Հայրապետ աղբոր ըսածները կո- կելով, կ'ըրցնելով, վախկոտ շուշուղ մը թարգմանեցի պաշտօնեային, եւ անմ- կութեամբ կը սպասէի անոր լաւ կամ վատ պատասխանին:

Մեծկակ սրահը լուս, բոլոր ներկա- ներուն աչքերն ու ականջները դէպի մեզ ուղղուած էին: Ինչպէ՞ս կրնար վերջանալ այս արարը կը մտածէի:

Հայրապետ աղբոր արտայայտու-

Թիւնները խիստ էին, անտեղի, նոյնիսկ կոչու իր ձեւին մէջ, կրնար տխուր անդրադարձ մը ունենալ իր ներկայ վիճակին վրայ: Կրնային իր հպատակութիւնը մերժել, կրնային նոյնիսկ ճամբայ ցուցնել իրեն դէպի անձանօթ հորիզոններ:

Որովն հոգն էր որ ինք տուն-տեղ կորսնցուցած էր, նահատակներ տուած էր, ես ինչ դիտեմ որ ճամբաներէն անցած էր: Օտար, գրասենեակի պաշտօնեայ մը այդքանը հասկնալու կամ այդպիսի բաներ մտիկ ընելու պէ՞տք ունէր:

Մեր բարտէն, ամէն բան լաւ ընթացաւ: Մարդը որ մեր խնդրով կը դրադէր, ոտքի ելաւ, մօտեցաւ մեզ իրարմէ բաժնող պատուանդանին, ու ձեռքը երկարեց Հայրապետ աղբոր: «...Կը շնորհաւորեմ ձեզ, պարոն նոր քաղաքացի... Ես տնձամբ կը ճանչնամ Հայերդ: Ապրած եմ ձերիններուն հետ Մեծ Պատերազմի ընթացքին: Համտեա՞ծ եմ ձեր ապուխտն ու երշիկը, խմած եմ ձեր պատուական «աւջիճ»...»:

«Կը շնորհաւորեմ, տոկուն Հայ մըն ես, տոկուն մարդ մը, մեր երկիրը նկարագրի տէր տոկուն մարդոցմէ չի վախնար»:

Իրա՞ւ էին այս մարդուն ըսածները թէ՞... մեզ կը ծաղրէր:

Մրաշին մէջ, ժպիտ եւ խնդուք կար: Պաշտօնեան վերադարձաւ իր տեղը ու Հայրապետ աղբոր երկարեց արդէն պատրաստ հպատակութեան թուղթերը: Մենք, պաշտօնատուներն դուրս ելանք զո՞՛ւ լայն ժպիտ մը երկուքիս ալ դէմքերուն վրայ: Գո՞հ էր մանաւանդ Հայրապետ աղբարը, իր տարած «յաղթանակը» կարծես զինովցուցած էր զինքը: Ծամբու ընթացքին խօսեցաւ, անդադար ծխեց ու խօսեցաւ: Հինը, նորը, չափաւորն ու չափազանցեալը իրար խառնելով՝ «ՏՕ՝ վա՛յ անպիտաններ վա՛յ, քիչ մնաց որ անունս ալ ծախու հանէին...» յաճախ կրկնեց ճամբու ընթացքին:

Հասանք հայկական սրճարանը: Հայրապետ աղբարը լայնօրէն «թրջեց» իր հպատակութեան յաջողութիւնը: Ներ-

կաները մէյ մէկ բաժակ կոնծեցին Հայրապետ աղբոր դործին յաջողութեան, ու անոր արեւշատութեանը համար: «Ե՛մ, ի՛նչ կը կարծէք, «հայվանդներ, ես ձեզի պէ՞ս եմ որ ամէն բանի «Ո՛ր» ըսեմ եւ անցնիմ. ինձի Խարբերողի Հայրապետ կ'ըսեն, ես անոնց...» կը պարծենար Հայրապետ աղբարը արտաւ ծիծաղով մը:



Տարինե՛ր անցան...

Տարիներ անցա՞ն... Մեծ Թիւղձ ձեւերն ու զարուեսներ իրարու յաջորդեցին: Մարտակ շողքը շատոնց ինկած էր Հայրապետ աղբոր մագերուն մէջ: Մէջքը արդէն կ'ըսեմ՝ դէմքը կ'նոստոսած, ձեռքերուն, բազուկներուն վրայ երակները ուռած, կապուտցած էին:

Ժամանակի ընթացքին, Հայրապետ աղբոր տունը մեծցաւ, լայնցաւ, որոշ չափով կարգի մտաւ: Իր աշխատանքով, քիչ մըն ալ Ամերիկայի իր եղբորը օգնութեամբ օգտիկ տնտիկ մը եւ ափ մը սեփական հողի տէր դարձաւ: Տկլոր, խըլտու երախաները հասակ առին, մեծցան, ուժնուցան, տուն-տեղ եղան: Ի՛նք միայն գիտէր թէ ի՛նչ նեղութիւններ քաշեց զանոնք մեծցնելու, մինչեւ այդ վիճակին հասցնելու համար: Հիմա որ այդ նեղութիւններէն ազատուած էր, աւա՛ղ, իր առջեւ ցցուած էին այլապէս ծանր մտահոգութիւններ...:

Ի՛նչ կ'երազէր, ի՛նչ կը սպասէր ինք կեանքէն, այլ մանուսանադ իր գուակներէն, բայց այսօր ի՛նչ կը գտնէր իր դիմացը: Վարձատրութիւն չէր իր փրնտառածը, փոխ տուած հացը չէր իր ուզածը, այլ բոլորովին ուրիշ բաներ, որ կը փնտռէր ու շէր կրնար գտնել:

Աշխարհը, մարդիկ, իր շքապատը օր աւուր կը փոխուէին, այլ զոյն, այլ կերպարանք կը ստանային: «Հինին» ու «Նորին» միջեւ անդունդը կը խորանար յարսնուն արագութեամբ մը. ո՞ւր պիտի յանգէր ասոր ծայրը...:

Հայը ընդունակ էր յաւաջդիմու-

թեան: Հայր պէտք էր սիրահար ըլլար յառաջդիմութեան, բայց յառաջդիմութեանը պէտք էր շփոթել այսպէս գոնե՝ հիկ նորարարութիւններու հետ: Ժամանակին հետ քաղեր պէտք էր նշանակէր անդունդն ի վար գլտորուիլ...:

Յաւազդիմութիւնը ըստածը, մասնաորակէս Հայերու համար, ապրանք մըն է զոր պէտք էր գտարանէ մը անցընել, այնպէս պէտք էր անհրաժեշտ, մնացեալը նետելու համար: Այս էր Հայրապետ ազբոր ըմբռնումը:

Բաներ կային որ անպայման, ամէն զնով պէտք էր պահուէին, որպէսզի այս համայնակույ միջավայրերուն մէջ ազգը մնար ազգ, Հայր՝ մնար Հայ:

«Հայ» ըստածը, «Հայութիւն» կոչուածը, «գերդաստան» յորջորջուածը, Հայրապետ ազբոր համար լոկ բառեր չէին, այլ խորիմաստ արժէքներ, իր ըմբռնումներուն ամբողջական բովանդակութիւնը:

Ի՞նչ պիտի բնէր տուն-տեղ, զաւակներ ու թոռներ, եթէ անոնք, զգացումով անհարգատ, ըմբռնումով խորթ, նկարագրով բոշայացած էակներ պիտի ըլլային... Հայութեան հետագած, նոյնիսկ Հայութեանը հեղեղ, արհամարհող հրկոտանիներ պիտի դառնային...:

Իր գաւակները... Ինչպիսի՞ երազներով, որպիսի՞ դուրգուրանքով մեծցուց զանոնք: Ի՞նչ միտք ու հոգի սպանեց անոնց կրթութեան, դաստիարակութեան համար, յատկապէս հայկական գետնի վրայ:

Գիշեր-ցերեկ խօսեցաւ, խրատեց, փորձեց սորվեցնել իր դիտցածները: Անցեալը ամբողջութեամբ իր առօրեայ խօսակցութիւններուն առանցքը եղան, նպատակ ունենալով այսպէսով քիչ մը աւելի զանոնք մօտեցնելու հայ կեանքին: Բայց, ափսո՛ս, այսօր յուսահատի աչքերով միայն կրնար դիտել այդ բոլորը:

Ինչ որ ինք փորձեց տալ անոնց, դուրսը, շրջապատը, դարանակալ դազանի մը պէս անմիջապէս կը խլէր անոնց ձեռքէն: Լաւը, յարգին միշտ կ'անտեսէին, վատը անմիջապէս կ'ընդօրինա-

կէին թուրակներու պէս: Ահա թէ ինչո՞ւ յուսահատած էր Հայրապետ ազբարը:

Անոնք, իր գաւակները, երբ փոքր էին, մինչեւ տասնընորստասնըհինգ տարիքը, լաւ էին, գովելի, յուսադրելի: Այդ տարիքին հայկական դպրոց կը յաճախէին, եկեղեցի կ'երթային, շապիկ կը հագնէին, շարական կ'երգէին: Յերեկոյթներու-երեկոյթներու ընթացքին իրենց դպրոցիկ արտասանութիւններով երգերով հայրենակարօտ բազմութիւնները կը խանդավառէին: Տասնըվեցէն ետքը մնաւ բարո՛ւմ Հայութիւն:

Ինչպէ՞ս դիմացեր էին հիները այնքան տաժանլի պայմաններու մէջ, ան ալ... դարերով: Ինչպէ՞ս տողացին, դիմացան այն միւսները արցունքի ու արիւնի ծովերու մէջ... Նւ ինչո՞ւ, ի՞նչ կար չկարենալ դիմանալու այս լուսաւոր, ազատ երկրին մէջ: Ահա՛ անհասկրնալի իրեն համար...:

Ինք լոկ անունի մը փոփոխման համար ինչիք հանեց, - սպանդանոց տարուող ոչխարի մը պիտի նմանէր, եթէ այդ բանը պատահէր: «Ման» պահելու իր յամառութիւնը կրնար իրեն համար շատ անխորժ երեւոյթներու դուռ բանալ: Բայց, ինք, նախընտրեց քաջութեամբ դիմադրուել բոլոր «չարիքները» քան թէ սրբապղծել իր պատկենական Հորապատ անունը:

Ի՞նչ կ'ընէին, սակայն այսօր շիրմէն ինկածները: Վա՛տ, վա՛տ շա՛տ վատ բաներ...:

Իր տունին մէջ, կամ շրջապատը հայկական անուն չէր մնացեր, եւ կամ չէր գործածուեր: Հայկական բարի, առաքինի սովորութիւնները ինք եւ իր կիներ միայն կը փորձէին պահել:

Իր մեծ մանչը՝ այժմ կը կոչուէր «Թիւլ»... Կրտսերը՝ «Մարիւս»... Փոքրը՝ «Ալէն»: Աղջիկներէն՝ Սիրարփին եղած էր «Թիւլիա», Մարգրիտը՝ «Միւս ռիէլ»...:

Թոռները... անոնք իրենց անուններով աւելի հետունները դացեր էին: «Ռիթա», «Բրիտիս», «Բէթթ», «Կրակրի», «Նիլսըն», եւ ի՞նչ դիտեամ գեռ ինչ...:

Այս անունները կրողները Հա՞յ պիտի մնային, Հայութի՞ւնը պիտի փնտռէին... Ա՞, Հո՞ւ, վայ մեր գլխուն... .

- Մանչ, հոգուդ զգուրպան», օտ վարդան անունը ի՞նչ ունի որ մէկ կողմ նետած՝ ձեռքը անունը շալկեր կը պտըտին... .

- Այդ բաներուն խելքդ չի հասնիր, Հայրիկ, մի խօսիր, Հոս Խարբերդ չենք:

- «Շտմբու՞մ», Արայէն ունի կարճ, պեղեցիկ անո՞ւն կայ որ զայն լքած, ՎՄարիւս» փնթի անունը փակցուցեր ես կըռնակդ:

- Հայրիկ, ես Թութա՞կ եմ որ ինծի Թութակի մը անունը դրեր էք: Յետոյ, պիտե՞ս ով է եղած Մարիւսը, չե՞ս պիտեր, այն աստե՛ն չգիտցած բաներուդ մասին մի՛ խօսիր:

- Ծ՛, ես ձեր բոլորին պապուն կողմը, սա ճիշտ Մոխրա՞ն, «Քրիստին Մրիտարիսները ս՛րտեղէն գտաք, ուրկէ՞՞ Հանցիք, Հայկական անուննե՞ր կը պակսէին:

- Անոնք, Հայրիկ, մտա ե՛ն, նոր անուններ են: Հապա ի՞նչ, Հնազանդ, Հաղարթա՞ն, Պատասխա՞ն, Սուլթա՞ն ղնէիք անոնց անունները, Հոս երկի՞րն ենք:

Հայրապետ աղբարը ընկճուած, յուսահատ, ակունները կը կճրտէր, գտնութեամբ գլուխը կ՛որորէր:

- Այս ո՞ւր Հասանք, Աստուած իմ:

Տղաքը անուններն փոխած, օտարացած, Հարսերուն մեծ դումարը օտարուհիներ, փեռաները նոյնպէս: Ո՛չ ինք անոնց ըսածները կը Հասկնար, եւ ո՛չ ալ անոնք զինքը կ՛ըմբռնէին: Արիւնի եւ ընտանեկան յարկի, մեծ ու պզտիկի Հարցը փակուած էր, քառ՛ս, բ՛ս քառա... ալ ի՛նչ կը մնար, կեանքին բովանդակութիւն տալու Համար...:

Է՛, - կը խորհրդածէր Հայրապետ աղբարը յաճախ ինքն իրեն, - է՛, այն չէն օրերուն, Հայրենի երդիքին տակ, ի՛նչ կարգ ու կանոն, ի՛նչ յարգ ու պատիւ կար փոքրերէն մեծերուն ու մեծերէն փոքրերուն Հանդէպ: Տունին մէջ

կապի խորութիւն չկար ու մէկը միւսին Համար կ՛ապրէր:

Ինք արդէն Հասած աղայ, բայց չէր Համարձակեր Հօրը առջիւ բարձր խօսիլ, կամ ծխել, իր կնոջը Հետ զովքովի նրստելու, կամ մեծերուն քով երախան սիրելու անգամ ամօթիածութիւնը կար... Հարկա՞ւ, ժամանակները փոխուած էին, այո՛, ախո՞ս, Հիմա Խարբերդ չէինք: Բարձրերն ու սովորութիւնները յիշատելու արժանի էին, դիտէ՛ր, այդքանը կը Հասկնար, այդքան նեղմիտ չէր ինք:

Բայց լաւ չէ՞ր որ քիչ մը կարգ-կանոնը պահուէր, առաջին սովորութիւնները յարգուէին, մեծ ու պզտիկ զիրար ճանչնային... .

Օ՛, ինչպէ՞ս ըսէր, ինչպէ՞ս պտտմէր: Հարսերը յաճախ կու դային իր առնակը աւելի ուտելու, քան թէ այցելութեան: Իրենց մարմինն վերի մասը՝ գրեթէ մտա, անկէ վար կարճ, նեղ, ծուկերէն վեր չընդգզեստ մը, եւ կամ կարճ տարատ մը: Անոնց շրթները, ձեռքի եւ ոտքի մատներուն եզունները՝ յայտ:

Աթոռներու վրայ բաղձած, կամ ռոտիանին վրայ երկարած, անաղար կը ծխէին ու անվերջ կը շարունակէին: Իրենց արտաուայ մեծերը, Աստուած իմ, պատմուելիք չէր... Սուրճը պէտք էր եփուէր եւ իրենց ստրին երթար, Եւրմամն ինչո՞ւ եղած էր: Ծաշէն եաք պնակներ Հաւաքել լուալու, սեզանը մաքրելու Համար վէն կար... «Ա՛խ, զգուրպան» Աննաս, քառասուն տարի է ամուսինդ եմ, օր մը ձեռքս մոխիրը Թաթիսի չի տուիր...» կը խորհրդածէր ինքն իրեն իր կնոջ մասին:

Յառաջդիմութիւն էր ասիկա, մտա՞ էին այս բոլորը, Հայրապետ աղբար խելքը չէր Հասներ, ահա թէ ինչո՞ւ խոր էր իր ցուր:

Ճ

Օր մը, անակնկալ ու շար լուր մը բերին Հայրապետ աղբար գործատեղիէն: Մանր արկած մը անցուցած էր ու զայն փոխադրած էին Հիւանդանոց:

Որոշ բարձրութենէ մը ծանր երկաթ

մը ինկած էր իր գլխուն՝ փշրած էր իր գանկը։ Ականատեսները շատ ծանր կը գտնէին արկածը ու բժշկիչները լուստես չէին իր մասին։

Արկածին առաջին օրերը մարդ չէին ձգեր իր մօտը, նոյնիսկ իր հարազատները։ Կարելուք ու փափուկ գործողութիւն մը ըրած էին եւ անոր արդիւնքին կը սպասէին գէպի լաւը կամ վատը։

Օրեր ետք, կամաց-կամաց կարծես թէ կը բարւոյնէր հիւանդին զիճակը։ Հիմա աչքերը կրնար բանուլ, կակազելով կրնար խօսիլ։

Սկսած էին թեթեւ ուտելիքներով սնուցանել զինք, այժմ, կարճ այցելութիւններ արտօնուած էին։ Շաբաթը զանի մը անգամ կ'այցելէի։ Իմ յուսադրիչ խօսքերուս կը պատասխանէր կարճ, կտրուկ, վշտալից երեւոյթով մը... Եթէ երթամ «էնդի դէմը», չեմ ցուիր, կորսնցնելիք բան չունիմ, այս բարիչակն աշխարհէն վաղուց կըտացած եմ...»։

Օր մը, երբ այցելութեան բողբոջները վերջացած, վար կ'իջնէի հիւանդանոցի աստիճաններէն, գինք խնամող հիւանդապահուհին առջեւ կարեց։

- Ներեցէ՛ք երիտասարդ, պարոն Հայրապետին ազգական էք։

- Այո՛, - պատասխանեցի, - զի մը շփոթած աւելի՛ այլայլած։

- Այդ պարագային լաւ... Իր ընտանիքին բան մի ըտէք առայժմ, դուք միայն դիտեցէ՛ք։ Ձեր հիւանդին զիճակը լուր չէ... Ինչ որ կը նշմարէք իր լաւ, կարճ ու խարուսիկ չրջան մըն է, աւա՛ղ... Շատ չէ՛, երկու- երեք, առաւելագոյնը հինգ օր...։

- Ի՞նչ կ'ըսէք, քոյր, - ըսի, - ի՞նչ կ'ըսէք... անհաստատի է։

- Ընմարտութիւն է պարոն, քա՛ղ եղէք...։

Կանգնած տեղս մնացի դամուած։ Ատիճաններուն մատերը կարծես խոյս կու տային ոտքերուս տակէն, սրունքներս ինծի չէին հնազանդէր, չէի կրնար քայլերս փոխել։

Կերպով մը դուրս նետեցի ինքզինքս

հիւանդանոցէն, ու հասայ գործատեղիս։ Առարկեցի թէ շատ անհանգիստ կը զգայի ինքզինքս եւ թէ քանի մը օրուան համար բացարձակ հանգիստի պէտք ունէի։

Տուին...։

Որոշեցի քանի մը օրով հետանալ զազգէն մինչեւ որ վերջանար այս տխուր արարին վերջին գործողութիւնը։ Մտակալ քաղաքէ մը հրաւէր ստացած էի խօսելու, ինչ որ կը դերասանէր դրօս։

Գացի երկաթուղիի կայարանը, դնեցի տոմսակս, բայց քայլերս աւելի առաջ չընթացան։ Ինչպէ՛ս կրնայի առանձին ձգել Հայրապետ աղբօր հէջ տիկինը... Եթէ բան մը պատահէր, - ինչ որ ստոյգ էր, - տեղի՞ն պիտի ըլլար իմ բացակայութիւնս։

Վերադարձայ առեւ։

Իրիկունը, ճամբուս վրայ, յանկարծակի հանդիպեցայ Հայրապետ աղբօր տիկինը։ - «Լաւ է, ըսաւ - բժշկիչները լաւ դտած են իր վիճակը։ Թոյլ տուած են որ հիմա սրտին ուղածը ուտէ։ Միջուկով քիւֆքէ ուղած էր - եփեցի, տարի, «ժՖ» լաւ ըրիր, բերիր, - ըսաւ, - շատոնց է համտեամ չէմ... Բայց, հատ մը իսկ չկրցաւ ուտել... Ենզն մարդ, ինք որ տասը հատին բան չէր ըսեր...»։

Յայտնի էր որ խեղճ կինը չէր ըմբռնած, չէր հասկցած բժշկիչներու այս շարաշուք պատուէրին իմաստը։ Բայց ես որ գիտէի ամէն բան, կանգնած տեղս սարսուցի... Իրա՛ւ պիտի կորսնցնէինք այս երկաթի կտոր պատուական հայրողին, ան ալ այսքան եղերական պարագաներու տակ։

Երկու օր ետք, առաւօտ մը, Հայրապետ աղբօր մեծ տղան ղէմս ցցուեցաւ։

- Ի՞նչ կայ, Վարդան, - ըսի, - կատկանու, գրեթէ կակազելիք։

- Հօրս մօտէն կու դամ... պատուէրից որ անպայման քեզ տեսնեմ, եւ անյայտաղ իրեն մօտ դրկեմ։

Ժամ, ժամանակի շնայեցայ, անմիջապէս հիւանդանոց վազեցի։

Այլևս ամէն բան յատակ էր, յայտնի էր, էր վիճակը շատ ծանրացած էր: Հիմա դինք առանձնացուցած էին փոքրիկ սենեակ մը:

Պատուհաններուն վարագոյրները քաշուած, դրան մօտ հիւանդապահուհի մը կանգնած: Տխրութեան ու սուգի քող մը կար կարծես միջանցքին ամբողջ լայնքին ու երկայնքին:

Ինձմէ առաջ հոն հասած էին Հայրապետ աղբոր կինը ու քանի մը հարապատներ:

Մօտեցայ, բռնեցի իր ազազուն ձեռքը: Փորձեց սեղմել ձեռքս, բայց յայտնի էր իր ուժը անբաւարար էր: «...Հո՛ւ, եկա՛ր, - ըսաւ խեղճուած ձայնով մը, - ականջդ մօտեցուր, փաքաքքիսի բանաստեղծ... Երբ «փաթաթենի բանաստեղծ» կ'ըսեմ քեզի, դիտցիր, որ քեզ շատ սիրելու համար է... Լեզուս երկար՝ բայց սիրտս միշտ մօտուր եղած է: «Նազա» անցած մարդոց միշտ հայհոյած եմ, բայց անոնք զիս նանչնալով միշտ ժպտում ու ներողամտութեամբ ընդունած են յիշոցներս:

«...Ես վրէժս, - միշտ աչքերը աչքերուս դամած, - ես վրէժս, դու նարդը տեսար, դու թուրքին զուլումը» հարակեցիր, դու որբանոցին որձնոտած ապուրովը մեծցար, բոպիկ, մերկ մնացիր, բայց, ըբիր-չըբիր Ա. Բ. Գ. ը սորվեցար: Հիմա զէ՛շտ-աղէկ բաներ մը կը մըտես, բեմերէն ալ բաներ մը կը խօսիս, հոս-հոն կը վազես դարձեալ բան մը ընելու համար, բայց իմինն՛բո... այս ապտո երկրին մէջ, այս լուսաւորեալ քաղաքներուն մէջ «հայրական» ծնան ու «հայրական» ալ մնացին...»:

«...կը տեսնես «իշտէ», ձագս, հոս ո՛չ տուն մ'կայ, ո՛չ անուն մնաց, ո՛չ կարգ ու ո՛չ ալ սրբութիւն մնաց, ալ տեղ կա՛յ մեղի պէսներուն համար...»:

«Բեզ կանչեցի մօտս, ըսելիքս կարճ է: Կրնայ ըլլալ որ այստեղէն շիտակ «վերջին հանգստարան»ը երթամ, այդ «պէմուրազ»ին միայն կը ցաւիմ, - դարձաւ իր կնոջը, - չեմ ցուեր, աշխարհէն վաղուց կշտացած եմ... Միայն փափաք մը ունիմ որ պէտք է կատարես, այդ դործը միայն քեզի կրնամ վստահելը»:

«...Երբ մեռնիմ ու ծանր քար մը դրուի հողակոյտիս վրայ, կամ խաչքար մը տնկուի գլխուս վերեւը, կ'ուզեմ որ այդ քարերուն վրայ հայերէն խոշոր գիրերով դրուի անունս եւ մականունս... Հասկցա՞ր, հայերէ՛ն, հայերէ՛ն...»

«...Ու յետոյ, եթէ օր մը փորձես թուղթ մըտեղ մեր ցաւերու մասին, մի մոռնար յիշելու իմ ալ ցուերս... իմ անդիր, անդարմանելի ցաւերս... Այս, այս կտակ մըն է զոր քեզի կը յանձնեմ համարձակօրէն... հասկցա՞ր... հասկըցա՞ր...»:

Տ

Հայրապետ աղբարը, ափսո՛ս, թողեցինք: Իր հետ թաղուեցան նաև իր յոյսերն ու երազները:

Ես լիովին կատարեցի այս համեստ, բայց սրտով ու հողիով մեծ հայրդիին կտակը: Այժմ, իր տապանաքարին վրայ, անցորդներու աչքերուն դիմաց խոշոր, հայերէն գիրերով դրուած են իր անունը եւ մականունը:

Լիմ

Մ. Մ.

ՍԷՐԵՐ, ՍԷՐԵՐ ԳՈՒՔ ԱՄՐԱՍԻՐ...

Ձկա՛ք այսօր, սէրե՛ր ազուր,
 Բազմակրակ, բազմաբուր.
 Կոր կեանք ապրող ձեր մարդուն մէջ արտասովոր,
 Արա՛ց արա՛ց՝
 Դու՛ք ալ մեռա՛ք,

Սղա՛ք երազ, հին յիշատակ, հիմնուրաց վէպ:
 Մէ՛րն այսօրուան -- արար՛ք հասկնեզ,
 Կատուներու անպամած կիրք,
 Ընդմիջտ գրգիւս, յանցուոր գիրկ:

Սէրե՛ր, սէրե՛ր դու՛ք ամբասիր,
 Սէրեր խորունկ, անծայրածիր,
 Վիշտին մութնով մարդը քանդող,
 Ու քանդակող՝

Ձայն պատկերովն աստուածներում՝

Ձկա՛ք այսօր:

Պա՛հ էիք դու՛ք, կեա՛նք մը ամբողջ անած հոգւոյ,
 Այսօր մարմնոյ խօլութիւն էք արասպնիլի,
 Արեան երգե՛հ՝
 Անկողմի՛ մէջ լուկ մարտիլ:

Կ'երթար մարդը ձեր յանրժիմ՝
 Արցունք արցունք մաքրուելով
 Մեծութեան մէջ, գիշերուան մէջ,
 Կարօտին ըտր խայտայկին մէջ:
 Սիրոյ ձեռքին նախանիւթ էր մարդու հոգին,
 Յանրժի պան՝ քարճրագոյն կեանք ստեղծելու,
 Կայունութի՛ն տակ տրո՛ւք տրո՛ւք հրկիզուելու:

Սէրե՛ր, սէրե՛ր դու՛ք ամբասիր,

Խճէ՛ կայ եիմա: -

Որտարդութիւն՝

Մարմնական խօլ հանդիմներու, հեշտանքներու:

Սեռերն երկու

Ձիլար կ'արան, որսասեղի փռոցին մէջ,

Որսասեղի սալօնին մէջ,

Պանդակին մէջ, ու ծովուն մէջ:

Ձիլար կ'արան բնագոյնելու բացազանչող ժողովներով,

Ու բռներով նարուար, ճկում ու մարմնաթով:

Սէրե՛ր, սէրե՛ր դու՛ք այսօրուայ,


Ալ սրտի մէջ չէ՛ք քնակիր,

Ձունիք հոգի՛ ձեզի իշխան ու բռնակիր:

Արա՛ք եւ էգ՝

Միտերու լուկ թաց ու մթին առուուր էք:

ՅՈՒԱԿ ՏԻՐԱՆԵԱՆ



ԳՐԱԿԱՆ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Գրականութեան ամենէն հրատապ խնդիրներէն մէկը եղած է անոր ազգային բնոյթը եւ այդ մասին մարդիկ, սերունդ առ սերունդ եկած եւ յայտնած են իրենց կարծիքները:

Նիւթը այսօր անի ի քան այժմէական է, քէ՛ մեր հայրենիքի մէջ եւ քէ Արատասեմանի:

Հայրենիքի մէջ երկար ժամանակ մը մերժել է ետ ազգային գրականութեան մը գոյութեան իրաւունքը՝ վերջին տասնամեակին քոյլ տալով ազգային համարուած գրողներու գործերուն հրատարակութիւնը եւ ապրողներուն որոշ չափով արտօնուեցաւ ազգային բնատրուութիւններու, գիծերու եւ գոյներու կենսական եւ գաւտորոշող յատկութիւնները կիրարկել:

Սփիւռքը այս հարցին մէջ գրանց միշտ արագին տեղը եւ պայտաբը տաքաւ երկու մակասի վրայ, ծառանալով մէկ կողմէ հայրենիքին պարտադրուած խորքութիւններուն դէմ եւ միւս կողմէ ջանալով հեռու մնալ արտասահմանի այլապէս վտանգաւոր ազդեցութիւններէն:

«Բագին»ի խմբագրութիւնը գրականութեան ազգային բնոյթին մասին երկարատեւ վէճեր շնչեցաւ ետէ՛ որոշեց հարցը դուրս բերել խմբագրատան սահմաններէն եւ հրատարակչային ֆննութեան նիւթ դարձնել գոյն:

Հարցին հրատարակչային ֆննութիւնը տեղի ունեցաւ Յունիս 18ին, Նշան Փալանեան շեմարանի բակին մէջ, գրական ընտիր հասարակութեան մը ներկայութեամբ: Երեք գրողներ կարգացին իրենց գրաւոր գեղարուները: Եղ. Պոյանեան բնաբոլոր ազգային հողի խնայումը: Պ. Սնայեան գեղարուցից գրականութեան ազգային բնոյթի մասին իսկ Վ. Օշական Սփիւռքի մէջ ազգային գրականութիւն մը մշակելու կարելիութիւններուն մասին:

- Ներկաները մասնակցեցան վիճարանութեան:
- Տօքթ. Բ. Փափագեան վարեց վիճարանութիւնը:
- Յալբաղաբար կու տանք երեք գրողներուն գրաւոր գեղարուները:

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Հ Ո Ղ

Ես ի՞նչ կ'աճեի, եթէ չլիճէր հողմ այս մի պատառ,
Իմը՞՞՞՞՞ կը լցուէր ամեռա՞՞՞ ինչ հողուս...

Վ. ԳՈՒԹՅԱՆ

Ի՞նչ է Հայրենի հողը, ուրիշ հողերէ կարծես բոլորովին տարբեր շնորհիւ այս մի պատառ», որուն համար չիտաթարուած ամէն էակ այս մտորակին վերայ, տուեալ պահու մը, առանց որեւէ յետին տասամուսի, չի վարանիր նոյնիսկ իր կեանքը տալու, զոհարելու ահաւանական ամէն երջանկութիւն: Բանաստեղծին երգած եւ անոր հողիին ամբողջ անհունը լեցնող շնորհիւ այս մի պատառը, Հայրենի՛քը այսինքն՝ որ ուրիշներէ զանազանութիւն մը, տարբեր ինքնութիւն մը, տարբեր ոճ մը կու տայ մեզի: Կու տայ տարբեր խորք մը, տարբեր խորձէ մը, հոգե-իմացական տարբեր կարկառ մը: Կեանքը ընկալելու՝ ուրիշներէն զա՛տ ընկալում մը, մարդկային լինելութեան հանդէպ զա՛տ կեցուածք մը, կեանքին ուրախութեանց ու ճնշումներուն հակադրելու զա՛տ եղանակ մը:

Ի՞նչ է այդ Հողը հայրենի,
Մանաւանդ ա՛յն պարագային, երբ ան կը դարձածուի հողեկան բարձր արժէքներու հետ կապակցարար, ինչպիսին է, առաւելագո՛յն չափով մը՝ Գրականութի՛ւնը:

Երբ Հայրենիք կամ Հայրենի Հող կ'ըսենք, մաքի տարրական գիճակով մը, նախ հող ու բար եւ նման նիւթական շօշափելի բաներ են որ կը ներկայանան մեզի: Իր առաջին քայլին մէջ լեռ է ան, դաշտ, դեռ, լիճ, ծովեզերք, անապատ, ովախիս եւայլն: Տեղ մըն է՝ իր տաանձին կի՛թայով: առանձին բուսականութեամբ, առանձին պայմաններով: Ատի-

կա սակայն աշխարհագրական բովանդակութիւն մըն է, աշխարհագրական խարիտի մը՝ որուն վրայ ցեղային նոյն արիւնը կրող մարդոց հաւաքականութեան մը պատմութիւնը պէտք է դայ տեղաւորուի եւ, ժամանակին հետ, իր լինելութեան բուրգը բարձրացնէ: Այլապէս, այդ աշխարհագրական վայրը պատմութեան համար կը մնայ պարզապէս անմը, կամ շատ շատ, տարանջման, քրտնգիրքի ճամբայ մը:

Հող մը Հայրենիք չի՛ կրնար դառնալ, եթէ ժողովուրդի մը երկարատեւ պատմութիւնը չկերտուի իր վրայ: Եթէ ան պատմաանդանը չզառնայ ցեղային հաւաքականութեան մը իրար վրայ դիպուող օրերուն, տարիներուն, դարերուն, բոլոր տեսակի ապրումներուն: Եթէ իր վրայ ցեղի մը կամ քանի մը ցեղերու պարզ հաւաքականութեանն էտք, չըստեղծուի ազգ մը, ազգային անցեալ մը, ներկայ մը: Եթէ չկարենայ յենարանը դառնալ տակաւ այդ ազգին վաղուան եւ ապագայ հեռանկարներուն: Եթէ, վերջապէս, ինք եւ իր վրայ ազգ դարձած հաւաքականութիւնը չներթափանցեն դիրար, չընկալեն լիո՛վին:

Հայրենի Հողին դոյութիւն աննին ու կերպարանաւորութիւնը հետեւեալ փուլերէն կ'անցնին, հասնելու համար հայրենիքի բառի իմացման ներկայ լայն առումին:

1. Սկիզբը, որոշ հաւաքականութեան մը նախընտրած վայրն է ան, որուն համար այդ հաւաքականութիւնը տեղաւորման սարսափելի կոխնեք կը մղէ, զոր

կու տայ, նախընտրութիւնն ու հարազատ մեռելներուն գերեզմանը՝ սեղը կը գարձենն աւելի թանկագին:

2.- Տեղաւորման կախմերէն ետք, որոնք կարճ չեն տուեր ի հարկէ, շինարարական միզն է այս անգամ, երկարատեւ ճիշդ նորէն այդ նոյն հաւաքակառուցեան, որ կը մտերմանայ ու կը խանրի այդ հողին ու անոր կեանքին հետ: Պատերազմ ուրեմն եւ ապա խաղաղութիւն եւ աշխատանք: Արեան կաթիլներով հողին կապուած հաւաքակառուցեանը՝ կը կապուի ապա այդ հողին, զբրտելէ ժառուր կաթիլներով, աշխատանքի արդասարեւ հեռով մը: Քրտինքով, կապը ընդմէջ մարդուն եւ գինք պահող հողամասին, աստիճան մը եւս կ'ամբաստայ: Կ'ըլլան փոխադրեցութիւններ: Հողը, իր պայմաններով ու բնական անգիտակից գորութեամբ կը թափանցէ իր վրայ ապրողներուն կեանքին մէջ, կ'իշխէ ապրողներուն վրայ, իսկ, իրենց կարգին հողին վրայ ապրողները գիտակից ուսով մը իրենց բազումն ու խելքը կը գործածեն, ձեւափոխելու եւ մասնաշատուկ դիմադիր մը տալու համար իրենց սիրած այդ հողամասին: Պարզաւոր եւ յաւիտենական դաշինք մը կը կընքեն մարդկութեան մէկ կտորը եւ բնութեան մէկ կտորը: Գաշինք մը՝ հարուստ եւ կոյր անգիտակիցը - նիւթը - մէկ կողմէն եւ գիտակից ու ստեղծագործ կամբը՝ միւս կողմէ:

Սկիզբը, ռազմադաշտ մը կար միայն այդ հողին վրայ, թափուած արիւն եւ գերեզման: Այսինքն՝ հայրենիքի մը ընտեղման ստալին արարը, արարքը: Նիւարար բազուկը, զբտինքն ու խաղաղութեան բերած խոնջէնքը՝ հայրենիքի ըստեղծման երկրորդ արարն են, ժամանակի սահմաններն հետ լծորդուած երկրորդ եւ աւելի բարձր քայլը: Մնալու եւ կապուելու աւելի զօրեղ սէր մը, զօրեղ կամք մը: Գերեզմանին կողքին՝ տունը, պալատը, ինքնապաշտպանութեան բերդը, պարիսպը, աշխարհին հետ հաղորդակցութեան համար շինուած կամուրջը, կազմուած կարուանը, ջուերդան վրայ

նետուած լատարը, նաւը եւ երկինքին ու անտեսանելի աստուածներուն համար նետուած ուրիշ կամուրջ մը՝ - մեհականը, եկեղեցին ու վանքը, որուն մէկ ասփին վրայ մարդն ու իր հայրենիքը կանգնած: Են, իսկ միւս ասփին վրայ մարդն ու իր հայրենիքը պահպանող, ամէն ինչէ վերկող աստուածները:

Այսպէս, հայրենիքը, իր իմացման երկրորդ հանգրուանին մէջ, հողին արբուած պատերազմական մեռել չէ միայն, այլ այդ հողին վրայ կատարուած կեանք, գիւղ ու քաղաք: Սեփական քաղաքակրթութիւն:

3.- Բայց միայն այսքան չէ՝ հայրենիքը, այսօրուան ստուգով: Աւելի է քան այսքանը: Ըսել կ'ուզենք՝ հաւաքակառուցեան մը թափուող արիւնն ու զբրտակները չէ միայն: Ու միայն ժամանակի սեւտղութիւն չէ: Միայն այսքանով կերտուած հայրենիք մը թերի՝ հայրենիք մըն է, սկալը հայրենիք մը: Բարեբախտաբար, ան կ'ամբողջանայ իրրին իմացում: Կ'անձի, կը Խորանայ:

Երկար ատեն իրարու հետ ըլլալով, նախկին պարզ նախընտրութիւնը կը փոխուի արդէն հաւաքակառուցեան կողմէ անհուն գորգորանքի՝ հանդէպ իր հողին: Կը փոխուի անհուն սիրոյ, պաշտամունքի հետ շփոթուող եւ զժուար սահմանելի զպացումի մը, Հող ու հաւաքակառուցութիւն, ժամանակի ընթացքին, կը ճանչնան զիրար, կը շարժարեն ու կը պաշտպանեն զիրար, կ'ապրեցնեն, կ'աճեցնեն ու կ'արժեւորեն զիրար: Կը խօսին իրարու հետ: Կը դուշակեն զիրար: Նոր ձեւի լինելութեան մը մէջ նոյնատարու կարծես փափաք մը կը ստեղծուի իրենց մէջ: Հողը կը կորսնցնէ տակաւ իր խոպանութիւնը, նախնականութիւնը, վայրենութիւնը: Կը մշակուի ու կը դառնայ հայրենիք:

Կը կորսնցնէ ապա մարդը իրրին հաւաքակառուցութիւն, իր ազիտութիւնը, նախնականութիւնն ու վայրենութիւնը, կը մշակուի եւ կը դառնայ ազգ: Կը կազմակերպուի, կը քաղաքակրթութիւն: Իր հողը գինք կ'ուզէ այնքա

աւելի ատրտեր կարծես: Ու ազգը, ինչ եւս, կ'ուզէ իր Հայրենի Հողը տեսնել ատրտեր եւ հարուստ, աւելի պայծառ տեսիլքի մը մէջ: Իւրաքանչիւր մարդ ազգի մասնիկ ըլլալէ ետք, կը Հայրենանայ, կը դառնայ կտոր մը շրջուն հայրենի Հող, Հայրենիքի մէջ ըլլայ այնու կամ ոչ: Իւրաքանչիւր փշուր Հող իր Հերթին, ազգի մասնիկ կը դառնայ:

Այսպէս, Հողը, իր մակերեսի կազմութեամբ, իր կլիմայով, իր արեւով ու երկինքով, իր ակրակներով ու նոր կառոյցով, իր վրայ բնակող ազգին կեանքի որոշ եղանակ մը, ապրումի եւ զգացումի որոշ կէտով մը կու տայ հեռզհետէ, տեսակ մը մասնաւոր գիծ եւ ուղղութիւն՝ անոր ներքին ուժերուն եւ ստեղծագործ կամքին: Կ'ուզէ կերպով մը, գոթն տեսնել ըստ պատկերի իւրում: Ազգը, միւս կողմէ, իր մեծ իղձերուն ու մեծագոյն իտէալին պատկերով Հայրենիք մը կ'ուզէ ստեղծել, իր սաքերուն տակ եղած հողէն: Զիրար ծնելու, գիրար ստեղծելու կամ վերաստեղծելու խորհրդաւոր եւ տեսական ճիշ մըն է ասիկա երկուտեք: Հոս, այլեւս, Հայրենիքը, իր Հողով ու վրայի մարդկային բազմութեամբ՝ արարչական անք մըն է, արեւելեական կլիմայով արարողութիւն մը, բարձրագոյն լինելութեան ձգտող որակ մը:

Այս այսպէս է, որովհետեւ բազում պարհերու համակեցութեամբ մը, Հող եւ ազգ՝ գրեթէ դազանիք չունին իրարու համար: Զիրար սիրած եւ զիրար պատուանակած են շարունակ: Կրած են իրարու մասն ու կեանքը, տեսիլքը, յոյսը, կարելիութիւնը: Մէկը միւսին իրականութեան ու երազին վայրն են, պատեբազմին ու փաղաղութեան վայրը, ուր քաղաքներն ու տիրութեան վայրը: Ատուածներուն վայրը: Ազգ եւ Հայրենի Հող՝ զիրար կը սկսին եւ զիրար կը շարունակեն: Ձեռք մէկը, եւ միւսը չըկայ: Երկուքը, ազգ եւ Հայրենիք, եղած են ամսամեայ բան, ու նաեւ յաւիտեանական բան, մանաւանդ, երբ զանազան

բարձր մեկերով խօսիլ սկսած է Հողին՝ մեռելն ու խելքէն ետք: Եղած են՝ փրկչող շէնք, բայց շէնք կերտելու շփյլո՞ղ ոգի: Եղած են՝ քանդուող կամուրջ, բայց կամուրջ Հաստատելու անբակտիկ կամք: Եղած են, անցաւոր պատերազմ, բայց ապատութեան անանց շիւղաղնեբազութիւն: Մոռցուող խօսք, բայց անմոռանալի բանաստեղծութիւն, անմոռանալի երգ, անմոռանալի հեքիաթ: Ու տակաւին, անտալ քար՝ եւ բոլորովին բացարձիկ ճարտարապետութիւն: Դիւրակործան տանար եւ անկործան հասարակ, անլուրի զանապատուն: Գոցուող զպոք, փակուող սկուճը, ծալուող դրօշակ, բայց ուսման, դաղափարի եւ անկասութեան մշտաբաց, մշտաբաց ու մշտանաճան կասող: Նոյնացած են, ազգ եւ Հող: Զիրար եղած են, անանջատելիութիւն: Այո, իրերախառն են, զիրար հաղած են ազգ եւ Հայրենիք: Նիւթական իրողութիւններէ սկիզբ առնելով, անոնք, երկուքով մէկ, կը յանգին Հոգեկան բարդ իրողութեան մը, կազմելու համար ի վերջոյ մարդկային արժէքներու ամբողջութիւն մը, միութիւն մը:

Եզրակացութիւն:— Հայրենի Հողը կամ Հայրենիքը՝ աշխարհադրական որոշ սահմաններ ունեցող տեղ մըն է, ուր ցեղ մը կամ ցեղեր՝ ժամանակի ընթացքին ազգ կը դառնան, պետութիւն կը ստեղծեն, տէր կը դառնան զիրի եւ զբականութեան, արուեստի եւ դիտութեան: Այդը կը կուրի վասն Հայրենիքի եւ ազգի հաւաքականութեան, շինարարութիւն կ'ընէ: Կ'ունենայ իր պատմութիւնը, մըշակոյթն ու քաղաքակրթութիւնը: Անցեալին վրայ ամուր կոխած՝ կը հետապընէ ապագան:

Բազում մարդերու, բազում ու քաղցըր ստուերներու, բազում յոյսի եւ բարոյում հնարաւորութեանց վայրն է Եզրն այն մի պատառ՝ որուն անհունը միայն մեղմով կը լեցուի ու փոխաբէն կը լեցընէ անհունը մեր Հողիններուն:

ԵՒ. ՊՅՅԱՅԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հայրենի հողին եւ հայրենի ժողովուրդին կազմութիւնը եւ անոնց փոխարարութիւնները սահմանող Պոյանեանի խօսքը էթէ շարունակէնք, կամ թրւենք դարերով նոյն հողին կազուած տունալ ժողովուրդին իմացական եւ հոգեկան արտայայտութիւնները՝ արդէն հասած կ'ըլլանք հայրենի մշակոյթին, որով նաեւ ազգային գրականութեան իւրայատուկ բնոյթին:

Գրականութիւնը աւանդութիւն է, բարք է, աշխարհը բմբռնելու կերպ է, զգալու եւ ապաւորուելու առանձին եղանակ, սիրելու, տառապելու, որոնելու իւրայատուկ ձեւ է եւ այդ ամէնը ձեւակերպող եւ ամէնուն ուժէն կենդանացած լիզու: Այս մասնայատուկութիւններէն մէկը կամ միւրը անխուսափելիորէն կը տիրապետէ գրական երկին եւ կը ճշդէ աւոր պատկանելիութիւնը: Սէրը համամարդկային սպրտած մըն է, բայց Պելլըճիբաշի համաշխարհը աւարտած Գ. Վարուժանի եւ իրեն ժամանակակից Պելլըճիբաշի Վերհարնը նոյն ձեւով շին սպրբիք սէրը եւ ոչ ալ նոյն ակնարկով կը նային սիրոյ առարկային:

Արեան եւ մշակութային ժառանգութիւնները կենսական են գրականութեան մէջ:

Աւանց մանրամասնելու ըսենք՝ որ առանց անգլիացի ժողովուրդին կարելի չէ Եէյքսփիրի մը գոյութիւնը բմբռնել, Տանդէն՝ առանց Իտալացիներուն, Կէօթէ մը՝ Գերմանիայէն դուրս եւ Նարեկացին՝ առանց Հայ ժողովուրդին:

Գրականութիւնը կը կրէ ազգային տեսակարար դրոշմ մը եւ իբր յաջողութիւնը միշտ պայմանաւոր եղած է այդ շաղախին ներկայութեամբ: Այս մտածումը հիմնաւորելու համար, թերեւս հարկ չկայ մեր հին գրականութեան է-

ջերուն կամ օտար գրականութեանց մէջ երկարօրէն թափառելու: Հայերէն լեզուով մշակուող անմիջական գրականութեան վրայ նետուած արագ ակնարկ մը՝ բարարար պիտի ըլլայ, կը խորհինք, հարցին էութեան մօտենալու համար:

Մեր այսօրուան գրականութիւնը կը մշակուի երեք թեւի վրայ. ա) Հայաստան, բ) Պոլիս, գ) ազատ աշխարհ:

Եւ որովհետեւ կեանքի տարբեր պայմանները ակնբեր են այս երեք աշխարհներուն մէջ, տարբեր եղան ու տարբեր են նաեւ մշակուած գրականութիւնները: Հայաստանի մէջ մշակուեցան միջազգային նիւթեր եւ ազգային նիւթեր: Պոլսով մէջ միայն միջազգային նիւթեր:

Իսկ արտասահմանի մէջ գրիթէ ամբողջութեամբ ազգային նիւթեր:

Ամէնուն ծանօթ է, որ վերջին քառասուն տարիներուն ազգային միջավայրին զուրս գալու եւ միջազգային նիւթերով գրագելու օրակարգ մը ներկայացուեցաւ Հայաստանի մեր գրողներուն: Այդ ուղղութեամբ կատարուեցաւ մեծ փորձ մը, որ միայն թուով մնաց եւ դժբախտութիւն քնաւ չեղաւ: Կ'ակնարկենք մեր հայրենիքին մէջ փողով եւ թմբուկով առաջադրուած եւ միջազգային խորքի մը անունով հրապարակ նետուած ծրարագրեալ մարզանքներուն: Արդ, մեկնելով իրենց իսկ գնահատութիւններէն, կը նկատենք այսօր, որ այդ անունով յաղթական գործեր չկան մէջտեղ, այլ զկայ յաճախ թուով ու թանաքս: Կա՛յ՝ զանկիրք եւ անյացում, անկիրք ու անվախճանք գրականութիւն մը: Միջազգային նիւթերը, ուժերու եւ ժամանակի վատնում մը արժան են մեր գրողներուն եւ բարախուն ոչինչ կտակած են գեղեցիկ գարութեան մնայուն բաժնին:

Ինչ որ ունենք մեր հայրենիքի վեր-

ջին շտապանստեղծելիքը քրական ճիշդին իրեն ապրող բաժին, մեզ հետաքրքրող եւ ուրիշներուն իրեն մե՛րը ներկայացընելիքը գործ՝ միշտ կը յենու ազգային խորքի մը վրայ:

Աւանց ազգային յատկութիւններու օգտագործումին, անհնար է գրականութեան մը ծաղիկման կարելիութիւնը: Գիրք կը գրուի հարկաւ, բայց գրականութիւն չի ստացուիր: Հայաստանի մէջ ատոր ախտը հետեւանքը տեսանք: Գրեթէ նոյն պատճառով, ազգային կեանքը արդիւոյ այս անգամ տարբեր վարչակարգի մը պատճառով՝ նոյն երեւոյթը կը ներկայացնէ այսօր Պոլսահայ գրականութիւնը, Պոլսահայ գրականութեան բանաստեղծական ճիւղը մանաւանդ: Թե՛րեւս մեր լեզուով երբեւեցէ այնքան տնորոշ եւ անկնիք բանաստեղծութիւն չէ գրուած, ինչպէս գրուած է ու կը շարունակուի գրուիլ այսօր Պոլսոյ մէջ: Ըսինք որդէն, այս անարեւն ու դիմազուրկ կուտակումները ազգային կեանքի պատեմք մը կու գան: Մեղադրանք մը չէ որ կը բանստեղծենք: Կ'ուզենք հասկնալ ու բացատրել պարզապէս:

Պոլսահայը խղուած է մեր պատմութեան հետ, մեր երկկին հետ, այսօրուան հետ: Ո՛չ մեր պատմութիւնը կը ճանչնայ, ո՛չ գրականութիւնը ամբողջութեամբ, ո՛չ Հայաստանի առօրեան եւ ոչ ալ մասնակից է մեր ներկայ տաղանայներուն: Օրաթերթային հայերէն մը խօսելէ եւ եկեղեցի յաճախելէ զատ՝ կապ չունի ազգին հետ: Իր կեանքին միւս մասը յատկացուցած է անտեսական հետապնդումի մը եւ իր գրականութիւնը մեծ առիտով մէկ արտայայտութիւնն է բնագրական այդ մղումին: Կը գրէ ու գրականութեան մասին կը յայտնէ այնպիսի կարծիքներ, որ կարելի է դիւրութեամբ շփոթել զինք՝ որեւէ անդիմադիմ աշխարհաքաղաքացիի հետ, ազգային մշակոյթ ու լինելութիւն չունեցող եւ ամէն հոյի ենթակայ միջուկ իսկ թուրքին հետ:

Իւրաքանչիւր ազգ, իւրաքանչիւր անձի՝ պէս ունի՝ սեփական խառնուածք

մը, ուրոյն անհատականութիւն մը, որով կ'ապրի եւ կը պարտադրէ ինքզինք: Պոլսահայ գրականութիւնը զուրկ է այդ կենսական յատկութենէն: Ատոր համար է, որ հոն գրիչ բռնողները շատ զգայուն են սարէն ու ձորէն եկող անհեթեթութիւններու առջեւ:

Ջորաւորները կը պարտադրեն իրենց անհատականութիւնը: Թոյլերն են միայն, ինքնավատահոթենէ զուրկ մարդերը, որ երդում կ'ընեն այլոց անունով եւ փոխանակ հարազատ մթնոլորտի մը մէջ ըստեղծագործելու՝ շարունակ կ'արձագանգեն անհարազատ ձայններու:

Թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Պոլսոյ մէջ միջազգային բնոյթ կրող այդ նիւթերը չյաջողեցան գրականութեան բարձրանալ, անոր համար անշուշտ, որ անոնք մաս չեն կազմեր գրողին ներքին կեանքին, հայ մարդուն քառասունհինգամ հոգեբանական կառուցուածքին համապատասխան երեւոյթներ չեն, երկարօրէն երազուած եւ երկարատեւ ճիգով ու տանջանքով զտնուած լուծումներ չեն, այլ տեղ մը պարտադրուած են քրտորէն եւ ուրիշ տեղ մը ցոյցի հանուած շփոթահար մարդու անգիտակից խանդով:

Հոս կը ծագի ուրիշ հարց մը: Կը հետեւի թէ լեզուն առանձինն չի բաւեր գրականութիւն մը ապրեցնելու համար: Լեզուն՝ բառարանային իր անկենդան վիճակէն դուրս գալու եւ գրական գործի մը ընդհանուր բովանդակութեան ի՛ր բաժին կենդանութիւնը բերելու համար, անհրաժեշտ է, որ կեանքին խառնուի, նոր երանգներով հարստանայ, ստանայ նոր բովանդակութիւն եւ շնչաւորութիւն անմիջական ցեցումներու կենարար աղդեցութիւններէն:

Լեզուն՝ լաւագոյն պարագային՝ կըրնայ առաջնորդել կէս յաջողութիւններու միայն:

Գրողը իր ետին պէտք է ունենայ ազգային ժառանգութեան ամբողջ գուժամարը, առաւել՝ նոյն այդ ազգին նոր տաղանայներուն հաղորդակից զգայարանք մը, կարենալ անհատականացնելու համար իր երկը:

Շեշտը ազգային ենթահողին վրայ գնելով՝ ի հարկէ մերժած չենք ըլլաք նոր հարցերու եւ ոճերու նպատար, ազդեցութիւններու բաժինը: Ազդեցութիւնները, սակայն, պէտք է նպատակն ցեղային անհատականութեան զբաւեւրում մինչև Հակառակ պարագային յաւելում մը բերելու փոխարէն՝ կ'այլանդակեն եղածը, ըլլալիքին բնոյթը: Ստացուածը կ'ըլլայ տեսակ մը թարգմանութիւն եւ ոչ թէ լիարժէք երկ:

Մարդը առհասարակ ժառանգութիւն մը կը բերէ իրեն հետ, կը կրէ մասնաւոր արեան մը խուլ կարկաչը եւ այդ մթնոլորտին մէջ ինքզինքը իրագործելու ճակատագրական տենչ մը:

Այս տուժում է, հարազատորէն անելու եւ բեղմնաւորուելու համար, իր ճակատագրին լուծումը դիւրացնելու համար վերջնական, որ մարդիկ կը դուրս դուրան հայրենիքին վրայ, կը փնտռեն ազգային հողը, ազգային կեանքը, այն միջավայրը՝ ուր նախապէս ապրած արեւակիցներուն ճիշդ վառուած է նոյն ճակատագիրը լուսաւորող պղտիկ լոյս մը կայ եւ ամբողջ ջահը վառելու եւ ամբողջապէս իրագործուելու կոչը: Հայրենիք կ'երթան մարդիկ այս մղումով, նոյն շարժառիթներով կը բերեն հայրենիքը իրենց մօտ, տաք կը պահեն շօշափելիին պատկերը, անշօշափելիին տեսիլքը, անոնց ներկայութեամբ ու մասնակցութեամբ անեցնելու համար իրենց խօսքը, երգը, գիծերը, գոյները, ամբանալու համար անոնց մէջ, անհատականացնելու համար պանոնք:

Ազգային նկարագիր կրող նիւթերը, հարկաւ իրենք իրենց մէջ առած, առանձին նշանակութիւն մը չունին գրականութեան մէջ: Թնդազգայրի մը կարօտը, հայրենիքի մասին տեսնուած երազ մը, Արարտը, Արաքը, Վանը, Թուրքին ուղղուած քանի մը բերան հաշտոյնանք՝ գործի մը մէջ, իրենց ստեղծական ներկայութեամբ, բան մը չեն նշանակեր տակաւին, անսաղանդ գրող մը մէկ վայրկեանէն միւսը աս-

ղանդաւոր չեն դարձնէր, ճիշդ է, բայց դիտուած է, որ նոյն նիւթերը սուլի կը շեշտեն, առասել էստ կ'արդիւնաւորեն տաղանդաւորի մը վաստակը: Որովհետեւ դրողին ներքին կեանքին հետ կապ ունեցող միջավայրը, անոր բնութեան երեւոյթները՝ հողը, լուսը, ծաղիկը, երկինքը, գիշերը՝ կը մասնակցին անոր ներքին ուժերուն յայտնաբերումին եւ կ'երաշխաւորեն արդիւնքը արտփող գորութեամբ:

Մեկնելով այս ճշմարտութենէն, դիւրին կ'ըլլայ այլեւս ըմբռնել Ափիւսքի գրականութեան նկարագիրը, որ շեշտորէն ազգային է: Մեր առջին տակ ազգային հող շունենալու պարագան պատճառ մը չէ, որ չզգանք հողին ուժը, որ դարձեալ, իր խորագոյն իմաստին մէջ կ'ընդգրկէ, գոնէ՛ մեր մտքին մէջ, ոչ միայն շօշափելին, այլ անոր անունին կապուած ժողովուրդին ողջ մը շահոյթը:

Ափիւսքի գրագէտը այդ հողին՝ ու հողին կապուած մշակոյթին արդիւնքն է:

Հայրենի հողը տեսած չըլլալու փառար անպայման տկարութիւն մը չի բերեր գործին: Գրագէտը ձեւը կը գտնէ իր հողին խոփող նիւթը շօշափելի դարձընելու: Հողին համար անտեսանելի բաներ չկան: Ձեռք կրնար վերջապէս միտքը, երեւակայութիւնը, հոգեբանական միւս ազգակները մէկ կողմ ձգել եւ մեր անձին լուսանկարչական յատկութիւններուն ապաւինելով գրականութիւն մը կենդանացնել: Երբ դարերը պատուող թափանցումներ կ'ընենք եւ «Վարդաօնմէ» կը վերահենդանացնենք, «Մեքսիկոյ Մաշտոց», «Պայ թագաւոր», «Ստեփաննոս Սիւնեցի», «Միսիսոսը Ապարայկեան» եւ ուրիշ պատմական գէժքեր կ'անջատենք իրենց ժամանակաշրջաններէն եւ կը իրանենք մեր օրերուն, պատճառ մը չի մնար այլեւս, որ ազգային հողին ու ապրումին կապուած այսօրուան հրատապ հարցերը կեանք չդառնան մեր հողիններուն մէջ եւ դուրս մնան գրականութիւն մը շահախելու ուժէն:

Գրականութիւնը հողի եւ մտքի դործ է, ներքին հրամանագրով մեւ առանձնիկ եւ զբաղեցող արտայայտիչն է ամէնէն առաջ ու բոլոր պարագաներուն գինքը ծնող ժողովուրդին վերիվայրում-ծերուն յաղային կեանքի մութ ու պայծառ կողմերուն:

Միևուրի գրողէն ալքեցալ իր ժողովուրդին հետ եւ անոր պէս, եւ ասոր համար իր գրականութիւնը ամէնէն առաջ ու հապէս կըրուստին անթած ցուն է, նահանջն է, տեւելու ճիշդ, բոգոք, աղաղակ, հայհոյանք: Աղաղային կեանքէն զուրս ինկած իր բոլոր ընդգրկումները, տիրաւորները, տեսարանները, շարժումները նոյն խորքը ունին զարձեալ, օգտագործուած են իրեն հակադրութիւն, ընտրուած են ազգային այս կամ այն յատկութեան զբաղմով: Երբ անկեղծ չէ գրաղէտը՝ ասորքեր չի կրնար ըլլալ իր վերաբերումը:

Օժտուած ըլլալ գրական կարողութեամբ եւ բաց պահել զգայարանները ցեղին մէջ կուտակուած մեծ յուզումներուն առջեւ, ասանդութիւններուն, աստուածներուն, խորհրդանշաններուն առջեւ եւ անմիջական տաղանպներուն դիմաց: Ամբողջ խնդիրը այս է: Համաշխարհային մեծ դէմքերը այս ճամբով անցած են գրականութեան մէջ եւ համաշխարհային գրականութեան դռներէ ներս մտած են զարձեալ այս ճամբով: Բոլոր մեծերը՝ իրենց ժողովուրդներուն մէջ առաքինութիւնը, մտայնութիւնը կամ բնազդը գերազանց միջոցներով անձնաւորած ըլլալու հանգամանքով մըն է, որ եղած են մեծ ու հասած միւս ժողովուրդներուն համարումին:

Մասնաւորին մէջ ընդհանուրը, ազգայինին մէջ համամարդկային արտփը: Բարձրորակ գրականութիւնը կը սերի այս որոնումէն, ընտրութենէն ու հաւատարմութենէն:

Օտարները ձգենք զարձեալ եւ նորէն մեզմէ առնենք օրինակ մը, առնենք «Հոկտեմբերեան երգիչը», Եղիշէ Զարենց: Զարենց երգիչ Հոկտեմբերեան յեղափոխութիւնը, Հոկտեմբերեան յեղափոխու-

թիւնը երգի վերածուեցաւ իր գրչին տակ եւ արձայանդեց ողջ աշխարհի մէջ: Այս յաջողութեան ակունքները, մեղի կը թըւէի, թէ զարձեալ աղաղային էին: Զարենց՝ Մարտի աւետարանը կարգալէ առաջ եւ Լենինի անունը յսելէ շատ առաջ՝ ապրած էր յեղափոխութիւնը, մասնակցած էր յեղափոխութեան, եղած էր կամաւորական դուռը մէջ: Կազմութեան այդ շրջանին իր մէջ կուտակուած յեղափոխութեան տարերքն էր, որ պոռթկաց Հոկտեմբերեան յեղափոխութեան օրերուն: Ըսել կ'ուզենք Հոկտեմբերեան յեղափոխութիւնը բանաստեղծին համար առիթ մըն էր եւ ոչ թէ անուշիչ պատճառ մը: Մէկ օրէն միւսը մարդիկ յեղափոխութեան եւ այն ալ օտար յեղափոխութեան երգիչ չեն դառնար:

Գրականութիւնը կեանք է ու կը հըպատակի կեանքի օրէնքներուն: Հըն եւս անունը առնել մը կայ եւ ապա անունը տալ մը: Ստեղծուել մը կայ եւ ապա ըստեղծել մը: Կառուցուել մը կայ եւ ապա կառուցանել մը:

Այսպէս եղած է հայ գրաղէտին պարագան, ամէն տեղ, բոլոր ժամանակներուն: Իր ժողովուրդին հետ եւ իր ժողովուրդին պէս: Միշտ ազգային հողին ու ժախոյթին մօտ: Հաւատարիմ իր բընոյթին: Իր բնոյթին հաւատարիմ ծառի մը պէս: Մասի մը օրինակով:—

Ուր ալ նետես ծառը, կանդուն մընալու պարագային, պիտի տայ իր բնոյթին համապատասխան պտուղը: Խնդրական կրնայ դառնալ պտուղին առողջութիւնը միայն, որովհետեւ ծառը եւ իր բնոյթին համապատասխան կլիմայ կ'ուզէ, հող, արեւ, ջուր, հով՝ առողջ պտուղին համար: Հայ ժողովուրդը եւ անոր արտայայտիչը եղող գրողէն, Հայաստանի մէջ թէ արտասահմանի, այդ ծառն է, որ կարօտով ու տառապանքով կը փնտռէ իր արմատը կենսաւորող հարգատ հողը:

Հայ գրականութեան առջեւ զբաղման առաջին ու կենսական խնդիրը այս է հիմա:

Գ. ՄՆԱԳԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂ

Մեր խօսքին հիմնական դադարաբեր աչք է, որ զուտ ազգային դրահանութեան մը յղացքը ժամանակավրէպ է եւ թէ Մփիւտքը, կտրուած հայրենի հողէն ու ցեխէն, իրուած դարակուտակ անցեալի մը բեռէն ու մղումէն, ցիր ու ցան եւ անհեթեթ, կատարելագէտ կարող է բարձրորակ դրահանութիւն մը ձեռնել՝ որ ըլլայ նաեւ ազգային: Այս իրազոր-ծումին համար, Հայրենի Հող կոչուած բարոյական ու իմացական իրողութիւնը անհրաժեշտ չէ, ու կրնայ նոյնիսկ վնասակար ըլլալը:

Նախ՝ ճշդում մը: Գրահանութիւն ու մտաւորական յղացքները հոս անհր-ւած են իրենց սեղմ, հայկական իմաս-տով, մնալու համար նիւթին պարտա-դրած զգացական շրջագծէն ներս: Եթէ այդ բաներուն տայինք իրենց բուն սահ-մանումը, նիւթը բոլորովին կը փոխ-ուէր:

Գրահանութեան մը գոյութիւնը պայ-մանաւոր է յոր ազգայնորու ներգոր-ծութեամբ: Առաջինը, ամէնէն կարեւո-րը, ճշակութային, վերացական արժէք-ներու կենդանի ներկայութիւնն է: Ար-սինքն, ճամարութիւն, դեղեցկութիւն, անկեղծութիւն ու իմացականութեան բո-լոր պահանջները դերադասութիւն պիտի կենանք, նիւթի, ողորմիչ ճառախօսի ու կօշիկի մեծաբանակ վաճառականի մա-կարդակի արժէքներէն, պէթ մտաւորա-կան ընտրանքին համար:

Երկրորդ արդար, օտար ազդեցու-թիւններու ներկայութիւնն է: Ձորոր-դը՝ բարձրորակ քանի մը միաբերու ծը-նուէր: Աւ վերջապէս, ժողովուրդ մը,

կամ նախընտրաբար զրոյին ժողովուր-դը:

Ահաւասիկ ուրեմն, չորս պայման-ները: Այլ հարց կը ծագի՝ հայրենի երե-ւակայական հողի մը կամ ազգային կոչ-ուած այլապէս մահկանացու, առնուազն մահամերձ դրահանութեան մը: Կ'արժէ քիչ մը աւելի մօտէն քննել իւրաքանչիւ-րը:

Առաջին տարրը, ճշակութային Յօր-մերու արժեւորումն է: Գրահանութիւնը ոչ ժամանց է, ոչ ալ դեղահատ, որպէսզի յուսրած ամբոյններ կրանաւէտ շօշափե-լի երջանկութեան մը մէջ թմբին ու բա-պասին մահուան: Այս պարագային՝ դառնան իրենց պայտերուն օճախը ու Հոն յարունակին իրենց մարդ էակի անիծեալ ու անիմաստ գոյութիւնը: Յետոյ, ինչ-պէս ակնարկեցինք քիչ վերջ, գրահան արժէքը աղերս յունի ժողովուրդի ու ա-նոր ղեկավարներու, անոր ախրժակնե-րու արժէքին հետ: Կեանք ու արուեստ իրար հակադրուած եզրեր են: Այնպէս որ մտքի արժէքները, զրոյին համար՝ ամէն բանէ բարձր են ու այս պարժա-նով միայն ան արուեստագէտ է: Ծըշ-մարտութեան փնտառքն է ան ու անձ-նական նահապետի մը կ'իրազորէ: Կեանքի, ջիղերու եռուղեւին ժամանա-կաւոր, անհեթեթ ու կիսատ բնութիւն դէմ ու անկէ վեր՝ մարդ էակին դերա-գոյն: Ճիշդ է (կրօնէն ու միութիւնովէն դատ) կատարելութեան մը Հասնելու: Բազմութիւնները պիտի մուրան ու Հայ-հոյն, պիտի երազեն ու մեծան, օս-ոյն, ձգտին փառքի ու անմահութեան, սիրուը դրամի պիտի փոխեն ու Հարստա-

նան: Գրագէտին համար տարբեր անձաճութիւն ու հարստութիւն կայ, մըթնոլորտի տարբեր բարձրութեան ան կը շնչէ: Մակարդակներու եւ արժէքներու այս տարբերութեամբ է, որ կարելի է գրական կեանք ու մշակութային սպրտմ ստեղծել:

Էլէքթրօնիք այս դարուն ուր մարդիկ ու մշակոյթներ չի՞ք չի՞ք նետուած են ու գիտական միտքը մեր քառակուսի արմատներէն բռնած քառակուսի թաղարներու մէջ կը սահմանափակէ, անհրաժեշտ դարձած է շեշտել թէ մշակոյթը ազատագրութեան հաղուազիւտ ոտքի սը սքալարներէն է: Այսինքն գրողներ ու մշակոյթներ իրար կոնսակ պէտք է տան ու կու տան անկախաբար այն իրողութենէն, որ իմացական տոռուտութիւն մը կայ, դադարափարներու փոխանակութիւն մը կայ առանց որու արուեստ ըսուածը Գնակ մը կերակուրի խմբագրականի կը վերածուի ու հազիւ փոր մը կը կշտացնէ:

Այնպէս որ, որեւէ ազդեցութիւն, ուրիշ որ դայ ու ինչ մտավիճակ որ փոխադրէ՛ լա՛ւ է: Պօսակցութեան մը ընթացքին, Պրն. Նարդուեի կը յայտնէր թէ մեր արդի գրական կեանքին համար, բանազտութեան գնով իսկ եկած օտար ազդեցութիւնը բարբեր է: Մայրոյնգութիւնը անշուշտ աւելի ցարտուն կը դարձնէ մեր արդի կացութիւնը: Ինքն իր մէջ կամ անցեալի կարօտին դարձած գրականութիւն մը դատապարտուած գրականութիւն մըն է, որովհետեւ եթէ զաղափարները չնորոգուին, կը հիննան, եթէ զպատմներ չճամբորդեն կը տըժուուեն: Թաղաւորական գերդատմաններ ու մեծահարուստ ընտանիքներ որոնք իրար մէջ կ'ամուսնանան, շատ լաւ գիտեն այս իրողութեան ճշմարտութիւնը: Կըրնանք անմարան եղբակացեալ, թէ մտաւորականութիւն մը որ արտագրական պատճառներով կը մերժէ բազուի օտար ազդեցութիւններու՝ կը դաւաճանէ իր կոչումին: Ամէն պարագայի, դժնփակ գրականութիւն մը վտիտ, անուազն տըգիտութեան փոստ է:

Երրորդ պայմանի, բարձրորակ գրողներու մասին շատ քիչ բան կայ ըսելիք: Եթէ գան, կու գան ու կը պարտադրեն իրենց աշխարհաճայեացքը ու երկը:

Շատ աւելի բան լուսինք ըսելիք ժողովուրդի մասին: Թատրոնէն զատ, գրական բոլոր սեռերը, իրենք կը պարունակեն իրենց ռեզոմ-տէք-ը: Զկարգացուի, շհասկցուի, անտեսուի, ուրացուի՝ հետեւանքներ են լուկ գրական կեանքին ու չեն կրնար կշիռ տնննալ անոր ծնունդին ու զարգացման մէջ: Փընտտել ու մանաւանդ դտնել արտաքին պայմաններու մէջ պատճառները գրական երկի մը կամ շարժումի մը կորանքին՝ կը նշանակէ շհասկնալ թէ ինչ է գրականութիւնը: Ժողովուրդի մը գոյութիւնը սակայն, կընայ գրական դեր խաղալ, հայթայթելով արուեստադէտին ազգային մօքիմներ, անցեալէն կտակ մնացած սպրտմներ ու հոգեբանական ճշմարտութիւններ, զորս ան կ'օգտագործէ, եթէ պահանջը զգայ կամ եթէ կը զուգարկուին իր խոսնուածքին: Այ չենք ծանրանար հայրենիքի մը գոյութեան վրայ, որ մամանակավրէպ յղացք մըն է մեր դարուն: Գրողը պիտի տայ ինչ որ ունի դանկին մէջ ու եթէ ազը ու Հայրենիք չեն ներշնչեր դինք, հարցը փակուած է:

Կը հասնինք ուրեմն մեր առաջին եղբակացութեան: Այս շորո պայմաններէն եւ ոչ մէկը անկարելիութիւն է Սփիւռքի մէջ: Կը հասկցուի անշուշտ որ մեզի համար, Սփիւռքը ծովէ ծով ու անկախ իրողութիւն մըն է, տեսակ մը ատճամեայ ճակատագիր ու անոր բնակիչները այնքան Հայ են, որքան որեւէ դարու ու հողամասի: Հայերը:

Արդ, ի՞նչ կարելիութիւններ կան այս վերոյիշեալ պայմանները ստեղծելու Սփիւռքի մէջ:

Նախ՝ մտաւորական մթնոլորտի հարցը: Իր անունին արժանի մտաւորականութիւն մը կեանքի ու արուեստի պայքարէն: Կ'ստնէ իր ուժը: Եթէ Սփիւռքի մտաւորականութիւնը իր մեծ մասով զուրկ մնացած է բարձրագոյն կըթուութեան մը բարիքէն ու նաեւ շարիքէն, ե-

Թէ անոր նիւթական պայմանները շատ փայլուն չեն ու երբեմն ալ տմանց նախաադիբը 90-ական թուականներէն մը նացած հոգաբարձուի մը քմայքէն կախուած է, այսուհանդերձ ան կատարելապէս ի վիճակի է ընտրելու իր արժէքները, իմացականը ու հոգեկանը դերադասելու նիւթականէն: Օրինակ մը տանք: Աէր, երազանք ու ընտելան երգելը, ինքնին, դէշ բան չէ ու եթէ յաջողի՝ արժէք է անկասկած: Պայտը ու պոթուում՝ կրկին յարաբերական արժէք մը ունին: Բայց՝ մտաւորական մթնոլորտ չեն ստեղծեր: Միտքն է, պազ ու անգուժ իմացականութիւնն է, որ տեւական պրկումի, քանսիլումի տակ՝ վառ կը պահէ մշակութային կեանք կոչուածը: Եթէ Սփիւռքի մտաւորականութիւնը ըմբռնէ այս իրողութիւնը, լծուի տարիներ, ըստպատճառ մտանադարանային ուսումնասիրական, պապտումի, դասաւորումի աշխատանքին, իբր նիւթ առնելով մեր վերջին հարիւրամեակի ընկերային, պատմական ու դրական կեանքը, զայն վերադասատելու համար, կամ ձեռնարկէ օտար մեծ հեղինակներու ու դրական շարժումներու հայացումին՝ այն սանն կ'ունենաք այդ մթնոլորտը: Անկարելի՞ բան է այս:

Ասոր առաջին հետեւանքը այն պիտի ըլլայ որ պիտի բացուինք օտար ազդեցութիւններու: Պէտք կ'այ պատմութիւնը վիճայ բերելու փաստելու համար այս ճշմարտութիւնը: Հոն ուր մեր մըտաւորականութիւնը բաց եղած է ուրիշ մշակոյթներու ազդեցութեան՝ հոն ծաղկած է մեր մշակոյթը - Վենետիկ, Վիեննա, Հնդկաստան, Չինաստան, Պոլիս, Քիֆիս, Փարիզ: Մինչդեռ հոն ուր դուրսը է իր մտքի պատուհանները, հոն ալ ամլացած է - Փաւստ, Հայաստան, Ամերիկա, Պարսկաստան ու Միջին Արեւելք: Այսօր, մեր միակ գաղութը որ դոյ ու մութ սենեակներու մէջ չ'ապաստանիր, Պոլիսն է ու հոն է մեր յոյսը, հոն է պիտի ծաղի, հեռու կամ մօտ կէսօր մը, մեր դրականութեան նոր վերածընունդը:

Վերստին շատ բան չունինք ըսելիք մեծ արուեստագէտի մը Թեոֆիլ մասին: Կու դայ, յուսանք...: Ո՞վ հրաւիրատուս զրկեց Արտիանին, Գուրեանին:

Գալով ժողովուրդին, ան կայ՝ իբր թրքախօս բարերարներով ու Փուլպուլիսաներով, իր սրտակեղէք վարժապետներով ու ակումբի պահակներով: Կայ զանգուածը, թիւի ու յուզումի հսկայ շտեմարան: Ու կայ դեռ լիցուս, ապրող ու տաղնապող իրականութիւն:

Ուրեմն, չորս պայմանները իրապօք ծելի են, բան մը՝ որ ամբողջութեամբ կախում ունի մեր մտաւորականութեան կամքէն ու պարկեշտութեանէն:

Հասանք վերջին հարցին: Ի՞նչ պիտի կայ այս բոլոր ըստածին եւ ազգային դրականութիւն ու հայրենի հող յղացներուն միջև:

Ազգային կը կոչենք այն դրականութիւնը, որ ազգի մը զգալու, մասնակցու ու դործելու եղանակներուն դրոշմը կը կրէ: Արդ, եթէ Սփիւռքի կը պակսին այսօր ազգ կոչուելու արտաքին պայմանները՝ ան սակայն ժողովուրդ մըն է: Հետեւաբար եթէ ազգային դրականութիւն չենք կրնար մշակել, կրնանք դէժ հայ դրականութիւն մը ծաղկեցնել հոս ու հոն: Մենք հո՞ս ունինք իրականութիւն մը, հպիւ կրողուած ճակատագրէն ու մենք հայ ենք: Զո՞վ կը խարենք երբ դարձած հարիւր տարի առաջուայ իրականութեան մը ու անոր ստեղծած մարդերուն ու արժէքներուն՝ դրականութիւն մը կը զարգացնենք ու կը յուսակենք զայն ազգային կոչել: Օրինակ, դառնալ հայրենիք ու անկէ ներշնչուիլ կարելի բան է: Բայց մենք ծանր կասկածի տակ կը դնենք այդ ազգութիւն վաւերականութիւնը, մանաւանդ որ ոչ 19-րդ դարու հայրենիքի ոչ ալ ներկայ հայրենիքի ուղեկան ու մանաւանդ դրական արժէքները կը զուգադիպին մեր ներկայի զգայնութեան ու ապրումին: Հայրենասիրութիւնը հոյակապ բան է բայց դրողը եթէ բանէ մը պիտի ներշնչուի՝ այդ պէտք է ըլլայ իր դարը, իր աշխարհը, իր անմիջական ժողովուրդը: Եւ ազգագոյն մաս-

գրութիւնը չունինք որէնք սահմանելու արուեստի մէջ, բայց համոզուած ենք որ միայն այն ձևով կարելի պիտի ըլլայ մեզի Սփիւռքը փրկելու, Պոլիսն ու Հայաստանը կորսնցնելէ վերջ: Մնաց որ իրականութեան մէջ, Հայրենիքն է որ, իր ներկայ պայմաններուն մէջ, իր սնունդը մեզմէ պէտք է առնէ, մեզմէ՝ որ ազատ աշխարհի ազատ մշակոյթին մէջ կ'ապրինք ու կը ստեղծենք: Գծախառնար, Սփիւռքը դեռ այդ բարձրութեան ու խորութեան չէ հասած:

Հետևաբար, իր լայն առումով, ադրբային գրականութիւն է այն զոր կը մըշակեն ազգի մը զուակները: Իր նեղ առումով, զուտ ազգային բառը գրականութեան մը արժէքը չի բարձրացնիր անպարտան:

Նգրակազուցութիւն: Գրականութիւնը ամէն բանէ աւելի տիեզերքի ամայու-

թեան մէջ նետուած ըմբոստացումի անկաշկանդ ճիշերու գումար մըն է: Կեանքը սակայն համակերպումի մեռնարկ մըն է, սակարկութեամբ ու ճարպիկութեամբ իրագործուած: Ու բոլորովին տարբեր, հակադիր են կանոնները կերակրան այս երկու խաղերուն:

Այս պայմաններու տակ, Սփիւռքը առանց Հայրենի հողի ու ազգային հաւաքական, հասարակաց ապրումի, կատարելապէս կորուստ է գրականութիւն մըշակելու: Թէ ո՞ր շափով ազգային կ'ըլլայ այդ գրականութիւնը՝ սահմանումի հարց է: Նիւէ Հայ ենք, ուրեմն մեր գլխոյնքերու վարձը Հայ գրականութիւն կը կոչուի, որ անկասկած աւելի բան մըն է բան ազգային գրականութիւնը: Իսկ եթէ Հայ չենք... Հարցը գոյութեան իրաւունք իսկ չունի:

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ



ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Երեւ զեկուցողներու զեկոյցներէն
 ետք, տեղի ունեցաւ կարծիքներու լայն
 փոխանակութիւն եւ զեկուցաբերներու
 հարցազննում: Որով ետք, հարցապրն-
 դումները վարող Տօֆ. Բ. Փափագեան
 համադրեց եզած որոտայտութիւնները
 հետեւեալ ձեւով եւ հրեկոն փակեց յա-
 բուցումը հարցը եիմնաւորող Ուիլ. Սա-
 րոյեանի «Հայ եւ ես» գեղեցիկ գրու-
 քեան ընթերցումով:

Հողին կը տրուի ժողովուրդին կողմէ ոգեղէն էա-
 քիւն:

Հողի ոգեղէն ազդեցութիւնը կը սկսի հեռումե-
 րը ստագայթել:

*Գրականութիւնը կը շարունակուի՝ Մարզը առանց
 արուեստի ու գրականութեան չի կրնար ըլլալ: Հայ
 գրականութիւնը կ'ունենայ ազգային դիմագիծ՝ որով-
 հետեւ գրողը հայերէնով պիտի գրէ, հայերէնով պի-
 տի մերշնչուի, հայերէնով պիտի հարստանայ այն-
 քան, որքան օտար լեզուներով:*

Ծնունդը ըլլալով հայ հողին, հայ հոգիին, հայ
 լեզուին եւ մշակոյթին՝ հայ գրողը չի կրնար, միայն
 ձեռով ազգային գրականութիւն մշակել: Խորքը եւս
 բնականաբար կը դառնայ ազգային:

Ձեռք միայն ազգային պանելու եզած փորձը ձա-
 յողեցաւ:

Ժողովուրդները իրենց բնական, ինքնաբոլո մը-
 ղումով, բոլորն ալ, կը ձգտին եւ կը յաջողին իրա-
 կանացեմի իրենց դիմագիծը, այսինքն ազգայինը, ազ-
 գային գրականութիւնն ու արուեստը:

*Երանդէն է Հիմնականը. ուրիշ ժողովուրդներու կար-
 գին Հայը աւելի զօրաւոր կերպով կը գգացնէ իր դա-
 րաւար ծարաւն ու դիմագիծը, եւ կը ստագայթէ, ա-
 ւելի եւս պիտի ստագայթէ, որով կ'ապրէ հայ գրա-
 գէտին եւ հայ հողին, այլեւս պիտի չկտրուի, երբ ան
 հայերէն կը կարդայ, հայերէն կը գրէ:*

*Եւ երբ կ'ըսենք սփիւռքի գրականութիւն, կը եը-
 շանակէ սփիւռքահայը կա՛յ. եթէ կայ, պիտի ըլլայ
 մասն իր գրականութիւնը, ազգային յատուկ երանդով:*

Հ Ա Յ Ե Մ Ե Ս Դ

Թէեւ անգլիերէն կը գրեմ եւ հակառակ անոր որ ծնունդնորով Ամերիկացի մըն եմ, ինքզինքս կը նկատեմ հայ գրող մը:

Գործածած բառերս անգլիերէն են:

Միջավայրը՝ որուն մասին կը գրեմ, Ամերիկան է:

Սակայն, ոգին, որ կը ստիպէ գրել, հայ է:

Ուրեմն, հայ գրող մըն եմ ես:

Խորապէս կը սիրեմ հայ գրողներու մեծ ընտանիքին պատկանելու պատիւը:

Հայ ժողովուրդին ազնուականութիւնը, քաջութիւնը, ուշիմութիւնը, խիզախութիւնը, պարգաւթիւնը, հեզմանքը, արտառութիւնն ու անվեհերութիւնը հայարտութիւն կը պատճառեն ինձի:

Այս բարեմասնութիւնները ճշմարիտ բոլոր Հայերու ժառանգութիւնն են:

Անոնք տնուցած են իմ կեանքը սկիզբէն ու ես երախտապարտ եմ:

Աշխարհ երբեք չի կրնար նուաճել ըստի ժողովուրդ մը:

Եթէ գրկուած ենք մեր հայրենի հողէն, աշխարհ մեր հայրենիքը կ'ըլլայ:

Եթէ գրկուած ենք մեր կառավարութենէն, Հայու հոգին կ'ըլլայ մեր կառավարութիւնը:

Ոչ մէկ քաղաքական ուժ կրնայ դաւաճանել մեզի:

Օգտակարապէս ապրելու ըզգնանք գորաւոր է Հայուն մէջ:

Հայուն ուժը քեւերուն մէջ չէ, այլ անհատին սրտին մէջ, իբր անհատ՝ առանձին:

Ատիկա միակ ճշմարիտ ուժն է, որ մարդիկ իբր անհատներ կրնան ունենայ:

Այն ուժը, որ կը գտնուի քեւերուն մէջ՝ ստորագաս ու անարժէք ուժ մըն է: Անասնային ուժ մըն է այդ:

Անիկա անպատուաբեր է քաղաքակրթութեան անձրու համար: Ինչ որ ատիկա գուրի կը հանէ, անարժէք է մարդուն ազնուացման ու բարութեան անեցումի պատմութեան մէջ:

Գալիք տարիներու ընթացքին, նոյնիսկ երբ աշխարհ վայրենութիւններու մէջ մխրճուի, Հայը հարազատ պիտի մնայ այն հոգեկան օրէնքներուն, որ իր ժառանգութիւնը կը կազմեն:

Հայու ոգին գորաւոր ոգի մըն է: Ատիկա չի պարտուիր չար աշխարհով մը: Ընդհակառակն, անիկա պարտութեան կը մատնէ այդ աշխարհը: Այդպէս կ'ըսէ իրեն, բանալով այդ աշխարհը, առանց ապակամելու անկէ:

Հայ եմ ես:

Ուրախ եմ, որ ինչ մը բան, որ շատ եմ եւ ըսելու վրայ եմ, հաս պիտի վերադարձուի այն լեզուին, որուն ոգին ստիպեց զիս յօսելու, Հայաստանի սքանչելի լեզուին:

ՌԻՒԼԵԸՄ ՍԱՐՈՅԵԱՆ

ԵՐԿՈՒ ՄԵՇԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ...

Դիմացի էջին ժրայ կարգացիք Սարոյեանի «Հայ եմ ես» գր-
քութիւնը: Յաջորդ էջին կու տանք նաև նորոգ հանգուցեալ շա-
վահարբալ նեհրուի կտակէն հատուած մը, զոր կրնաք առանց վա-
րանելու վերնագրել «Հնդիկ եմ ես»:

Օտար լեզուով գրող հայ գրագէտ մը եւ օտար դէմք մը ա-
հաւասիկ, որոնք, ինչպէս կը վկայեն իրենց յուզիչ ու համոզիչ
բառերը, անքակտելի կերպով կապուած են դիւրեմք ծնող ժողովուրդ-
ներու հաւատարմարժ գորութիւններուն:

Այդ կապի է, անկեղծութիւնը հաւանաբար, որ բեղմնաւո-
րեց Սարոյեանի տաղանդը եւ սիրելի դարձուց զինք աշխարհին:

Նոյն անկեղծութիւնն էր, որ ծաւալեց նեհրուի համբաւը եւ
զայն դարձուց ողջ մարդկութեան բարեկամը:

Աշխարհի բարիքներէն կուշտ, ծափահարութիւններէն յապե-
ցած, մեծ մշակոյթներուն հաղորդ եւ մեծերուն հետ չափուած
մարդն է Սարոյեան, որ Ամերիկա ծնած ըլլալուն հակառակ եւ մար-
բնի լեզուին հաղիւ տեղեակ ըլլալուն հակառակ՝ հաւատարիմ կը
մնայ իր արեան, կը մնայ անոր մնայուն ունկնդիրը եւ հրահանգ-
ներուն գործադիրը, ինչպէս կ'ընեն մեծերը, ինչպէս ըրած է յա-
ջորդ էջը կենդանացնող Հնդկաստանի վերջին առաքեալը:

Ով որ չի կրնար գաննել իր ժողովուրդին կեցուցիչ մայր ե-
րակը, սիրել անոր հողին ոճաւորող ուժերը՝ հողը, ջուրը, լեռը,
արեւնակից մարդը եւ պատմութիւնը՝ չի կրնար զգալ ու ոճաւորել
ուրիշ ժողովուրդներու թաքուն ուժերը:

Մեծ արուեստագէտները եղած են մեծ հայրենասէրներ եւ մեծ
հայրենասէրները՝ մեծ մարդասէրներ:

Հնդկաստանի հողին ու Գանդէսին տեղ եթէ ուրիշ հողի մը
եւ ուրիշ գետի մը անունները յիշէր նեհրու, իր բառերը, կասկած
չկայ, պիտի թուէին դատարկ ու անիմաստ: Բանին գորութիւնը
պիտի չհասնէր այս աստիճանին, նոյն խօսքերը պիտի չունենային
վարակիչ այս շունչը: Հոս, այս հաւատարմութեան դիմաց, իր
հայրենիքը սիրելու մեծ Հնդկիկին մեծ կիրքին մէջ է, որ մարդ կը
տարուի աւելի, կը սկսի աւելի սիրել սեփական իր գետը, սեփա-
կան իր հողը, ժողովուրդը:

Նեհրուն պաշտօնական գրագէտ մը չէր, բայց ամբողջական
մարդն էր: Հայրենասէր, այլասէր, մտքին հետ սիրտ ունէր եւ ըն-
դունակ էր անշահախնդիր զոհողութիւններու: Իր կտակը կը բա-
ցատրէ ամբողջ կեանքը, նուիրումը, գեղումը, զոհողութիւնները
չարունակելու առաքելական ծարաւը: Յետ մահու ուխտասեղի մը
ունենալու մարդկային ներքի փոռասիրութեան փոխարէն՝ իր ա-
ճիւնները Հնդկաստանի հողին պատարագեալ բաշխելու այս իղձը՝
անգամ մը եւս եւ ամբողջութեամբ կը պայծառացնէ ու կը վռն-
ժացնէ իր դէմքը:

Սարոյեանը, նեհրուն: Մէկը ապրելու ուժը կ'ընդգծէ, միւ-
սը՝ հայրենի հողին սրբութիւնը:

Իրենց ազգային պատկանելութեամբ մարդացած եւ անով
համայնացած երկու գէմքեր:

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ՆԵՀՐՈՒԻ ԿՏԱԿԷՆ

«Երբ մեռնիմ, կ'ուզեմ որ մարմինս կիզուի: Եթէ մեռնիմ օտար երկրի մը մէջ, մարմինս պէտք է կիզուի հոն եւ անիւններս ուղարկուին Ալլահապատ: Ափ մը անհուն թող մետուի Գանգէս գետին մէջ: Այս փափաքս կրօնական որեւէ ճշմանակութիւն չունի: Մանկական տարիքէս, հոգեպէս կապուած էի Գանգէսի հետ: Եւ որքան մեծցայ, նոյնքան մեծցաւ նաեւ սէրս Գանգէսի հանդէպ: Հնդկական նախադարեան քաղաքակրթութեան խորհրդամիջն է այն գետը, որ միշտ կը փոխուի, միշտ կը հոսի, բայց միշտ կը մնայ նոյն Գանգէսը: Ան ինձի կը յիշեցնէ ճիւղապատ գագաթները եւ խոր հովիտները Հիմալայայի, գոր այնքան սիրեցի, ինչպէս նաեւ վարը՝ հարուստ հովիտները, ուր նուիրարեղեցի ամբողջ կեանքս ու գործս:

«Գանգէսը... ժպտում եւ ցատկոտում՝ առտուան արեւուն լոյսին տակ, մտայլ եւ խորհարարով լեցուն՝ երեկոյեան առտուներուն մէջ: Նեղ, դանդաղ եւ շնորհալի հոսանքով՝ ճմար, որտուն եւ հսկայ՝ գրեթէ ծովու ծաւալով, եւ ծովու քանդիչ ուժին նման բանով մը՝ մտանշնարու եզանակին:

«Հնդկական անցեալին խորհրդամիջը եւ յիշատակ մըն է ինձի համար Գանգէսը, որ կը վազէ ներկայի մէջէն եւ կը հոսի դէպի ապագայի մեծ ովկէանսը:

«Որքան ալ ժխտեցի հին աւանդութիւններն ու սովորութիւնները, որքան ալ անհամբեր եմ, որպէսզի Հնդկաստան թօքափէ այն շղթաները, որոնք կը կապուեն զինքը եւ կը ասանամափակեն ու կ'արգիլեն անոր ժողովուրդին ֆիզիկական եւ իմացական վերագարթումը, այսուհանդերձ, չեմ ուզեր ինքզինքս ամբողջովին կտրել անցեալէն:

«Հպարտ եմ այն ժառանգութիւնով, որ մերն էր եւ է՝ այսօր ալ: Ունիմ այն գիտակցութիւնը, - ինչպէս ասինք բոլորս ալ, - թէ օգակն եմ շղթայի մը, որ կը սկսի պատմութեան արեւածագէն, Հնդկաստանի անյիշատակելի անցեալէն: Պիտի չկտրեմ այդ շղթան, գոր կը յարգեմ իբրեւ գանձ եւ որմէ կը ստանամ ներշնչումս:

«Եւ իբրեւ վկայութիւն, իբրեւ յարգանքի վերջին տուրքս Հնդկաստանի իմացական ժառանգութեան, կ'ուզեմ որ անիւնէս ափ մը նետէ Գանգէսի մէջ:

«Բայց անիւններուս մեծագոյն մասը կ'ուզեմ որ ուրիշ կերպ գործածուի: Կ'ուզեմ որ սաւառնակով վեր հանուի եւ ցանուի դաշտերուն մէջ, հոն՝ ուր կը տփնին Հնդկաստանի գիւղացիները, որպէսզի խառնուի հնդկական փոշին եւ հողին հետ եւ անբաժանելի մասը դառնայ Հնդկաստանի»:

ԱՐԳԻ ԽՈՐՀՐԳԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ժ.

Յեապատերազմեան արձակագիրներէ թիւն աւելացու մի շարք Հայրենապարձներով: Ճիւղ է, նրանք այլեւս միեւնոյն գրական ընտանիքի անդամ են հանդիսանում. ու կարծես թէ Հայրենապարձները անջատ երեւալու սրեւէ հիմնուոր պատճառ չունեն, բայց նպատակայարժար է առանձին խմբով ներկայացընել, որովհետեւ նրանց վաղ երիտասարդութիւնը անցել է Սփիւռքում եւ, բացի այդ, նրանց երկերում օրինական իրաւունքով շատ առատ են արիւտքային նիւթերը:

Հայրենապարձ գրողներին առաջին դժի վրայ են դրուում ՄՏԵՓԱՆ ԱՒԱՋԱԶԵԱՆԸ եւ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՂՈՒԿԱՍԵԱՆԸ, իրենց բեղունութեամբ եւ ներուժ հնարաւորութիւններով: ԱՒԱԶԱԶԵԱՆԸ (ծնուած 1924 թ. Հալէպում) գրել է «Անպատում» եւ «Պարտութիւն» վէպերը՝ պատերազմի կեանքից, ինչպէս «Փիւնիկ» ու «Առանց Հայրենիքի» երկերը՝ սփիւռքահայ մարդկանց կեանքից: Նա կենտրոնացել է մէկ հիմնական թեմայի՝ Մերձաւոր Արեւելքի հայկական կեանքի վերջոյ: Նիւթը կարեւոր է եւ միաժամանակ պատասխանատու: Դա Հեղինակից պահանջում է առաւելագոյն փափկանըկատութիւն, բարեխղճութիւն եւ ինքնուրոյնութիւն: Հայրենապարձութիւնը նուրբ եւ յուրջ զգացում է ու նրան կոմունիստական գաղափարախօսութեան յանձնարարած աղասակարգային մօտեցման» կոպիտ թաթմաններով զիպչելը՝ վտանգաւոր: Այսպիսով, նոյնիսկ ընդգծելու հարկ չկայ, ընդունակութիւն

ունի եւ միայն նրանից է կախուած դրական մնայուն արժէքներ տալը:

ՂՈՒԿԱՍԵԱՆԸ (ծնուած 1919 թ. Իրանում) ամենաբեզու Հայրենապարձ գրողն է: Գրել է նաեւ պատանիների համար: Նրա «Փոքրիկ վրիժառուներ» եւ «Հասանի յիշատակարանը» երկերը թարգմանուել են բազմաթիւ լեզուներով: Ունի բաւական թուով պատմուածքներ եւ վիպակներ: Յովհաննէս Ղուկասեանի վերջին՝ «Ոսկան Երեւանցի» պատմական վէպը (17-րդ դարի հայ տպագրութեան վերաբերեալ) լաւ ընդունելութիւն գտաւ եւ, ի դէպ, ողջունուեց նաեւ «Հայրենիք» օրաթերթի մի ընդարձակ յօդուածում:

Երկրորդ դժի վրայ երեւում են ԱՌԻԳ ԱԻԱԳԵԱՆԸ եւ ԳՐԻԳՈՐ ՔԵՇԻՇԵԱՆԸ: Աւագեանը (ծնուած 1919 թ. Քեհրանում) գրել է մի շարք պատմուածքներ, ինչպէս եւ «Վաղը», «Նապիլի Դայարեան» վիպակներն ու «Շիկացած հող» վէպը: Ունի որոշ նախասիրած բընագաւառներ, բայց նրա գրական կարողութիւնները փոփոխական յաջողութեամբ են գրուելուում: Քեշիշեանը (ծնուած 1921 թ. Քիւրքիայում) լոյս է ընծայել հետեւեալ մոլորածուները. «Մեր ճանապարհի վրայ», «Պատմուածքներ» եւ «Քիզնից հեռու, ջեզ հեռ» (1962): Նրա ընտրած նիւթերը մանր են, մտերիմ ապրումների հետ կապուած, հորհրանական խուզարկումների երանդով, բայց երբեմն զուգահեռաբար շօշափում են նաեւ հասարակական ընթացիկ հարցեր:

Համեմատաբար երիտասարդ հեղի-

նակներէց աչքի են ընկնում ԿԱՏՊԻՍ ՍՈՒՐԻՆԵԱՆԸ (Սարկաւազեան, ծնուած 1925 թ. Աթէնքում, - «Մեծ քննութիւն», «Մաքուր ձեռքեր», «Գիշերապահը»), բանաստեղծ ԱՐՐԱՀԱՄ ԱԼԻՔԵԱՆԸ (ծընուած 1928 թ. Կիլիկիայի Նարզիզիք գիւղում), ԿԱՏՊԻՍ ՀՈԳՏԱՆԵԱՆԸ («Ջամպա», «Միցո» վիպակները)։ Կան նաեւ մի շարք աւելի տարեց կամ նոյնպէս երիտասարդ երբեմնի գրոց-բրոցներ, որոնց ստեղծագործութիւնը գրական արուեստի տեսակէտից առանձնապէս ուշադրաւ չէ, կամ առանձին Նշանակութիւն չունեն նրանց երկերը եւ հազիւ թէ որեւէ անփոխարինելի բան աւելացրեն խորհրդահայ գրականութեան վըրայ։ Նրանց գրական թէ հասարակական գործունէութիւնը աւելի անցեալին՝ Սփիւռքին է պատկանում, երբեմն «յուսուցիչական» պարծենկոտութեան շեշտըւած տրամադրութեամբ, եւ տուեալ զէպքում ամէն տեսակ զբոսն ու հեղինակներ յիշատակելու պատճառներ չըկան։

ԾԱ.

Խորհրդահայ գրականութեան ասպարէզում գործել եւ գործում են նաեւ կին գրողներ, որոնց խմբովին յիշատակումը վերապահեցինք այս հատուածին։ Կողմասում հայ մեծ թուով կին գրողների երևան գալը գլխաւորապէս մեր դարի 10-ական թուականների իրողութիւն է։ Իզական դպրոցների աշակերտուհիների շարքից դուրս եկան բազմաթիւ նորահաս գրական զէմբեր։ Հետագայում նրանց մի մասը ստիպուած տարագիր դարձաւ (եղէն Բիւզանդ, Արմենուհի Տիգրանեան, աւելացնենք նաեւ Հայաստան Գէորգեան), մի մասը լուսթեան մասնուեց (Լէյլի՝ Փառանձեմ Սահակեան-Տէր-Մկրտչեան), իսկ միւս մասը խառնուեց խորհրդահայ գրողներին։ 20-ական թուականներին Եկատերինա Բահատուրը գրեց «Արտաւազը», «Թոնդրակեցիներ», «Մարտ Բազրատունի», «Ջարեհաւանդին» պատմական պիէսները

(Թրիխում)։ Յայտնի են այդ առթիւ կազմակերպուած «դրական դատերը»։ Մարտ (Աղաւնի) Զուրաբեանը (ծնուած 1886 թ. Կարսում, մահացած 1954 թ. Էին Թրիխում), ի շարք այլ երկերի, գրեց «Քարձրացող ալիքը» երկհատոր վէպը։ Տակաւին 30-ական թուականներից առաջ գրական անուն էր Անուշը, եւ հետագայում մանաւանդ Լիւսի Թարգիւլը («Ճակատում», «Հսկաների շարքում», «Մայրեր», «Երածիւտը», «Լուսնի սոնետ», «Մաղկաւան», «Կոմիտաս»)։ Իսկ այսօր կայ կին գրողների մի բազմամարդ շրջաւոր, կազմուած արդէն հասուն եւ նորիկ ուժերից։

Բանաստեղծուհի ՎԱՐՍԵՆԻԿ ԱՂԱՍԵԱՆԸ (ծնուած 1898 թ. Նախիջևանի Զահրի գիւղում) այժմ ապրում է Բաքուում։ Յովհաննէս Թումանեանի մեռել տակ անած գրական ուժերից։ Ունի բանաստեղծութիւնների մի շարք ժողովածուներ։ Պատանեկան եւ երիտասարդական տարիքում յայտնի էր իր բարձրորակ հայերնասիրական բանաստեղծութիւններով։ Այժմ էլ շարունակում է ըստեղծագործել, բայց, անշուշտ, ոչ նոյն թափով։ ՀՌԻՓՍԻՄԷ ՊՕՂՈՍԵԱՆԸ (ծընուած 1899 թ.) Թրիխից է փոխադրուել Երևան։ Բնական շատ է գրել, մանաւանդ մանկական բանաստեղծութիւններ, մայրական երգեր եւ այլն։ Արձակագրուհի ԱՐԱՔՍԸ (Աւետիսեան, ծընուած 1903 թ. այժմեան կերտականում) մէկ ու կէս տասնեակ զբոսնի հեղինակ է, եղել է մանկական պարբերականի խմբագիր։ Աբաքը մինչեւ հիմա էլ կարծես թէ իրականութեանը նայում է իր երբեմնի «կոմսոմոլական» դուռուտը ակնոցներով։ Թէեւ նրա երկերի գեղարուեստական որակը ուշադրաւ միջակից հաղիւ է բարձրանում, բայց նրանք կարևոր աղբիւր կարող են ծառայել պատմական մի ժամանակաշրջանի որոշ մըթնոցում ու որոշ մտայնութիւն ուսումնասիրելու համար, եւ աւելորդ չեն։ ԱՂԱՍԻՆ (Գրիգորեան, ծնուած 1911 թ. Ալաշկերտի Խաչու գիւղում) 30-ական թուականների բանաստեղծուհիներից է

(«Արտերի լիբրիան» - 1930, «Մանթաշ», «Ռեպուբլիկան», «Ռեպուբլիկան» եւ այլն), բայց 50-ական թուերից է վեր ժրելը՝ 1950-ական է իր «Երեւան» երկհատոր վէպի մէջ: Վէպը նպատակ ունի ներկայացնել երկրի վիճակը խորհրդայինացման նախորդական, ընթացքում եւ նրանից յետոյ: Նրա թի փոփոխ լինելն արդէն կանխորոշում է վէպի բնոյթը: Եւ Աղաւնին առաջադրանքն ընդունել է առաջ: Բայց անվիճելի է Աղաւնու վիպիչու կարողութիւնը, որը արժանի է անէլի օգտակար գործածութեան: Աղաւնին էլ իր «Իտալ խոստովանանք» ունի (1956)՝ անհատի պարտաւորութիւնը կապակցութեամբ («Բանաստեղծ էի եւ մի պարզամիտ, բանաստեղծ էի, երգի սիրահար»): Բայց մի-թէ պարտադիր է, որ բանաստեղծը անպայման մէջտեղ սխալուի, որը ցերեկով եւ պարզ լոյսի տակ...

ՄիւլՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԱՆԸ (ծնուած 1919 թ: Երեւանում) անբան ծանօթ է ամենուրեք, որ հազիւ թէ այստեղ հարկ լինի որեւէ բնութագրութեան: Կապուտիկանի բանաստեղծութիւնների ժողովանունն են. «Յրերի հետ» (1945), «Ձմեռուի ափին», «Այս իմ երկիրն է», «Ռեպուբլիկան», «Մարտի 1-ին», «Մարտի 1-ին», «Մարտի 1-ին», «Մարտի 1-ին», «Մարտի 1-ին»: Նրա ժողովածուներն են. «Մտերմութիւն» (1940), «Բանաստեղծութիւններ», «Մօր ձայնը», «Փշտակներ», «Լիբրիկան լուսաբաց», «Լիբրիկան» (1962): Նշանաւոր են Մարգարեանի մայրական երգերը: Եւ առհասարակ Մարգարեանը ամենականացի բանաստեղծուհին է, ոչ թէ այդ հասկացողութեան արկածային կամ սպառնալից իմաստով, այլ կենսա-հոգեբանական: Նրա երկերում զրահւորում են կանխորոշական բոլոր յարաբերական երանգները՝ դատեր, ջրով, կնով, մօր եւ քաղաքացուհու: Իր զանազան ջնարկներով կամ Մարգարեանը մի ժամանակ ջնարկատուից պետական հեր-

թապուհ ակտիւստների կողմից: Բանաստեղծուհին կամայ է ընթանում, բայց հաստատուն զայլերով: Նրա սեւ ընդհան է պատկանում արձակագրուհի ԱՆԱՀԻՏ ՍԱՀԻՆԵԱՆԸ (ծնուած 1917 թ: Լոռու վարչարարը գրելու): Սահինուհանի գրքերն են. «Վայելք» (1942) վէպը, «Բարեկամներ», վիպակը, «Պաշտօններ» (մի քանի վերամշակուած հրատարակութեամբ), «Մարա» ծառայում վէպը եւ «Վերադարձի արահետներով» (1960): Գրչական կենսից գրում է նաեւ ակնարկներ: Իր «Պաշտօններ» գրքի կապակցութեամբ Սահինանը բաւական նեղութիւններ կրեց 1946-47 թթ. ակնարկներն: Սահինանը ամենամարում արձակագրուհին է եւ աչքի է ընկնում իր արտայայտութիւնների շտապութեամբ ու համարակութեամբ: Վերջին տարիներն նոր երկեր չեն երևում նրա հեղինակութեամբ: Թերեւս անդժուած է, թէ չէ այլ կերպ անկարելի է:

Միւս կին գրողներից պէտք է յիշել նաեւ մի քանիս: ԱՆԺԵԼԱ ՍՏԵՓԱՆԵԱՆԸ (ծնուած 1917 թ.) գրել է «Քոյրեր» (1947), «Սուկէ մեղաք», «Ամառնամուտ» վիպակները: ԱՆԱՀԻՏ ՍԵՆՈՅԵԱՆԸ գրել է «Նովելներ» (1951), «Սուկէ վագրի մէջ» վիպակը եւ այժմ պատրաստում է «Պարունը ձեան տակ» վէպը: ՋՈՒՆԻՐԹ ՂՈՒԿԱՍԵԱՆԸ գրել է արդէ թուով պատմութեամբներ, գրականագիտուհի է եւ կուսակցական սպով շարագրուած յօդուածների հեղինակ: ՌՈՉԱ ՊԵՏՐՈՍԵԱՆԸ ընդհանրապէս գրում էր բանաստեղծութիւններ («Մրտի ձամբայ»), բայց 1963 թ. Մարտին «Սովետական Գրականութիւն» ամսագրում տպուած «Ինչու՞ չիբրայարձար, սիրելիս» վիպակով ապացուցեց նաեւ իր արձակագրուհի լինելը, թէ եւ այդ երկը կծու ջնարկատուութիւնների արժանացաւ՝ բարոյական ու դրամատիկական պատմութեամբ: ՇՈՂԻԿ ՍԱՖԵԱՆԸ գրում է արձակ բանաստեղծութիւններ եւ մանրպատմութիւններ: Նրա գրքերից են. «Գարունի երգեր» (1947), «Մեր երգը» եւ վերջերս «Մի հին հե-

զիսթ է ու» (1963)։ Սաֆեանը հետ քիչ է դրում, բայց ինքնուրոյն ոճով եւ իւրապատուկ բովանդակութեամբ։ Բանաստեղծուէի ՄԵՏԱՔԱՄԷՆ (Պոզոսեան, ծննդուած 1928 թ. Եփրակի վարդաքար գիւղում) դրել է «Ջահելութիւն», «Կնոջ սիրտ», «Ուրիշի արցունքներ» ժողովածուները։ Բանաստեղծուէի շարքում յատկապէս աչքի է ընկնում ԱՐՇԱՆՈՅ ՄԱՐԳԱՐԵԱՆԸ։ Նրա տաղին ժողովածուն է «Չնծաղիկներ» (1947), միւս ժողովածուներն են՝ «Գորնանայի վտակներ», «Հայրենի հովիտ», «Հեռաստաններ» (1962)։ Մարգարեանին զրազեցնում են բողոքական հարցեր, բայց մանաւանդ հայրենական իրականութիւնը։ Հայրենասիրութիւնը նրա ստեղծագործութեան ինքնարուիտ յատկանիշներից մէկն է։ Բանաստեղծուէին երբեմն թռիչքներ է փորձում հեռուսր ուրբաներ, բայց նրա հարազատ տարերքը իմաստասրտող աւարեան է։

Բողոքովին նորահաս գրական սերունդի մէջ եւս երկուսն են զանազան խոսարմնայից կանացի տնուններ, բայց տուայժմ շատ վազաժամ է այդ մասին խօսք բացելը։ Այտեղ յիշատակեցինք նրանց, ովքեր արդէն որսակի վաստակ ունեն եւ գրական աւնուազն նշմարելի գիծադէծ։

ԹԲ.

Լրագրութիւնը սերտօրէն կապուած է գրականութեան հետ։ Շատ յաճախ գրողները աշխատում են լրագրական ապարէզում եւ գրիթէ միշտ ամէն լրագրող փորձում է դրող լինելու «քննութիւն» տալ։ Յաշողելը «բարտի» հարց է. իսկ աւելի շատ՝ կոչման։ Անանեանը, Տոչարը, Սիրտսը, Արաքսը եւ ուրիշները եւս «մասնագիտութեամբ» լրրագրող են, բայց միայն նրանց գրող լինելն է յայտնի։ Իսկ կան տնայիսիները, որ ինչքան էլ շարեւար զեղարուեստական երկեր տպել սան, անիւփոխ կերպով պահում են իրենց լրագրողի դիմադիծը։ Այտեղ տեղը չէ խօսել խորհրդային լրագրութեան ու լրագրողի առանձ-

նայատկութիւնների մասին, քանի որ տեղիքը սահմանափակում է սոսկ գրականութեան հետ առնչուած հարցերով։ Լրագրութիւնից գրականութիւն կամ ընդհակառակն անցնելու գօտիները ակնարկներ են, առաւել եւս զեղարուեստական ակնարկները, որտեղ չփութ են կենդանի խօսքի ու կենդանի պատկերների ասպարէզներ հանդիստցող լրագրութիւնն ու գրականութիւնը։ Այդ կապակցութեամբ նշենք մի քանի լրագրող-ակնարկագիրներ, որոնք զեղարուեստականութեան սէր ունեն։

Այդ տեսակետից ամենայայտնի դէմքը ՍՏԵՓԱՆ ԿՈՒՐՏԻԿԵԱՆԸ է (ծնուած 1907 թ. Թիւրքիայի Պուրսա քաղաքում), որը 1927 թուին է Յունաստանից Հայաստան զաղթել։ Նախապատերազմեան շրջանում երիտասարդական մամուլի եռանդուն դործիչներից էր, միաժամանակ գրականամերձ հեղինակ։ Մասնակցել է պատերազմին ու այնուհետեւ հրատարակել բողոքական ակնարկներ եւ այլ ժողովածուներ («Հերոսուէիներ», «Արեւու թերակղզում», «Լեռների դուտարը», «Հետախոյզներ»)։ Կուրտիկեանը տնայատկութիւն յայտնի դարձաւ նաեւ ժողովրդական աւանդակների մշակումով («Հայրենի լեզներ»)։ Կուրտիկեանն իր ակնարկներով արձագանգում է առհասարակ հայկական ամէն տեսակ հանրային հարցերի («Երեւան», «Հայրենի հողի վրայ», «Հայրենական ակնարկներ», «Ժամանակներ եւ մարդիկ»), երբեմն հում եւ վիճելի տեսակէաներ բանաձեւելով։ Եթէ սովորական յողուածների մէջ Կուրտիկեանի ոճը չոր է եւ մի քիչ ծանրաշարժ, «Հայրենի լեզներ»-ի մէջ ճիշդ հակառակն է՝ վտուրուուն եւ քնարաշունչ։

Ձանկեղուրում ապրող ԳԱՐԻՒԷԼ ԱՐԵՆԵԱՆԸ եւս զեղարուեստականութեան հակումներ ունի։ Ակնարկների ժողովածուներից են «Որտուտներ գետնի տակ» (1949), «Հանքաշխարհ» (1959)։ Արեւեանն առհասարակ իր ուշադրութիւնը կենտրոնացնում է արտադրական, մասնաւորապէս լեռնարդիւնարերական հար-

ցերի վրայ: Գրել է նաև «Հարուստ երակ» վիպակը: Մամուլում յաճախ է երևում:

Վերջին ժամանակներս դիմադրծ է ստանում նաև ԳՈՒՐԳԷՆ ԱՌԱՔԵԼԵՆՆԵՆԸ: Տարբեր ժամանակ ապուել են նրա «Տափաստանի մարդիկ», «Անյայտ հերուք» ակնավիների ժողովածուները: «Մովեական Հայասան» թերթի յոգուածագիր-ակնարկագիրներից աչքի է ընկնում ՂԱՐԻՔ ՀԱՅՐԱԳԵՏՏԵՆՆԸ, որը մինչև հիմա ոչ մի ժողովածու չունի: Նա ըստ էութեան աւելի քանսան ըանաստեղծ է, քան զգաստամիա լրագրող, քանզի երբեք չի մնում իրականութեան ապացուցելի սահմաններում, այլ բուռն մղում ունի անպայման յորդալու, ինչ որ թանկ է նստում իր լրագրողի վարկին: Թերթը ամէն անգամ սթափուելուց յետոյ ստիպուած է լինում «ուղղում» գրել Հայրապետեանի այս կամ այն սահմանազանց ակնարկի աթիւն: Ընթերցողները բողբոջում են: Ասկայն փաստ է, որ Ղարիք Հայրապետեանը գեղարուեստական խօսքի ճաշակ ունի, թէև նրա ժաքի կարգապահութիւնը կազում է ինչ-ինչ պատճառներով:

Կերովականում է ապրում ՆՈՐ-ԱՅՐԸ (Նորայր Յարութիւնեանը, ծնուած 1912 թ.): Նոր-Այրը այնքան շատ գեղարուեստական երկեր է գրել, որ առանց վարանման նրան կարելի է գրող համարել, բայց քանի որ նա եւս իր գրական գործունէութիւնը լրագրութեամբ է ըսկըսուել եւ մինչև հիմա էլ այդ գիծը չեւտուած է նրա մօտ, ուստի նպատակայարմար համարեցինք նրա անուշը այս բաժնում յիշատակել: Նոր-Այրը գրել է ակնարկներ, պատմուածքներ, վիպակներ, վէպեր: Երկերը նրա «Հիւրանոցի աղջիկը» վիպակը, «Լոյսեր», «Ուրարտեանութեան» եւ վերջերս լոյս տեսած «Նոտուայ աստղեր» վէպերը:

Հրագրող-գրողներից բացի, այստեղ աւելորդ չէ յիշատակել նաև նրանց, ովքեր գրող են համարուում, գրական շրջանակին են պատկանում, որոշ «արատաղբա» ունեն, բայց երկրորդական դծի

վրայ են գտնուում կամ ոչ-կտու տեցեալում աղպիսիք են եղել: ԳՐԻԳՈՐ ԲԱՆԱԿԵԱՆԸ յայտնի է իր գեղարուեստական երկերի՝ «Փորձութեան ժամին» (1958), «Մեծի ապօր գրոյցները», «Միայն թէ ճիղճը հանգիստ լինի» ժողովածուներով, եւ ժամանակ առ ժամանակ երևում է գրական մամուլում: Գրականագէտ ԳՈՒՐԳԷՆ ՅՈՎՆԱՆԸ 30-ական թուականներից մինչև 40-ական թուականների կէտը գրում էր գեղարուեստական գործեր: Հրատարակի վրայ գտնուում են նրա «Առաջին ժպիտը», «Ճիւղ», «Ըմբռ», «Կեանքը փակ նամակներում», «Ձորս նովել», «Ենթակներ» գրքերը: Իր ժամանակ ընթերցողների մօտ լաւ ընդունելութիւն գտաւ, բայց պաշտօնապէս քննադատուեց Յովնանի «Կեանքը փակ նամակներում» գրքը (1937), որի մասին ամենաարեւացակամ գրաքննադատներից մէկը նոյնիսկ ասաց, թէ այդ գրքը ակամայ զարպարտութիւն է սուս մեծ ժողովրդի հանդէպ:

Լենինականում ապրող գրողներից է ԱՆԴՐԱՆԻԿ ՂՈՒԿԱՅԵԱՆԸ, որը «մասնագիտութիւն» է դարձրել ժողովրդական աւանդավէպերի մշակումը («Շեքիաթներ», «Յաւերժանք», «Հայրենի աւանդավէպեր»): Նոյնպէս Լենինականում է գտնուում տիրահոյակ ԱՆԴՐԱՆԻԿ ՅՈՎՍԷՓԵԱՆԸ (ՍԵՒԱՆԻ): Յովսէփեանը վա՛յ-գործներից է, գրական մակարոյծներից: Նա սիրում է իր «Երկերի» նիւթ դարձնել անցեալի անուն ունեցող «յեղափոխական գործիչներին» եւ նրանց ստուերի աակ իր սեփական անհեթեթութիւնները հրամցել: Գրել է «Մուտք» եւ «Միրտ» գրքերը, բայց «Հրատարակով իայաստակուեց «Առաւօտ» անունով վէպից» յետոյ: Այդ գրքում իրր ներկայացուած է Հայաստանի խորհրդայինացման ժամանակաշրջանը, բայց այնպիսի արտատոց, ախմաբ եւ ազգային ուժերի նկատմամբ բացայայտ ու անասնճ գրպարտական ոգով, որ դէպքերին իրագեկ ու մասնակից հին բողբոջիներն անգամ ըմբոսացան եւ հաւատարական բողբոջապիր գրեցին: Ի լրումն

այդ ամէնի, Մուրէն Վահուանին փաստե-
րով ազատուցեց, որ դրբում տեղ-տեղ
ցրուած գեղարուեստական պատկերներն
ու պարբերութիւնները գրեթէ նոյնու-
թեամբ արտագրուած են ժամանակակից
ուսու գրողների երկերից: Սեւազան զէթ
զգոյն է գտնուել՝ հայ գրողներից չար-
տագրելու: Բայց վերջապէս բռնուեց:

Գրականամերձ գրողների ցանկը
որանով չի սահմանափակուած:

ԹԳ.

Գրականութիւն Հասկացողութիւնը
սերում է «գիր» հասկացողութիւնից: Բայց
գրականութիւնը նաեւ արուեստ է, որը
գոյութիւն է ունեցել «գրից» շատ
առաջ, վաղնջական ու անյիշելի ժամա-
նակներից ի վեր: Դրան զուգահեռ ստե-
ժանուած է նաեւ «բանահիւսութիւն» հաս-
կացողութիւնը: Բայց եթէ նախադրա-
կան շրջանի բանահիւսութիւնը ինքնին
Հասկնալի էր, կիսով չափ Հասկնալի է
նաեւ դրուար գրականութեանը զուգա-
հեռ բանաստեղծութեան գոյու-
թիւնը, ապա այսօրուայ պայմանների
Համար այդ իմաստային հակադրումը
այլևս Հնացած է թուում: Ինչպէս որ հե-
ռուար դարերում ամէն մի «գրական ըս-
տեղծագործութիւն» բերնէ-բերան փո-
խանցուող բանահիւսութիւն էր, այսօր
ամէն մի «բանահիւսական երկ» բնակա-
նոն պայմաններում մեծ մասամբ անմի-
ջապէս գրի է առնուում եւ գրականութիւն
դառնում: Վերապահութեան ճեղք կա-
րելի է թողնել միայն այն կապակցու-
թեամբ, որ այսօր էլ գրականութիւնը
ստեղծում են եզակի մարդիկ, «մասնա-
գիրտացած» արուեստագէտները, իսկ բա-
նահիւսութիւնը սնունդ է առնում անթիւ
սղբերներից, երբեմն էլ անյայտ-անա-
նուն խորհրդից, եւ գերազանցապէս կը-
րում է ժողովրդական բնոյթ ու սահման-
ուած է ընթացիկ, արօրեայ, «առձեռն»
գործածութեան Համար՝ զանգուածային
լայն խաւերի մէջ: Ուստի սխալ չէ ըն-
դունել որք մակարդակի բանահիւսա-
խառն գրականութեան գոյութիւնը եւ

ըստ այնմ էլ քննութեան առնել մի շարք
առնչուող Հարցեր:

Ի տարբերութիւն աւանդաբար իրա-
ւական սկզբունքներով կառուցուած ա-
զատ աշխարհի, խորհրդային պայմանե-
րում, ինչպէս յայտնի է, ամէն ինչ խըս-
տագոյնս ենթակայ է պետական «զեկա-
վարման»: Տեսնութիւն, քաղաքական
ու զաղափարաօտական արտայայտման
ձեւեր, մարդկային յարաբերութիւններ,
կենցաղ, արուեստ եւ այլն՝ պէտք է
«կարգաւորուեն» բացառապէս կենտրոնի
ցուցափայտի Համաձայն: «Իմաստուն
պարտիան» ամէն տեղ Հասնում է, ամէն
գործ պղծում եւ ազա անխուսափելի
մախողման մեղքը ուրիշների վրայ գցե-
լով՝ պարծենում «աննախընթաց յաջ-
ղութիւններով»: Այդ նոյն ճակատագրին
է ենթարկուած նաեւ բանահիւսական
գրականութիւնը: Ամէն ժողովրդի մէջ
գրողներ կան թէ չկան, քիչ են նրանք
թէ շատ՝ միեւնոյն է. ժողովուրդը չի
կարող Հանգիստ նստել եւ սոսկ բուսա-
կան դոյութեամբ սահմանափակուել, նա
միշտ ստեղծում է նաեւ աննիւթային
«ապրանքներ», լուրջ ու թեթեւ ժաման-
ցի կամ էլ աւելի նուիրական կարեքների
Համար: Բացառութիւն չի կարող կազ-
մել նաեւ խորհրդային, տուեալ ղէպզում
խորհրդայնայ Հասարակութիւնը: Եւ իս-
կապէս, խորհրդային ժամանակաշրջա-
նում մեր ժողովուրդն ինքն իրեն հոգե-
պէս մխիթարելու եւ իր սրտի ծայր ար-
ուեստի վերածելու Համար ստեղծել է
բազմատեսակ բանահիւսական արժէք-
ներ, որոնք, սակայն, գրականութիւն
չեն դարձել՝ Հասկնալի պատճառներով
եւ միջիւն Հիմա էլ ուսումնասիրութեան
նիւթ դառնալու Հաւանականութիւն չու-
նեն: Այդ իսկական բանահիւսութեան
փոխարէն Հրապարակօրէն ծաղկել է «զե-
կավարեալ» բանահիւսութիւնը:

Մենք ամենայն սերով ու երախտա-
դիտութեամբ ենք յիշում մեր ազգային
բանահիւսութիւնը մեզ Հասցնողներին;
ինչպէս եւ ժողովրդական գուռաններին;
որոնք Հեռուար մույլ դարերում մշտա-
պէս դայար պահեցին բախտից Հալած-

ուած ժողովրդի զգալարեքը, թոյլ չտուին, որ ցամաքի նրա հողին: Նոյնքան սիրով ու երախտագիտութեամբ ենք յիշում նաև այն բոլոր նուիրեալ բանահաւաքներին, որոնք վերջին հարիւրամեակում գիւղէ-գիւղ, դռնէ-դռու ընկած՝ հաւաքեցին մեր ժողովրդի դարաւոր բանահաւաքական հարստութեան ընկորները եւ երկիւղածութեամբ պահ տուին դալիք սերունդներին: Բայց 1930-ական թուականներին բանահաւաքական տնտեսով Հայաստանում հրապարակ հանուեցին այնպիսի անհեթեթ յօրինումներ, որ իրենց գոյութեամբ վարկաբեկեցին «բանահաւաքութիւն» բառն իսկ: Սեւով սպիտակի վրայ ապուեցին այնպիսի «երգեր» ու ժողովածուներ, որոնց հայերէն լինելու համար ամօթ միայն կարելի է զգալ: Կարճէս ոչ Հայաստան, ոչ հայութիւն, ոչ էլ առհասարակ մարդկութիւն կար, այլ կար միայն ոմն Լենին, որին պարտական է տիեզերքը իր գոյութեամբ: Լենինապաշտութիւնից չազատուած՝ վրայ հասաւ Ստալինը, մի ամբողջ առաւել ամօթալի դարազրուի բացելով: Իրական կամ երեւակայական մարդկանց անունով դանազան պատրաստակամ դրչակներ զարկ տուին նաև ստալինապաշտական բանահաւաքութեանը: 1936-40 թուականներին, երբ գրական հրապարակում համարեա ամայութիւն էր տիրում, դանդուածօրէն յարութիւն տան եւ ասպարէզ մտան աշուղները: Օրուայ հացի կարօտ ու լքուած այգ թշուառ եւ անարեկուած մարդիկ իրերի բերմամբ, առանց իրենց հալիւ տալու, մխրճուեցին ստալինապաշտութեան, «սովետապաշտութեան» ճախնախուտի մէջ, եւ այդպիսով արատաւօրեցին «աշուղագուսաններին» միամիտ անկալատութեան դարաւոր համբան ու հէնց իրենց անբարտր անցեալը: Ինչպէս իսկական ժողովրդական բանահաւաքութիւնը, այնպէս էլ այդ զեկավարեալ «բանահաւաքական» գրականութիւնը՝ դեռ սպասում է իր զբոսականագիտական դատաստանին: Այս

ուսումնասիրութեան նպատակից, ի հարկ է, դուրս է այդ բանը: Այստեղ այդ մասին յիշատակեցինք հետեւեալ նկատառումով:

Այսօր նոյնիսկ Հայաստանեան որոշ յօդուածներ մէջ երբեմն կարծեօ թէ մի տեսակ թերահաւատութիւն է արտայայտում արդէ ժողովրդական բանահաւաքութեան վաւերական արժէքի մասին, որպէս փաստ վկայակոչելով, ի միջի այլոց, նաև վերոյիշեալ նախադասերագմեան ստալինեան ժամանակաշրջանի կեղծ-բանահաւաքական խոտանը: Այնինչ այդ ժամանակաշրջանով չի կարելի դատել առհասարակ բանահաւաքութեան մասին: Այսօր էլ Հայաստանում դեռեւ շարունակում են ստեղծագործել արհեստով գուսաններ, որոնք լայն ժողովրդականութիւն են վայելում, երբ կարողանում են թրթուացնել շարքային ժողովրդի հողու հարազատ լարերը: Այսօր էլ անպայման ժողովրդի ընդերքում շարունակում են ստեղծուել իսկական իմաստով բանահաւաքական արժէքներ, որոնք չի կարելի անտեսել կամ արհամարհել: Ինչպէս որ մարդիկ ամէն օր գտնա լին ուսում, այնպէս էլ անընդհատ առաջնահարգ վէպ ու պոէմներ լին կարգում: Բանահաւաքութիւն իր բազմաթիւ տեսակներով՝ ժողովրդի մարդու ստորեայ հացն է: Հարցի լուծումը նրանում է, որ վերջ տրուի ոստիկանական հեղինակութեամբ օժտուած ղեկավարեալ «բանահաւաքական» գրականութեանը եւ բոլոր մարդիկ ազատ լինեն ստեղծելու իրենց արտ ուզածը, ինչպէս եւ մասնաշուր կամ հերքելու սեփական ստեղծագործութիւնը ու նոր հորիզոններ որոնելու: Արժէքներ ճշդելու իրաւաբարբ բուն ժողովուրդը պէտք է լինի եւ ոչ թէ ինքն իրեն աստուածային գահի վրայ կարծող միահեծան զպարտիան: Ժողովուրդը, հանրային համակեցութեան բրնական օրէնքների ուժով, ի վիճակի է հարթելու օրը-օրին գոյացող բոլոր անհարթութիւնները:

Լ. Մ.

(Շարունակելի)

ՃԻՊՐԱՆ ԽԱԼԻԼ ՃԻՊՐԱՆ

ՋԱԽՋԱԽՈՒԱԾ ԹԵԻԵՐՈՎ ԲԱՆԱՍՏԵՂԵՆ ՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՆ

Բասներորդ զարու սկիզբները, աբար գրականութեան երկնակամարին վերայ ահնախտիզ ճանանչներ արձակել սկսող զախարաւած քիւերով այս բանաստեղծը, հզօր իմացականութեան պրիմակով մը քննելով զինք շրջապատող անցուզարձերը, շուտով նշմարեց հանտերող ջառաք, մարգկութեան ապերջանկութեան պատճառ հանդիսացող ազդակները:

Ապշուքեամբ տեսաւ կեանքի զարտուղութիւնները, մարգոց իրարու հետ հաստատած յարաբերութիւններուն անհեթեթութիւնները, տիրողի եւ տիրապետուողի միջև գոյութիւն աւնեցող ազարակող անարգարութիւնները: Տեսաւ՝ կղերական դասակարգին նուիրապետութեան առկ կծկուած, իսկ ի ձեռքն, զմրախառ թշուառ զանգուաններու վերայ բանեցուցած ստրկատիրական վարժուէքը:

Ինչմ յանդիման ահանատեա եղած ազերխաբջ տեսարաններուն, ահանջալուր՝ զուլումի ձիչերուն, յեղափոխականի մը յանգչնութեամբ հրապարակ նետելով իր էրվանի միւթէւերքիտէն («բնուզող հոգիներ») անխնայօրէն ձաղկեց, պախարակեց, հարուածելով քննապատեց հինը, նեխածփտածը: Անիրաւութիւնն ու անարգարութիւնը, հոգեւորականութիւնն ու աւատապետութիւնը՝ մասնաւորապէս իր ամբակոծումներուն թիրախը հանդիսացան:

Իր կեանքի առաջին դարնանամուտին, սկսաւ սիրել աշխարհը, տիեզերքը, բնութիւնը, կինը: Մանաւանդ կինը. կնոջ սէրը՝ լսիող լսիլող բոցի մը նըման մոխրի վերածեց իր էութիւնը:



Տոլորուելով խանձեցու իտէալական սիրոյ մը ոլորտներուն մէջ. սակայն սիրոյ երկնակամարին վրայ իր թռիչքներուն պարզեւած անիմանալի հեշտանքը զուպած պահուն, անողոք ճակատագրի մը մճիւռովը, շանթահարող մրրիկ մը ջախջախելով զգետնեց զինք: Վշտահար բանաստեղծը տամուկ աչքերով սկսաւ գրել իր Եճճիիէք իլ միւթէւերքիտէն («Ջախջախուած թեւեր») վէպը:

Ճըպրան՝ Աէլմէ Գէրամէն սիրեց եւ Աէլմէի սիրոյն զզլիւիչ երջանկութեան ոլորտներուն մէջ թռիչքներ կատարած մէկ պահուն, անոր անակնկալ մահը շանթահարեց զինք եւ ան Արքունմէ ու ծալիտ վէպը զրելով մխիթարութեան ճարայ մը որոնելու ուղեց:

Արցախի ու Ժայռի միջոցով, ձեռք բերած արդի զրահանութեան եւ զերթողական արուեստին մէջ նոր ուղի մը բանալով, նոր երկեր երգեց: Նոր քնարի մը նոր լարերուն վրայ, բոլորովին նոր եղանակներ յորինեց, որով արար քնարերգութեան յառաջադասը ըլլալու պատիւը իրեն վերապահուած է:

Իր՝ տարփա-զգացական ամուններու մէջ ալլազան զոյններով ու երանգներով անուշարտոյր ծաղիկներ մշակած պահուն, Սուրբոյ, Եղիպատի եւ այլ արար երկիրներու գրագէտներուն՝ թերթերու եւ պարբերաթերթերու մէջ հասարակութեան հրամցուցած կտորները արուեստի նուրբ գծերէն զուրկ, համբակի ստեղծագործութիւններ էին. մանաւանդ Լիբանանի մէջ առաջին անգամ ինքը եղաւ սրտի եւ զգայունքներու լարերուն վրայ զարնողը, արուեստագէտի իր խոզիկ հարուստներով, որոնցմով զգաստացուց բոլոր արար գրողները եւ ունեցաւ հիացողներու եւ իր գծած ուղիքն ընթացողներու հոյ մը՝ որոնք մասնաւոր ճիգերով քննադատ շնորհ իրեն, իրենց նոր ստեղծագործութիւններուն մէջ:

Նախախնամութեան իրեն պարզեւած խառնուածքին մղումով չփոխեց սրտին վշտերը ուրիշին ժայտովը եւ չզիջանեցաւ փոխարինել իր դառնաղի արցունքները՝ ուրիշին խրախճանութիւնովը, որովհետեւ արցունքը՝ հոգին վերացնելու եւ տառապանքները թեթեւցնելու կոչուած էր իր ներքին համոզումով:

Ուզեց իղձիբու եւ յուսատու երազներու մէջ մեռնիլ, քան ապրիլ վշտաբեկ ու յուսահատ ուզեց զգալ սիրոյ տոշորոզ ծարաւը եւ զեղեցիկին խոռովիլ ալիքները սրտին մէջ՝ որովհետեւ անհասանելի իղձերու սվկիանին մէջ գալարուողներու առապանքը ակելի հաճելի եւ առաւել հոգեզուարճ զտոււ:

Վեր հասնի դիշերը, խաւարը կը վտարագործէ միջովայրը եւ ծաղիկը ամփոփելով թաւշայ թերթիկները՝ կը նիրհէ իղձերու թռուսփունի մէջ. կը բացուի արալոյսը, կը ծաղիլ արեւը վեհագոտ,

եւ ծաղիկը վերադարձնելով, շուրթները բացած կը համբուրէ անոր առաջին հառապայթները իղձերով ու կեանքի հազարամէկ տենչերով. ծաղիկներու կեանքը իղձ ու ժպիտ է. ձեռքանց:

«Ովկիանոսներու շուրթերը, շուրթացած, ղէպի անջրպետը կը բարձրանան իբրեւ ամպ ու սարերու, բարձրաբերձ լեռներու կատարներուն վերեւ կը յածին. պաղ զեփուտի մը թեթեւ հպումովը, լալալին՝ կալուածներու եւ ազարակներու վրայ խնայով իբրեւ առուակ ու գետակ կը վերադառնան իրենց հայրենիքը, — ովկիանոս Այսոյէս ալ հոգին, իր համայնական զանգուածէն բաժնուելով, իբրեւ ամպ նիւթական աշխարհի մէջ ցաւերու բարձունքներուն վրայ եւ հաճոյքի ու հեշտութեան անդունդներուն մէջ թափառելէ յետոյ, մահուան սարսափ զեցիկ զեփուտին հետ շփուելով, կը վերադառնայ սիրոյ եւ զեղեցիկութեան սվկիանը... Դէպի Առաւուծ»:

Ձեռքան երկար ատեն չկրցաւ ժողով Սէլմէ Գէրամէի մահը. երկար սրդաց ու երկար ողբաց անոր կորուստը:

«Սէլը՝ իր խոռովիլ սլաքներով հողիս փոթորկած պահուն, անոր շաղցրանալու մեղեգիկն սեւկողիբը եղայ. ան իր հեշտաւէտ սլաքներով էութեան մէջ խուժած ատեն, զիս տաննուսթ տարեկան պատանի մըն էի: Սէլմէ Գէրամէ՝ պատանեկութեան նախնական անգիտակից թմբիրին մէջ ընդարձացած նիրհած պահուա, իր առաջինութեան զգլխիլ պերճանքով առջեւէս քալելով զէպի սիրոյ տանարը առաջնորդող կիներ եղաւ, ուր օրերս անցուցի երազներու նման դիշերային խրախճանքներու նուազներով»:

«Ընէ էր՝ որ սորվեցուց ինձի դեղեցիկին ու բարբիճ պաշտամունքը՝ որ պարուրեց էութիւնս անբիծ սիրոյ մը ոգեւորող բուրմունքներով. առաջինի կեանքի մը անդին առաւելութիւններուն համանուագը ակամբիս մէջ հեշեցնող հըրեշտակը եղաւ ան»:

«Բնութեան հրաշալի սքանչելիքներուն հետ ոչմ առ գէմ պանուելով՝ դրբերու, վէպերու, պատկերներու ներշնչ-

չումներով դինովցած մէկ պահուս, յանկարծ՝ Սէլմէի շրթներէն սփռուող սիրոյ փսփուքներուն արձագանգը հասու ահանջիս: Գեւ տհաս պատանի կեանքի տաճուլ ու անրերրի, խոպան ու ամայի տափաստանին մէջ շուարած դրախտէն վըռնտուած Ադամի նման ման եկած ասանս, Սէլմէ՛ Եւայի նման խորհուրդներով ու սքանչելիքներով լի սրտովը դըրկարաց ընդունեց զիս, եւ ահա այդ պահուն էր որ զգացի կնոջ էութեան կախարահան զօրութիւնը անձիս վրայ: Վեյլ կախարահան զօրութիւնն էր՝ որ առաջնորդեց զիս դէպի սիրոյ պաշտամունքի սրբազան խորանը եւ հոն ըզգացի այն, ինչ որ զգաց առաջին մարդը, հրեղէն սրով դրախտէն արտաքուստ արհաւիրեալ եւ սակայն աւաճ, եւ դեռ կանխէն առանց ճաշակելու կենաց ծառին պտուղէն, առանց վայելելու անոր համն ու հոտը, զրկուեցայ անոր կախարահան հրապարկներէն:

«Այդ կախարահան զօրութիւնն էր՝ որ առաջնորդեց զիս դէպի սիրոյ պաշտամունքի սրբազան խորանը եւ հոն ըզգացի այն, ինչ որ զգաց առաջին մարդը, հրեղէն սրով դրախտէն արտաքուստ արհաւիրեալ եւ սակայն աւաճ, եւ դեռ կանխէն առանց ճաշակելու կենաց ծառին պտուղէն, առանց վայելելու անոր համն ու հոտը, զրկուեցայ անոր կախարահան հրապարկներէն:»

Ճըպրան՝ ցաւասանջ տալիս պնդեցաւ ազգեցութեան տակ, ինքզինք նմանցուց զբախտին պերճութիւնները դիտելով եւ զանոնք չվայելով արտաքուստ արաջին մարդուն: Ինքզինք նմանցուց բարձրաթրուիչ խոյանքներով ճախրող եւ սակայն մերկաշունչ փոթորիկէ մը թեւարեկ եղող արծիւի մը, որուն համար յանախ անիծեց սեւ ճակատագիրը յուսահատօրէն:

Ճըպրան՝ ցաւասանջ տալիս պնդեցաւ ազգեցութեան տակ, ինքզինք նմանցուց զբախտին պերճութիւնները դիտելով եւ զանոնք չվայելով արտաքուստ արաջին մարդուն: Ինքզինք նմանցուց բարձրաթրուիչ խոյանքներով ճախրող եւ սակայն մերկաշունչ փոթորիկէ մը թեւարեկ եղող արծիւի մը, որուն համար յանախ անիծեց սեւ ճակատագիրը յուսահատօրէն:

«Այժմ խաւարած ասորիներու սեւ շգարչին տակ չբացած այդ լուսազարդ պատկերներու ամենայնոքին գծերն անգամ, որեւէ հեռք չմնաց վարդազոյն երազներու ինկարայր ժապաւէնէն, բացի տխրատիթ յիշատակներէ՝ որոնք աներեւոյթ թոխիքներով կը թեւածեն գլխուս վերեւ, պատճառելու համար սրտիս խորչերուն մէջ սպառող, հիւծող ալեկոծութիւն մը, աչքերէս ծորող յուսահատութեան հեղեղ մը:»

«Սէլմէն, չբողբոսապիտ այն յաւերժաւարտ ոչ եւս է. չուեց կապտաւուն վերջալոյսի շառագունող վարդոյրին ետեւը, եւ իրմէ մնաց միայն էութեանս մէջ յաւերժօրէն վէտվէտող հառաչանքի

ալիք մը եւ սալփիներու շուքին տակ ծըւարած մարմարեայ դամբան մը. այդ դամբանն ու այս փոթորիկող սիրտը միայն կը ճանչնան անոր ողբերգական զոյսութիւնը, եւ սակայն դամբանին վրայ տիրող ամայի լուսութիւնը մի՞թէ պիտի թոյլատրէ անոր մէջ թափուած սրբազան խորհուրդներուն լոյս աշխարհ ելլելը:»

Ճըպրան՝ կեանքին գարունը սուգ ու շիւանի մէջ անցընելէ յետոյ, մտաւ անոր մշտապայծառ եղանակին մէջ: Ուսուցան հին իղձերը, թրծուեցան դաղափարները եւ փոխադրուելով բանաստեղծութեան քնարական աշխարհէն, փիլիսոփայութեան աւելի վեհ բարձունքները, վայելեց բացարձակ իրականութեան զուսպեղ զատկերները: Ողջադարուեցաւ մարդկային առաքինութիւններու եւ վեհ սկզբունքներու հետ:

Յաւերժական մայրիներու հովանիին տակ ծուարած Պըլչերիի ծոցին մէջ սընանելով հասակ նետած փիլիսոփայ բանաստեղծը, հասարակական կեանքի առօրեայ ընթացիկ օրէնքներն ու սովորութիւնները խորաթափանց մտքի մը պըրիմակին տակ քննելով, ընդվզեցուցիչ թերութիւններ, մասակար տրոխէնքներ եւ ուրիշներու ուշադրութեան վրդայած ընդարձացնող, մոլորեցնող աւելորդապաշտութիւններ նշմարեց. քննադատեց աւանդապաշտական նեղ մտայնութիւնները. երկրին, հայրենիքին բարիքներն ու հարստութիւնները յանուն առաջնութեան, յանուն նախազանութեան իրաւունքներու, շահագործող, յափշտակող աւատապետներն ու վախառուները, բոլոր կարգի հարստարիւնները անխնայ ձողկեց:

Մարդուն՝ բնութեան հարազատ ծընունդը ըլլալը ընդունելով, միայն բնութեան օրէնքներուն յարգ ընծայել յանձնարարեց. տիրող անպիտան կարգ ու սարքերուն, ընկերահասարակական հնամենի սովորութիւններուն ջնջումով բոլորովին մոռացութեան փոշիին մէջ թաղել զարողեց, ընդունելու համար նորը, գործնականը եւ օգտակար անհատին եւ հաւաքականութեան համար. կրօնական

ու աշխարհական բոլոր օրէնքներն ու իշխանութեանց իրաւասութիւնները ժըխտելով՝ անոնց ճորտատիրութենէն, հեղձուցիչ կաշկանդումներէն ազատագրում պահանջեց՝ համարելով այս բոլորը մարդկային սրտի ու կամքի թուլութեան ախտանշիւնք:

Բնականաբար, նման կեցուածքովը անհաւատութեամբ ու անիշխանականութեամբ պիտի դատապարտուէր: Մական ձրպրան՝ ինչպէս հակառակորդները կ'ենթադրէին, խնկրած մը չէր: Եթէ կրօնը իր կեղեւէն մերկացնելով անոր թաքուն իմաստն ու փիլիսոփայական հղիակացութեամբ հրապարակ հանուած ճշմարտութիւնները նկատի առնենք, պիտի տեսնենք՝ թէ ձրպրան: Եւսելորդապաշտութիւններէ (ցնդաբանութիւններէ խորչելով, նարարութիւն ու հաւասարութիւն քարոզող առաքեալ մըն է. արդարութիւն ու հաւասարութիւն այր եւ կընով միջեւ. անհատին ու հաւաքականութեան միջեւ. հասարակութեան ու կրօնական ու տշխարհական իշխանութեանց միջեւ, համաձայն բնութեան անյեղի օրէնքներուն:

Ճըպրան՝ բոլոր նորն ու օգտակարը փնտռող, արդարութիւնն ու ճշմարտութիւնը որոնող եւ անոնց՝ մարդոց միջեւ հաւասար իրաւունքներով գործադրութիւնը պահանջող անկողմնակալ դատախազ մը եղած է: Գրեց ու արձանագրեց իրան ու արդարը, ճշմարիտն ու բացարձակը. բոլոր դրածները սկզբունքային վեճութիւնն եւ անաշուտ պատգամներու իմաստ մը ցոյցանող անմրցելի առաջնութեան հայելիներ են:

Ընկերահասարակական կարգերու մէջ արժատական յեղաշրջում, բարեփոխում մտցնել ուղող բանաստեղծը՝ որդեգրած սկզբունքներուն տարածման համար գրեց նախ «Փոթորիկներ»ը եւ յետոյ «Մարգարէն»:

Ճըպրանի «Մարգարէն» պատմութեամբ մը, վէպ մը ըլլալէ հետո, գիտութեան, գրականութեան, արուեստի, իմաստութեան ու փիլիսոփայութեան համայնագիրտարան մըն է. հոն ուսումնա-

սիրուած ու մշակուած են օրօրոցէն մինչև գերեզման կեանքի դաղանիքներուն բոլոր երևոյթներն ու ծալքերը՝ երեւան բերելու համար ամէն կարգի խարդախութիւններէ զերծ, մաքուր ու բիրեղեայ ճշմարտութեան մասնալուծութիւնները, արուեստագէտի մանրակրկիտ պնդումներով:

«Մարգարէն»ին բերնով պատգամներ, գործնական ու վաւերական ցուցմունքներ ըրած է, համաձայն խղճին ու տրամաբանութեան անշուշտագիտութիւնը, որոնց մէջէն կ'արտացոլայ հանճարեղ փիլիսոփայի մը լուսապրոսկ պատկերը:

Հոն շոշափուած են սէրն ու ամուսնութիւնը, տունն ու զուակները, խելքն ու օրէնքները,՝ կրօնքն ու բարեկամութիւնը, օճիւրներն ու պատիժները, կեանքն ու մահը, ազատութիւնն ու հաւասարութիւնը, կեղեքումներն ու հարստահարութիւնները, տիրոջն ու տիրապետողը, վաշխառուն ու աւատակտը, իւրաքանչիւրը իր յետին մանրամասնութիւնով ու արձակուած արդար վճիռով: Այսքան ընդարձակ նիւթի մը համար անհրաժեշտ եղող ատուղճը կրնայ հայթայթել միայն Ճըպրանի նման հզօր իմացականութեան տէր հեղինակ մը:

Ճըպրան, երխտասարդութեանը մատուցալ տարիներուն իսկ, ալեւորներուն խոհունակութիւն, փիլիսոփաներուն իմաստութիւն ցոյց տալով, խղճամիտները հրճուեցուցած եւ յաղաղկոտները տրեւրեցուցած է իր հանճարին փայլովը, երբտասարդի պէս պեղեցիկին սիրահար, ծերունիի մը պէս իմաստութիւնն ու ճշմարտութիւնը պաշտող մը եղած է: Վատն ու քծնանքը դատապարտելով, ընկերահասարակական կաշկանդող, խեղդող կաղապարէն դուրս նետուելով, ըսարկութեան շղթաները փշթել ուղող եւ ազատ կեանքի մը ջատագովողը եղած է:

«Մարգարէն»ին հերոս՝ դուշակուհիին սիրոյ մասին անոր ուղղած հարցումին հետեւեալ պատասխանները կու տայ՝ որ ըսածներուն շատերէն զին է միայն:

«Աէրը՝ վարդաժպիտ դէմքը ցոյց

տուած պաշուն, իրեն հետեւեցէք, որքան ալ դժուարանցանիլ ըլլայ անոր ճամբան, մի՛ մերժէք զայն, բարձրաթրոնիլ թիւերուն մէջ թաքնուած սուրին վրայ թառած, վերաւորուելու վտանգին ալ ենթակայ գտնուած ըլլաք, ահանջ տուէք իր պատգամներուն, եթէ նոյնիակ իր ձայնին ազմուկով ձեր երազը խանգարուի եւ փճանայ: Ան՝ ցորենի պահեստանոցի մը նման իր սրտին մէջը տեղաւորելով՝ զձեզ կը կամենէ, կը մաղէ եւ ազատելով զձեզ կեղեւներէն, կ'ազայ եւ լեռներու կատարին վրայ արեւզական լոյսին տակ փալփուղ ձիւնի մը նման անբիծ սպիտակովը կը պարուրէ ձեր էութիւնը՝ թրծելու համար աչքերուն սկունքէն ծորոզ աղի արտասուելով, որպէսզի մեղմանաք ու կակուղնաք:

Ամուսնութեան մասին ուղղուած հարցումին՝ գուշակուհին հետեւեալ պատասխանը ստացած է մարդարէէն:

«Միտին ստեղծուած էք եւ պիտի մնաք կենսակից, յաւիտեանս. մահուան սպիտակ թիւերը ձեր օրերը սրբած տարած ստենն ալ պիտի ըլլաք միտսին. ու Աստուծոյ փառաբանութեան խաղաղ ժա-

մերուն ալ եղէք միտսին: Սակայն զձեզ իրարմէ հետու պահող միջոց մը ձգեցէք մէջերնից, որպէսզի երկնային հովերը կարեկրութիւն ունենան ազատօրէն պարելու այդ պարագութեան մէջ: Ձերար սիրեցէք, բայց սիրոյ կապանքներով մի շղթայուիք, որովհետեւ սէրը ձեր հոգիներուն վրայ փոթորկոց ալեկոծ ովկիան մըն է: Ձեզմէ իւրաքանչիւրը միւտին բաժակը թող լեցնէ, սակայն միայն մէկ բաժակէ մի ըմպէք: Բնարին իւրաքանչիւր լարը զստ զստ կը հնչէ, սակայն բոլորը մէկէն՝ մէկ եզանակ կ'արտադրեն: Սրտերնից իրարու հետ փոխանակեցէք, սակայն զգո՛ւշ, ատիկա ըլլայ մինչեւ վերջ պահելու գործողութիւն մը, որովհետեւ կեանքն է միակ ուժը որ կըրնայ պահել ձեր սրտերը իր ափին մէջ: Տաճարի սիւներուն նման իրարմէ հետու կեցէք, մէկ յարկի տակ: Եղեւին մը մայրիկ մը հովանիին տակ աճելու գորութիւնը կը կորսնցնէք:

ՏՕՔԹ. Գ. ԱՍՏԱՐՃԵԱՆ

(Վերջը՝ յաջորդով)



ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԿԱՐԻՉՆԵՐ

(ՀԱՄԱՌՈՏ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»)

ԼԵՈՆԱՐՏՕ ՏՍ ՎԻՆՁԻ. 1452-1519.— Առեղծուած մը, իր ժամանակի բոլոր դիտութեանց հմուտ, մասնագէտի մը հմտութեամբ, բնագէտ, թուաբանագէտ, երկրաբան, կենդանաբան, բուսաբան, աստղագէտ, ամբոցներ կառուցանող, կամուրջներ ձգող, օդանաւ ծրագրող, պատերազմական գործիչներ հնարող, բժիշկ, կրտսիւտ, կազմագէտ, ճարտարագետ, բանաստեղծ, արձանագործ եւ նկարիչ: Այս բոլոր դիտութիւններու մէջէն Լէոնարտոն կը ճանչցուի իբր նկարիչ: Նկարիչ մը որ ամբողջ էր կեանքին մէջ հազիւ չորս նկար տուաւ, այն ալ՝ իր խօսքով՝ կեանաբառ, եւ շարք մը դժձագրութիւններ. ասոնցմով իսկ արժանի է վերածնունդի տիրաններու կարգին զատուելու: Տեսնելու, ուսումնասիրելու եւ վերլուծելու անսահման կարողութիւն, նկարչութեան մէջ ինքնայատուկ գեղեցկութիւն մը ստեղծեց, դժի, գոյնի, զգացումի, ժարմահկան եւ հոգեկան գեղեցկութիւն: Ամէն բանի ինչո՞ւ մը ունէր եւ կ'աշխատէր այդ «ինչո՞ւ»ին պատասխանը գտնել: Ստեղծեց արուեստի ուրոյն գպրոց, նկարչութեան մասին օրէնքներ ու կանոններ գծեց:

Իր «Վերջին ընթրիքը» չորս տարուայ անընդհատ աշխատանքի արդիւնք է, որմնանկար, նկարուած կճածեփ պատի վրայ, իւզաներկով. չորս տարի աշխատելէ վերջ Յիսուսի դէմքը կիտաւարտ մնաց: Գունակաւճէ ուսումնասիրութիւն մը ունի այդ կիտաւարտ դէմքին Համար, որը իր լուսագոյն գործերու կարգին կարելի է դասել, ինչպէ՞ս «Վերջին ընթրիքը». այս ալ կը դասուրի Միլանի մէջ:

Չորս տարի եւս աշխատած է Փարիզի Լուվրի թանգարանին մէջ՝ գտնուող Մօնա Լիզայի վրայ. կ'ըսեն, վերջաւորութեան ըսած է. «Ձերցայ ուզածիս պէս աւարտել»: Եւ ի՞նչ էր իր ուզածը — գերագոյնը եւ կատարելը:

Ազատ սիրոյ մը զուակը, ծնած է Վինչի աւանին մէջ, Ճութանսի մօտ: Այսօր կերտած է Վեռոջիոյի արուեստանոցին մէջ: Վերջին տարիները անցուց Ֆրանսա. մեռաւ թագաւորի թեւերուն վրայ: ՏԻՒՐՆԵՐ ԱԼՊՐՆԵՒԻ. 1471-1528.— Գերման նկարչութիւնը Տիւրերով մուտք կը գտնէ արուեստի պատմութեան մէջ: Անոր արժանիքը նկարներէն եւ գիծանդկարներէն աւելի իր փայտափայտերուն եւ դձագրութիւններուն մէջ պէտք է սքեծուել: Խորաթափանց եւ կրեակայտի մտքի մը արտայայտութիւններն են իր գծերուն իմաստալից, հոգի ու Համարձակ յարժամները: Տպագրական գիտար նոր էր, եւ գրքեր պատկերազարդելու պահանջը շատ: Երիտասարդ Տիւրեր իր ամբողջ ուշագրութիւնը գործուց այդ ուղղութեան. նկարազարդեց կրօնական գրքեր. քանրճինք տարեկանին Յայնուութեան դիրքը պատկերազարդեց, որը իր գիտաւոր գործերէն մին կը նկատուի:

Լէոնարտոյի նման Տիւրեր ալ գիտական ուսումնասիրող մըն էր. կ'ուզէր գիտական ճամբով գտնել գեղեցկութեան իմաստը եւ գաղտնիքը, բայց անկարելիութեան մը առջեւ դատաւ ինքզինքը. «Գեղեցկութիւն, ի՞նչ է գեղեցկութիւնը, ես ալ չեմ գիտեր»: այսպէս ըսաւ եւ ուշագրութիւնը գարձուց գէպի բնութիւնը՝ ըսելով. «Արուեստի գեղեցկութիւնը բերութեան մէջ թաքնուած է, ով կրցաւ

երեւան հանել այդ գեղեցկութիւնը՝ իրեն սեփականութիւն կ'ընէ՝:

Մնած նիւթերի մը սակերիչի մը զուակը. մանկութիւնը իր հօր արհեստանոցին մէջ կ'անցընէ. իր հօրմէն կը սասանայ դժաւբութեան նախնական դասերը:

ՄԻՔԵԼ ԱՆՃԵԼՕ. 1476-1664.- Նշանաբան ըրաւ. «Մարդկային մարմնէն զուրս ուրիշ գեղեցկութիւն չկայ», ինչպէս Յոյները եւ Հռոմէացիները ըսած էին. «Մարդը ամէն բանի չափանիշն է», եւ իրենց արուեստն ալ անոր վրայ հիմնած էին. նոյն բանը ըրաւ եւ Միքէլ Անճելօ: Իր արձանները եւ նկարները յունական եւ հռոմէական բարձր արուեստի շունչը ունէին, անոնց վրայ դրոշմելով իր զօրաւոր անհատականութիւնը եւ գաղափարի ու նիւթի նոր ու ինքնայատուկ յղացումը:

Մտքի ու զգացումի աննման կարողութիւն, ճշմարիտ արուեստագէտ, ամէն բանէ առաջ դիտէր, թէ ի՛նչ կ'ընէր եւ ինչու կ'ընէր. տքնաջան ուսումնասիրութիւններով արդէն ուրապեամբ էր ինչպէս ընելու: Զեւը ամէն ինչ էր իրեն համար: Ան նկարեց քանդակագործի կրթով ու զգացումով, իր նկարներուն տուաւ իր արձաններուն թանձրացեալ գեղեցկութիւնը. նկարչութեան մօտեցաւ քանդակային ձեւով ու կերպով: Իրեն համար գեղեցկութիւնը կրօն էր, արուեստը ամէն ինչ: Քանդակագործ ու նկարիչ՝ այս երկու արուեստները բաւ չեղան իր հոգեկան ըտլոր ըզգացումները արտայայտելու, ու բանաստեղծութեան գիմեց, ու նոյնքան մտքով խոր ու զգացումով ազնիւ բանաստեղծութիւններ գրեց:

Միքէլ Անճելօ իրը մարդ նոյնքան բարձր էր որքան իր արուեստը: Իր արուեստը իր էութիւնն էր, իր հոգին ու նկարագիրը: Իր նկարները զարդական են եւ ինքնայատուկ. արուեստը գերազանցապէս առնական. իր նկարներու եւ քանդակներու կանացի պատկերները ունիին առնականութիւն ունին քան կանացի շքանոր:

Նկարչութեան մէջ իր գլուխ գործոցն է Հռոմի Սիքսթին Եսթիլի ձեղումը, որուն վրայ սկսաւ աշխատել 1508ին, երբ 33 տարեկան էր. չորս տարի անընդհատ աշխատեցաւ. գործի սկզբնաւորութեան հինգ նկարիչներ իրեն օգնութեան կանչեց, որոնք ժամանակ մը իր դժաւբութիւններուն վրայ աշխատեցան. երբ տեսաւ որ անոնց աշխատանքը իր հոգւոյն եւ ճաշակին դուրսացում չի տար, զանոնք ճամբու դրաւ ու ինք մինակը փակուցաւ եկեղեցիին մէջ ու ստեղծագործեց, եւ ի՛նչ տքնաջան աշխատանքով, Տամկանկարչութիւն (Ֆրէսքօ) էր իր ըրածը. գածէ նոր ծեփուած մակերեսի վրայ կը նկարէր, նախ վրձնիով ազատօրէն գոյները կը տեղաւորէ պէտք եղած պող, թաց ծեփը կը ծծէ ու ներկը կը միանայ գածին. վերջը շրջապիծը եւ սուրբաղբուծումը կու տայ, շուքերուն տեղը թափանցիկ գոյնով, խսկ լոյսը՝ անթափանց ներկով, եւ այդ բոլոր գործողութիւնները պէտք է կատարուին մէկ օրուան մէջ. յատակը չչորցած, առաջին օրական մաս մը մինչեւ ամբողջութիւնը աւարտի: Փոքր թերացում մը կամ սխալ մը պատճառ կ'ըլլայ, որ օրերու աշխատանքը պարապի երթայ, պէտք է փոխելիք տեղի ամբողջ մասը քակել եւ նոր մակերեսով ծեփել ու կրկին աշխատել. սրբադրել կարելի չէ՝ տամկանկարչութեան յատուկ գոյնի գեղեցկութիւնը տալու համար յատակը չորցած պէտք չէ ըլլայ որ ներկը ներս քաշէ, ձուլուի ու միանայ գածին հետ:

Գասներկու տարի վերջ Հռոմի նոյն մատուռին մէջ Միքէլ Անճելօյի վրայ պարտք դրուեցաւ նկարելու «Վերջին դատաստանը»:

Միքէլ Անճելօ ծնած է 1476 Մարտ 6-ի, Մրկուշարթի առաւօտ. ծնունդով ազնուական, իր հայրը կառավարիչ եղած է թիւսքան երկու քաղաքներու. իր մայրն ալ սերած է նոյնպէս ազնուական տոհմէ:

Տասնչորս տարեկանին կը մտնէ Դոմենիքօ Կիրլանտէի քով նկարչութիւն ուսանելու...:

1564-ի փետրուարին անձրևոտ օր մը Հոտմի փողոցներուն մէջ անհանգիստ հողերով մէկը կը թափառէր. Միջէլ Անձելուն էր որ իրեն ժամացող բարեկամի մը այսպէս ըսաւ. «Ձիս հանգիստ թող, հիւանդ եմ ու որեւէ տեղ հանգիստ չեմ կրնար գտնել: Ու գարու հանճարը յոգնած ստեղծագործութենէն, հանգիստի տեղ կը փնտռէր: Քանի մը օր վերջ մեռաւ: Իր վերջին կտակը եղաւ Ճյորանի մէջ թաղուի, հակառակ Հոտմի ժողովուրդի պահանջին, որ Հոտմ մնային տնոր աճիւնները: Մարմինը դաղտնի տարին Ճյորանա եւ Սանթ Օրոյէ եկեղեցիին մէջ տեղաւորեցին:

ՃԻՈՐՃԻՈՆ. 1477-1511.— Իր ծննդավայրի եւ ծագումի մասին որոշ տեղեկութիւն չկայ. իր ամբողջ կեանքը ապրած է Վենետիկ եւ աշակերտած Ճիովաննի Բելլինիի: Իր կարճ կեանքի վերջին վեց տարիները եղան ամէնէն հասուն եւ արդիւնաւոր տարիները. այդ վեց տարուայ շրջանին ան մեծ թիւով գործեր արտադրեց, որոնց մէկ մասը ժամանակի ընթացքին կորսուեցաւ եւ մեզի չհասան մանաւանդ իր որմնանըկարները, որոնք Վենետիկի խոնար օդին չդիմանալով փճացան: Այս որմնանկարներու մասին իր ժամանակին Վասարի այսպէս գրած է. «Պատմական որեւէ դրուագ չէին ներկայացնէր անոնք, ոչ ալ կը պատկերազարդէին ներկայի կամ անցեալի հուշակաւոր մարդոց գործերը: Որով ձիորճիոնի վրճիին տակ, նկարը ի՛նչ կ'ըսէ կամ ի՛նչ կը ներկայացնէ՝ կորսւնցուց իր իմաստը և եղաւ՝ նկարը ինչ գեղեցկութիւն ցոյց կու տայ. գեղեցկութիւնը ամէն բան էր իրեն համար. ձեւի, լոյսի եւ գոյնի գեղեցկութիւն: Իր գերը վենետիկեան նկարչութեան յեղաշրջման մէջ մեծ եղաւ եւ ազդեցութիւնը իր ժամանակակից եւ իրմէ վերջ եկող նկարիչներու շատ շատերու վրայ որոշ: Իր արուեստը, իր ուրոյն զգացումի եւ յուզումի արտայայտութիւնը եղաւ. բանաստեղծ-նկարիչ մը, նկարելով արտայայտեց իր հոգեկան ապրումները, ճշգ

մարիտ արուեստագէտի աղնիւ խառնըւածքով:

Ճիորճիոն մեծ վիշտ մը օրտին մեռաւ. իր սիրած աղջիկը փախաւ իր ընկերոջ հետ ու ամուսնացաւ. այդ դէպքէն ետք տխրութիւն մը տիրեց արուեստագէտի հոգւոյն, որը զգալիօրէն ցոյաց իր նկարներուն վրայ եւս...

1511-ին Վենետիկի մէջ համաճարակէն կը մեռնի, հազիւ 34 տարեկան. 1638-ին իր աճիւնները փոխադրեցին Գասպէֆրանջօ եւ Սան Լիպերալ եկեղեցիին մէջ ամփոփեցին:

ԹԻՅԻՄԱՆ. 1477-1576.— Մեծ Գատար, Վենետիկի ժոռ գիւղ մը, տասներկու տարեկանին կը մտնէ Բելլինիի արուեստանոցը. հոն կը հանդիպի ձիորճիոնի, ու ընկերական մեծ սէրով մը կապուած կը մնան իրարու, որ կը տեւէ կրկար տարիներ. միասին կ'աշխատին, զգացումով ու հողերով այնքան ժոռ իրարու: Այդ շրջանին իրենց արտադրած արուեստն անդամ այնքան նոյնանըման է, որ գծաւորութեամբ կարելի կ'ըլլայ գանազանել. բայց մէկ բան ճշմարիտ է, որ այդ շրջանի դերադատող ուժը ձիորճիոնին էր, որ իր ետեւէն կը քաշէր Թիցիանը:

Բայց Թիցիանի իսկական արուեստի շարճութիւնը կը սկսի իր կեանքի վերջին տարիներուն, երբ ուրիշներու համար այդ տարիքը գործէ քաշուելու ժամանակ է, Թիցիան ընդհակառակը այդ շրջանին տուաւ իր գլուխ գործոցները:

Ոնեւ նկարիչ այնքան խոր ներդրածութիւն չէ ձգած իրմէ վերջ եկող սերունդի վրայ, որքան Թիցիան Այսօր անդամ, սորվելու համար, անոր նկարներուն կը դիմեն: Իր գունագէտ՝ իր ժամանակի ամէնէն մեծը, անման գիծանկարիչը եղաւ:

Իր գործին հանգէպ խղճմամտեցով, բծախնդիր ու զգոյշ, որեւէ նկար իր արուեստանոցէն դուրս չէր տար մինչեւ անոր վրայ գետեղուած լըլլաք բարձր արուեստի մը գրոյմը: Վենետիկի նկարչական զարթոյթի փառքը, եւ իտալական վերածնունդի գլխաւոր սիւներէն մին:

Կը մեռնի 1576-ի Օգոստոս ամսուն, 99 տարեկանին:

ՏՕՍՍՕ (Ճիւղմանի Լուսինքն) 1479-1541.— Իր նկարները ինքնատիպ եւ հրաշակալի, ինքնայատուկ վիպական գեղեցկութիւն մը գոյնի, մաքի եւ արտայայտաւորու մեկին մէջ: Վերածնունդի նկարչներուն ամէնէն շատ ինքնութիւն եւ զորաւոր երեւակայութիւն ունեցող նկարիչը: Իր դիցարանական նիւթերուն մէջ ան կրցաւ ի յայտ բերել վարպետ նկարիչի եւ զորաւոր ինքնութիւն եւ երեւակայութիւն ունեցող արուեստագէտի աննման կարողութիւնները: Գոյնի, լոյսի, շուքի եւ մաքի խորհրդաւոր արտացոլում մը իր բոլոր նկարներուն վրայ: Իր գլխաւոր գործը կը նկատուի Փերսարայի Ս. Անտոնի եկեղեցիի խորանակարը, որը հիմա կը գտնուի նոյն քաղաքի հանրային թանկարանը՝ ձեւի եւ գոյնի փառաբանութիւն մը: Իրր դիմանկարիչ նոյնքան նշանակելի է. իր դիմանկարներու մեծ մասը կը գտնուի Մօսկնայի մէջ:

ՐԱՖԱՅԷԼ ՍԱՆՊԻՕ. 1483-1520.— Մընած Ուլկինօ. նկարիչի մը գաւազը. արուեստի նախնական կրթութիւնը կը ստանայ իր հորմէն: Քսենոմէկ տարեկանին կ'երթայ Տլորանս, ուր պատենութիւն կ'ունենայ տեսնելու եւ ուսումնասիրելու վարպետ նկարիչներու գործերը, մասնաւորապէս Մասաչչիոյի որմնանդակարները: 1508-ին Յուլիոս 2-րդ Պապը գինք կը կանչէ Հոռո գեղապարզելու Վատիկանը: Հոռո մէջ կը հանդիպի Միքէլ Անճելոյի, որուն ազդեցութիւնը մեծ կ'ըլլայ Րաֆայէլի արուեստին վերայ:

Խառնուածքով ըզրոյցմին հակոտնեայ երկու արուեստագէտներ՝ Րաֆայէլ եւ Միքէլ Անճելօ: Րաֆայէլ փառքի սիրահար, հարստութեան եւ փառքի ետեւէ է. իր արուեստը աւելի իր անուան փառաբանութիւնն է: Մինչ Միքէլ Անճելօն համար արուեստը ամէն բանէ վեր, ինք արուեստին համար: Միջադէպ մը որը կը պատկերացնէ այն երկու վարպետներու իսկական խառնուածքը. Բա-

Փայէլ Հոռո մէջ իր փառքի բարձրութեանն էր. ամէն մարդ իրեն կը նայէր, ամէն մարդ իր մասին կը խօսէր, ազնուականի կեանք մը կ'ապրէր, յիտունի չափ իրեն օգնող աշակերտներ ունէր, երբ Հոռո փողոցներէն կ'անցնէր իրեն կը հետեւէին: Անգամ մը Միքէլ Անճելօ գործի դաշած ատեն, (այն ատեն Սիքսթին Եօրելի ձեղունին վրայ կ'աշխատէր) ճածրան կը հանդիպի Րաֆայէլի եւ իրեն հետեւող աշակերտներու խումբին. կը կանգնի ու Րաֆայէլը կ'ըսէ. «Բանակի մը զլուխը զստուող հրամանատարի մը նման կը քալես»: Րաֆայէլը կը ժպտի ու կը պատասխանէ. «Իսկ դուն կը քալես մահապարտի մը նման» որ գէպի կախազան կ'երթայ: Րաֆայէլ ստեղծագործող ուժ մը չէր. միւս նկարիչներու գործերէն օգտուող, անոնց լաւագոյն յատկութիւնները ի մի յերկուց մը: Իր արուեստի փառքը կը կազմեն Վատիկանի որմնանկարները եւ իր Տիրամայրերը. Սան Սիսթոյի Տիրամայրը գլուխ-գործոյն է. Րաֆայէլի արուեստը իր բոլոր առաւելութիւններովը կ'երեւի անոր վրայ:

Իր փառքի զազաթնակէտին վրայ, 1570-ի Աւազ Ուրբաթ օր տենդէ բռնուած կը մեռնի: 37 տարի առաջ 1483-ի Աւազ Ուրբաթը եղած էր իր ծննդեան օրը:

ՍԵՊԱՍԹԻԱՆ ՏԵԼ ՓԻՈՄՊԱ. 1485-1547.— Ընտանեկան անունով Լուչիանի. իր նկարները ընդհանրապէս կը ստորագրէր Սեպասթիանուս Վէնիզուս. երբեմն ալ Լուչիանի: Մենած Վենետիկ, աշակերտած է ձ. Բելլինիի եւ վերջը օգնական եղած ձիորճիտի. տաղանդաւոր նկարիչ մը, ստեղծեց ինքնայատուկ ոճ ու արուեստ: Ժամանակ մը Վենետիկ եւ հիւսիսային Իտալիա աշխատելէ ետք՝ կը հաստատուի Հոռո: Հոռո մէջ կը հանդիպի Միքէլ Անճելոյի, որուն վրայ շատ լաւ տպաւորութիւն մը կը թողու թէ՛ իր արուեստով եւ թէ՛ իր բնաւարտութեամբ ու նկարագրով. երկու արուեստագէտներ-

ըը սերտ կապերով ժամերի՛մ բարեկամներ կը դառնան :

ԱՆՏՐԷԱ ՏԵԼ ՍԱՐԹՕ. 1486-1531.— Մնած Ճլորանս, դերձակի մը զուակը. Հօրը արհեստին բերումով կոչուեցաւ Տէլ Սարթօ: Եօթը տարեկանին զինք ոսկերիչի մը քով աշակերտելու կը դնեն. Հոն ժամանակ մը կենալէ վերջ կը մտնէ նկարիչի մը քով. Իր պարապոյ ժամերը կ'օգտագործէ Միքէլ Անճելոյի եւ Լէոնարդոյի գծագրութիւնները ընդօրինակելով, եւ կ'ուսումնասիրէ Մասաչչիոյի որմնանկարները. այս երեք վարպետներու ազդեցութիւնը շատ ակներեւ եղաւ իր արուեստին վրայ: Տէլ Սարթօ իր ժամանակին «Անթերի նկարիչը» կոչուեցաւ: Գիտէր վարպետօրէն գործածել վրձինը եւ գոյնիւր: Ինքնայատուկ գոյներու քաղաղութիւն եւ ներդաշնակութիւն մը ստեղծեց, որը իտալացի միւս նկարիչներու գործերուն վրայ չ'երեւիր, մասնաւորապէս իր վերափայլ պաղ գոյները եւ գորշ արծաթագոյնը: Իր տաղանդը իր դիմանկարներուն մէջ պէտք է փնտռել. անոնցմով արժանի է մեծ վարպետներու կարգին դասուելու: Իր լաւագոյն գործերը արտադրեց տակաւին 32 տարեկան չեղած, Սարթոյի արուեստը հիմնուած է բնութեան վրայ. առանց բնութեան որեւէ բան կարող չէր ընել. պէտք էր տեսնէր, եւ որեւէ բան որ տեսնէր վարպետօրէն կ'ընդօրինակէր. այդ կը խոստովանի ինք իր խօսքերով. «Վըրձինովս կարող եմ պատկերացնել ինչ որ կը տեսնեմ, եւ շատ ալ զերութեամբ»: Եւ այս պատճառով ալ ան միայն տեսածին արտաքինը կըրցաւ պատկերացնել. երբք չկրցաւ թափանցել իրերու խորքին ու շտեմաւ այդ արտաքինին տակ պահուած հոգեկան գեղեցկութիւնները: Նկարեց նաեւ եկեղեցիներու համար կըրօնական նիւթեր, որոնք աւելի մարդկային էին եւ մարմնական քան թէ Հոգեկան:

1518-ին թագաւորին հրակերով կ'այցնիէ Պրանսա ուր լաւ ընկունելութիւն կը գտնէ:

Կը մեռնի 1531-ի համաճարակէն, քառասունըչորս տարեկանին:

ԱՆԹՈՆԻՕ ԱԼԵԿՍԻ ԳՕՐԵԿԿԻՕ. 1494-1534.— Տանքովեցերորդ դարու սկիզբը երբ Միքէլ Անճելօ, Լէօնարտօ, Բաֆառնէլ եւ Դիցիան մեծ համբաւ կը վայելէին Իտալիոյ մէջ եւ Իտալիայէն դուրս՝ Իտալական Գօրեկօ փոքր քաղաքի մը մէջ դուրսի աշխարհին անձանօթ, ինքնամփոփ աւ լուս կ'աշխատէր նկարիչ մը, որ վերջը կոչուեցաւ Գօրեկճիօ՝ իր ծննդավայրին անունով: Իր արուեստը՝ Միքէլ Անճելոյի մօտեցող եւ Դիցիանի ու Բաֆառնէի գեղեցկութիւնները ցոլացնող արուեստ մը: Զեւի, լոյսի եւ գոյնի վարպետ, իր լոյսի խաղերը՝ մտնուածք իր շուքերը տեսնան եւ: Առաջին նկարիչը կարելի է համարել զինք, որ նկարի շուքը, միօրինակ, մեծած գոյնէն ազատեց եւ թոփանցիկ ու զունազեղ կենդանութեամբ արտայայտեց:

1518-1530 Գօրեկճիօ բնակեցաւ Փարմայի մէջ. ույզ շրջանին իր գործերուն լուսագոյնները արտադրեց: մեծ մասը Փարմայի եկեղեցիներուն համար, որոնց զլիտաւորներն են մայր եկեղեցիի զմբէթի նկարները:

Կը պատմուի, թէ ինչպէս անգամ մը Դիցիան կանգնած սքանչացումով կը դիտէր այս զմբէթի նկարները, երբ իր քով պտնուողներէն մին կ'ըսէ իրեն. «ԶԵ՞՞՞ կարծեք, Գօրեկճիոյի նման հասարակ եւ անձանօթ նկարիչի մը այս գործին համար սուղ վճարած ենք: Դիցիան բարեկացած կը պատասխանէ. «Մո՞ւղ. եթէ այս զմբէթը դարձնեն, մէջը ամբողջ ոսկեղրամ լեցնեն ու Գօրեկճիոյի ասան, նորէն այս նկարներու իսկական արժանիքը հասուցած չեն ըլլար»: Այս ըսողը Գիցիանն էր, որ շատ լաւ դիտէր թէ ինչ է նկարչութիւնը եւ նկարի արժանիքը: Իտալական վերածնունդի վարպետներուն մէջ եւ ո՛չ մէկը կրցաւ անոր լոյսի եւ շուքի գունափայլ խաղերուն հասնել. եւ անոնցմէ ալ մէկը կրցաւ մերկ մարմնի գոյնը այնքան բնական ու կենդանի արտայայտել: Գօրեկճիոյի արուեստին մէջ եթէ իրմէ առաջ ապրող նկարիչներու

զործերուն աղղկեցութիւնը փնտռել ուղենք, կը գտնենք միայն Տօսօ-Տօսօսիին:

Գօրեկէի մէտած է 1634-ին եւ թաղուած իր ծննդավայրին մէջ:

ՀԱՆՍ ԼՈՒՊԵՅՆ. 1497-1643.— Նկարիչի մը զաւակը. ծնած Աւկապուրի, հարաւային Գերմանիա, վարպետ պծագործի եւ դիմանկարիչ:

Գ'այցելէ Անգլիա եւ կը գտնուայ Հանրի Ը.ի արքունիքի նկարիչը, ուր բարձր պատիւներու կ'արժանանայ: Գ'ըսուի, թէ Հոլլանդի տնտես մը կոմսի մը հետ վէճ կ'ունենայ. թագաւորը երբ կը լսէ շատ կը բարկանայ ու կոմսին կ'ըսէ. «Եթէ ուղեմ, եօթը դիւղացիներէ եօթը կոմս կարող եմ շինել, բայց եօթը կոմսէ Հոլլանդի մը կարելի չէ շինել...»:

Իր գլխաւոր զործերէն մին կը նըկատուի Անօֆ Քլիվս-ի դիմանկարը, թագաւորին չորբորդ կինը, որուն համար կ'ըսեն, որ թագաւորը այդ նկարը տակի կը սիրէր քան իր բուն կինը: Հոլլանդի դժագործութիւնները արուեստի տեսակէն նոյնքան արժէք ունին, որքան իր իւզաներկերը: 1543-ի Լոնտոնի համաճարակին զոհ կ'երթայ:

ԴԻՆՆՈՐԵԿԻՆ. 1518-1594.— Վիտէլ Անճելոյի պծագործութիւնը եւ Դիցիանի գոյնը: Այսպէս գրած էր իր արուեստնոցի պատին վրայ, եւ մինչեւ վերջն ալ

այդ նշանարանով աշխատեցաւ, իր արուեստին միացնելով Միքէլ Անճելոյի ուժեղ դժագործութիւնը եւ Դիցիանի կենդանի գոյնը: Թէեւ իր գոյները հիմա շատ բան կորսնցուցած են իրենց թարմութենէն եւ գեղեցկութենէն, որովհետեւ Դիննորեկո ռովորութիւն ըրած էր մութ գոյն յատուկին վրայ աշխատել, որ մասնակի ընթացքին այդ գոյնը տիրապետած է նկարի մակերեսին, մինչ միւս նկարիչները ինչպէս եւ Դիցիան որ միայն ճերմակ յատակի վրայ կը նկարէր, աւեր համար իր գոյները մինչեւ այսօր պայծառ ու սուղջ մնացած են:

Դիննորեկո ծնած է Վենետիկ. ներկարարի մը զաւակը, որ վերջը իր հօր արհեստին անուանով ինք կոչուեցաւ Դիննորեկո. իր բուն անունն է Ժազոպո Րիւպիսթի: Արուեստի հմտութիւնը ձեռք կը բերէ ինքնօգնութեամբ. միայն կարճ մասնակի մը համար աշակերտած է Դիցիանի:

Իր նկարելու ազատ ձեւով ներկայ տպաւորապաշտներուն ճամբայ բացաւ:

Դիննորեկոյով կը վերջանայ իտալական արուեստի վերածնունդը ու կը սկսի անկման շրջանը:

ԵՂ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

(Շար. 2)





Կզմարներ

ՄԵՐ ՏԱՆ ԶԱՒԱԿԸ...

«Մեծ տան գուսակները» վեպին հեղինակ՝ Հրաչեայ Քոչարին կը վերաբերի վերի ակնարկը: Կուզենք այս բառերով, այս բուխ տրամադրութեամբ դիմաւորել ու ողջունել զինք, «Մայրենի լեզու» շարքին մաս կազմող «Ուսուցիչը» անուն պատմուածքին ընթերցումէն ետք, մեկնակէտ ունենալով միայն այդ պատմուածքը, որ «Գրական թերթ»ին մէջ լոյս տեսաւ նախ եւ թերթէ թերթ կը շրջի այսօր:

Հրաչեայ Քոչար յաճախ այսպիսի առիթներ ստեղծող հեղինակ մը չէ եղած: Ոչ իր գրականութեամբ եւ ոչ ալ գրականութեան մասին իր յայտնած կարծիքներով: Իր հրապարակագրական ու ֆինանսատական յօդուածները մէկտեղող «Գրականութիւն եւ կեանք» հատորէն ետք՝ դժուար էր արդարեւ առողջ գործի մը հաշույն պատրանքներ կապել այս բանխառն պարտեակներէն: Այդ հատորին մէջ, Հրաչեայ Քոչար անվերջ կը կրկնէր սոցիալիստականը, սովետական հայրենասիրութիւնը, մարքսիստական ուսմունքը եւ եռանդուն կիրքով մը կը հարուածէր այդ արիւնտ հասկացողութիւնները հերքող մարդկային բնական պարտմաները, հակումները, զգացերու ոգին: Ձենք մոռնար Շիրազի, Տարօնցի, Գրաչի եւ այլոց գործերուն մէջ ցեղային գիծեր ու գոյնի գոտի ըլլալու պատճառով բորբոքած իր կատաղութիւնը եւ արձակած սթալինեան շանթերը: Հայաստանի արժանաւոր գաւազնիքը իրենց լաւագոյն ապրումներուն եւ իրազրոյթումներուն մէջ հարուածելու իր այդ անսիրտ արարքով՝ Հրաչեայ Քոչար կը ջանար պարզապէս «Մեծ տան գաւազնիք»ին մէջ ըլլալ: Եղա՛ւ: Նախանձող չզանուեցաւ իրեն: Նոյն ուղղութեամբ երկար տան շարունակուեցաւ այդ խա-

թարումը եւ անխառն բան դուրս չեկաւ անկէ:

Ձէինք կրնար չխեղցնել այդ մէկը: Ձէինք կրնար անտարբեր անցնիլ այս մէկուն ջովէն: Խորք ունի եւ խոռվիչ է այս «Ուսուցիչը»: Քոչար փայլուն կարողութեամբ մը այդ ոչ ծաւայուն պատմուածքին մէջ վերակոչած է 15 թուականի Պոլսոյ սահմուկեցուցիչ մթնոլորտը, մեծ եղեռնի նախօրեակը եւ տուած երկու հակադիր տիպարներ՝ Թուրքը եւ Հայը: Անոնց ներքին այլեւս տեսանելի մասերով: Հիշէ՛ր եւ սուրբը: Ապերախ, այլամերժ, արեւնարբու Թուրքը եւ խաղաղ, շինարար, նահատակ Հայը, այս վերջինին աննահատակելի ուժը, իր տեսականութիւնը երաշխաւորող նրբին ու ուժգին կապերով, ազիտ, լոյսով: Գրական ճշմարիտ բնութ մըն է «Ուսուցիչը», զերծ՝ եկամտաւարներէ, վարդապետական խանդարիչ սուրբերէ, կոմկուսի կոտորակող կապերէն: Հանդարտ պատմումով եւ մեծ ուժով օժտուած գեղեցիկ էլ մը, որ կ'անջատուի Հրաչեայ Քոչարի ողջ գրականութենէն եւ կը պարտադէ՛ր ինքզինք, մօտեցնելով հեղինակը մեզի, դարձնելով զայն մե՛ր տան գաւազնիք:

Կը մնայ արժեւորել այս պատմուածքը, ժողովրդականացնել խոռվիչ ու լուսապատգամ այս «Ուսուցիչը», որ ոչ միայն Մեծասքանչին սէրը գորութեամբ կ'անմուտքէ, այլ մտնումը մաշու կոխելու վսեմ օրինակը կու տայ եւ ապրելու անարժան ապրողները կը դնէ անդրէ կացութիւններու մէջ:

Մաղթենք, որ մէկը առանձին տեսարակով մը հրատարակէ «Ուսուցիչը» եւ զայն բաշխէ մեր վարժարաններուն, տղամանկներուն, հանրային մատենադասաններուն: Նման ժեսթ մը նուազ նուիրական պիտի չըլլար անկասկած, քան եկեղեցիի մը մէկ պատին վրայ քար մը դնելու երկիւղած արարողութիւնը: Այս մէկը նուազ տարածութիւն պիտի չզբաւէր նոյնպէս արքայութեան մէջ, ուր կայ տանուագն ամենասուրբ Հայ մը եւ անոր ապահով բարեխառութիւնը...

ՎԵՐՋԻՆ ՓՈՍՏԻՑ

Ուշագիր ընթերցողը մկատած է անշուքա, որ քանազանա-
բիրը անծանօթ մարդ մը չէ Հայաստանի գրողներուն համար: Բա-
ցայայտ ազգեցութիւններ կրնու կամ մէկը միւսին առանձին տա-
ղերը կառուարելու ընթացիկ հարցին չի վերաբերիր խնդիրը, զար-
մանային այդ չէ այլեւս, այլ մէկը միւսին գրածը օր ցերեկով եւ
ամբողջութեամբ ընդօրինակելու համարակարգութիւնն է ասշեցուցի-
չը, ինչպէս ցոյց կու տան այս էջին Գահարը եւ միւս էջին քրտա-
կանաչափ տարիքոտ Մանուկը:

Թ Խ Ո Ւ Ա Ծ Բ Ն Ե Ր

*«Հայաստանի աշխարհագրութիւն» ամսագրէրը
կրթման անային անստուգիւններն օգտակար խոր-
հուրդներ է տալիս, թէ ինչպէս պէտք է թիւն
խմորեղէն: Եւ կրք այդ խորհուրդներն օգտ-
գործում են սեպիս, Թիւսածիւնըը շատ համեմ
ու հանելի են ստացում: Բայց ամառը ըն-
թերցողներէջ մէկը՝ անային անստուգի Գահար
Միքայէլեանը, այդ խորհուրդները, զժր-խոտ-
բար, օգտագործել է ոչ թէ խմորեղէն, այլ Թ-
անուար թիւնիս, եւ ստացուել է շատ սեան
ու անհամ թան: Այդ կարեւորագոյն մեզ քերին
ամառը թիւ: Եւսում է ցոյց դրուած նրա զժր-
ուսածիւնը: Կեանքը է նրա թիւնու կանա-
կը: Թիւնիւմ 1935 թուականին լար սեանս զժ-
րիտասարդ մայիսը՝ աշխարհը, նա կանգ է ա-
ռել է: Տիւրաններն զժրիւրիս վերագործ Թ-
անուարութեան վրայ:*

Երբ դուռն ազմուկով բացում է մէկից
Ու մերս է ընկնում իմ շարանին,
Գառնում է կեանքս առանկ թովիչ,
Եւ իմ հոգսերը՝ քերիս ու յնչին:

Այս քանակից Գահար Միքայէլեանը թիւն է
հանուանը:

Երբ մերս է մտնում ազմուկով ուրախ
Փռնիկ մանկիլը իմ շարանին,
Գառնում է կեանքս հազար ու խաղաղ,
Եւ իմ հոգսերը՝ քերիս ու յնչին:

Բայց եթէ է. Տիւրաններն 16 սոգանոց Թ-
անուարութիւնը նա զեանքիւս, գործիւն է Տ
նաղ, սպա Սերգէյ Միքայէլեանի զժրիւրի վը-
րայն Գահարագոյնութիւնը, որ ապուած է զժր-
ուսիկ համարագոյն թիւնը 1960 թ. թիւ 4-ում,
ընդհանուանը, Գահար Միքայէլեանի խոհանո-

ցում ան է սուել, Ե սոգից վեր է սուուել 16
սոգի:

Անա այդ Գահարագոյնութիւնները:

ՍԻՆՆԻՐԻ ՎՐԱՑ

Յիշում եմ մի օր այս շէնքի պատին
Յղկում էր Բարը մի բանի տղայ,
Վարդագոյն փաշին եղեանի նման
Իջնում էր գէմքին, ուսերին մրտ:
Ու քէն մրտն էլ չեմ հանդիպում,
Բայց լու յիշում եմ հայեացքն մրտ,
Կոշտացած ձեռքի հետքին եմ տեսնում
Այս անքիծ ու վեհ սիւնքի վրայ:

Սերգէյ Միքայէլեան

ՍԻՆՆԻՐԻ ՎՐԱՑ

Յիշում եմ մի օր Հիւսն եւ մրտ
Այս շէնքի պատին էլ չեմ հանդիպում,
Յղկում էր Բարը Բայց լու յիշում եմ
Մի բանի տղայ, Հայեացքն մրտ,
Վարդագոյն փաշին Կոշտացած ձեռքի
Եղեանի նման Հետքին եմ տեսնում
Իջնում էր գէմքին, Այս անքիծ ու վեհ
Ուսերին մրտ, Սիւնքի վրայ:

Գահար Միքայէլեան

*Ինչպէս անհամ էք, սարքերութիւն զամար-
նա թէ լիայ: Միայն սարքերութեան մէջ Սեր-
գէյը շարան է Գահար:*

Յնչին սարքերութիւն...

*Գրագոյնութիւնը սինով չի սարքերում սո-
վորական գողութիւնից: Անելին, գրագողը Կան-
քորի Կեանքում է շարքի նաեւ գրողի անուս:
Հարկ չկայ սեւիւս, որ գրագողութեան հան-
գալէն փակելու մեակ միւսը գրագողութեան
անելի մասին չիսին է:*

ՎԵՐՋԻՆ ՓՈՍՏԻՑ

Այս բանագրվելը առանձին չեն: «Դրական Թերթ»ը ասեմը տեղում մը կը ցուցադրէ այդ նորայայտ գրողներէն մէկն ու միւրը, միաժամանակ տնօրինելով պարտ ու պատշաճ պատիժը: Այդ երկու էջերը հաւ փոխադրելով, մեր կարգին, պատժուած բանագրողները վերստին պատժելու միտք մը չենք հետապնդիր, այլ կ'ուզենք պարզապէս ընդգծել «Դրական Թերթ»ին արդար եւ օրինակելի խտուարիւնը:

ԴԱՐՁԵԱԼ ԳՐԱԿԱՆ ԿՈՂՈՊՈՒՏ...

Բանակոմսոյի տարիցս Մանուկ Կարապետեանի անուանը յանտի կարելի է հանգրիւնի ձեռնարկը ծանրոր խորագրի սակ աղագրուող սկսնակ եւ երկտարուղ զբողներ շարքում: Եւ ահա ՎՍՎԿ-ի համարան գրականութիւնը անաղբի յայտնան համարում հա երկի ծանկ է յիշուի երկտարուղ զբողներ շարքը՝ աղագրելով «Գորակ» եւ «Ձմրան սառուած բանաստեղծութիւնները: Գարգաւ եւ «Գարուն» բանաստեղծութիւնը, մի իսկական, ներշնչուած, կատարել յանաստեղծութիւն եւ յանկարծ յիշում, որ ինքոր սեղ մի անգամ կարգուցի եւ արի: Գա մի խնկոր չէ՝ երկու կէտ արած, զա հոյն խնկոր է, որ բի բանաստեղծի պարտեղից զաղացած: Ահա տակի երկու բանաստեղծութիւններն էլ,

Հ. ՄԱԿԵԱՆ

ՏԻ

Ամպը որսուց լիքան կատարին,
Մի սարսուռ անցաւ եղեգնաւաներով,
Տագնապով քայտուց յաղաղը ծառին,
Եւ այժն արքից մննդուկը թելով:

Ամպը որսուց լիքան կատարին,
Անտառի սրտից արցունք է ծարում,
Քարափից բառու, փշուկից բարձր
Յուզմունքից շիկնած ջրվէժը ձորում:

Ամպը որսուց լիքան կատարին,
Սիրոյ սարսուռից հալերն արքանացան
Եւ կամաց-կամաց՝ չնչոյ անտառի
Շուրթերի վրայ շշուկներ գարտն:

Ամպը որսուց... Գարուն է կրկին,
Գազում եմ հազի բարբիճները բաց,
Գու էլ ամպի պէս լուս էիր իմ սիրտ,
Ուր-որ է երգով պիտի որսուտ:

Բանաստեղծութիւնները, բառերի աննշան փոփոխութիւններով, ինչպէս տեսնում ենք հային եւ, միայն Հ. Մանուկից աղագրուել է ուղիղ երկու տարի առաջ, 1900 թ. Յուլիոսի 15-ին «Գրական Թերթ»ում, իսկ Մանուկ Կարապետեանինը՝ այս տարուայ Յուլիոսին:

Եթէ Մանուկ Կարապետեանի անունը թոյլ է տալիս այդպիսի հանաքներ անելու, ապա զա թեաւ պատիւ չի բերում նրան, մտնուածը, երբ յիշում ենք նրա իրական տարիքը: Իսկ գրական հանրայայտ, տարրական էջիկան նման գեղարքում վարում է այնպէս, ինչպէս մենք ենք ահում հիմա. հրապարակով մերկայենէլ զգրական կազմուած փաստը, կարմրելը թուշնելով կողոր ախի իսկներն:

Մ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՊԱՐՈՒՆ

Ամպը որսուց լիքան կատարին,
Մի սարսուռ անցաւ եղեգնաւաներով,
Տագնապով զարքանց յաղաղը ծառին
Եւ այժն արքից օսրեսի թելով:

Ամպը որսուց լիքան կատարին
Ու ժայռի կրճէից արցունք է ծարում,
Անտառում պարից ինկազար բաժին,
Ու շատայնցիմ ջրերը ձորում:

Ամպը որսուց լիքան կատարին
Սիրոյ սարսուռից հալերն արքանացան,
Եւ կամաց-կամաց ծաղկող անտառի
Շարժերի վրայ ոտափներ գարտն:

Ամպը որսուց... Գարուն է կրկին,
Գազային հազի բարբիճները բաց,
Գու էլ ամպի պէս լուս էիր իմ սիրտ,
Ուր որ է երգով պիտի որսուտ:

ԳԵՂՈՆ

(BALLADE)

Նա բալլատիրոս էր և հոգով ազատ,
Բայց թէ տիրում էր կնոջը խելան,
Եւ ահա մի օր նրա կինն հպարտ,
Նրան առում է կատակի համար,

- Իմ սիրուն շուճը սաստիկ թաղցած է,
Մօրդ սիրող բեր տամք նրան ուտի -
Նա իսկոյն սրեց սուրը պողպատէ
Որը փայլում էր, նրան սաստիկ,

Եւ մի, երկու ժամ չանցած դորանից
Կնիզն պատա մայրը սպաճուած ընկաւ:
Այդ արիւնտած ընծան բերելիս,
Քարձարտոս նամբին նա սայթափեցաւ:

Եւ մօրը սիրող վար ընկաւ ձեռքից,
Հառաչանքի հետ լուցաւ մի ձայն -
Քարերն այդ սուր են և պինդ, սիրելիս
Թոյ Աստուած միշտ քեզ լինի պահպան:

ԺԱՆ ՐԻՇՊԻՆ

Թարգմ. ԱՐՍԷՆ ԳՐԱՍԻՆԻԿՆԱՆ

(«Յառաջ», Փարիզ 1951, 7 Յունուար)

«ՎԱՐՊԵՏ»ԻՆ ՄԷԿ ՆՈՐ

Այս երկու էրբու ծայրամասերում սքուած
բանաստեղծութիւնները իրարու հետ բազմաանկ
ետ՝ կը պարզուի, որ ներքը և բաւականաչափ
տարբերու անկումները չեն միայն, որ փորձած
են բանագրութեան օգտուիլ, այլ քիչ մը ա-
նում արեւոյցները կը բարձրակի անունները
անմասն չեն մնացած այդ զգեստակէն: Մեր
թերթին ա՛յս ծանօթին մէջ (էջ 57) Լ. Սկարչի-
նան կը յիշէ ծանօթ անունի մը մեզի անծանօթ-
հանգամանքը, կը յիշէ «տիրապետիկ Ա. Յովակի-
մանը» (Աւետիս): «Յովակիմանը վա՛յ-գրողներից
է, գրական մակարայծներց... Գրել է «Մուսէ»
և «Սիրտ» գրքերը, բայց հրատարակով խոչնա-
օակուց «Աստուած» անունով զվէրից» յետոյ:
...Սուրեն Վահուհին հատարով աղագոյցեց, որ
գրելով տեղ-տեղ գրուած գեղարուեստական պատ-
կերներն աւ պարբերութիւնները գրեթէ նայնու-
թեամբ արատգրուած են ծանոթակցից աստ
գրողների երկերից»:

Գոհարը և Մուսուկը՝ ա՛յնպէս:
Աւետիսն՝ ա՛յնպէս:

Իսկ քիչ բնի հապա խանակեանին, որուն
բանագրութեան առաջին անգամ չէ որ կը հան-
դիպինք և համաձայն շրջոյ յամա գրայցներում՝
Վերին փաստը այս չէ:

Ասկէ հեզամեակ մը առաջ, «Միջնարդ» տա-
րեգրին մէջ (էջ 60) մտածանշուած է գերմա-
ներէն լեզուով գրող Վօկըլէն կատարած խանակ-
եանի բանագրութիւնը, որուն առիթով՝ մինչև
իսկ Գ. Մահարին փաստը անտեսելով, տարեգրի-
քին խմբագիրը սրբապիղծ կը հաշակէր: Անգրա-
կան շարժարարներով արեւելք կրնան ձայն վե-
րաբերուել ցոյց տալ այսօր այս թերթին նկատ-
մամբ: Բայց տարիս փաստը չի հերքեր և բը-
նաւ չի կրնար մեղացնել արարքին ծանրակշիւ
հանգամանքը: Կը բուի, թէ զվարպետին մտ
բանագրութիւնը պատահական երևույթ մը չէր,
այլ անտեսութիւն մըն էր, մնայուն ակարարութիւն
մը, բայց բանագրութեան պէս ներքին ազգա-
տարիւն մը դարձանելու արտագին միտում մը:
Սուրեն Վահուհին երէկ, և Գրական Թեր-
թը այսօր, արդար գրած մը կատարած են, գրա-

ՎԱՐՊԵՏՈՒԹԻՒՆԸ...

կանութիւնը մակարոյծ տարրերն մտքելու իրենց բնականօրէն կոչմանով: Բայց ինչ որ ներքին չէ մէկուն, չի կրնար ներքին ըլլալ միւսին: Սուրբն վստահիմ, շրջակայ թեքքոք, Հայաստանի միւս բերքերը, միւս գրողները, բոլորն ալ պարսկականութիւնը ունին տնտես ըլլալ բոլորի՞նք նկատմամբ: Համբաւէն պէտք չէ վախճալ: Գրականութիւնը համբաւով չի սնանիր: Կը սնանի իրաւութեամբ: Ուզիչ կեցածէն: Պէտք է ընդունիլ մանաւանդ, որ ամենիկէ կեղծակեր չկան գրականութեան մէջ: Եւ Եստեսականի անունով ծանօթ գրականութիւնը պէտք է անյայտօղ վերահանութեան ենթարկուի, սերունտ ըլլալով որ, Վարդապետ, կը ցուրնէ, իր կիրարկած անպարկեշտ միջոցներով կատարած առկ կը դնէ իր իրաւութիւնը եւ բնա արտադիր չենք ուրիշներուն սակզտագործութեան վերայ իրեն տեսլականը շնորհելու եւ շնորհողորտ մնալու իր սեպ բերած ճիշտ վստահիմ:

Հարկ է բարեւոյ ճարտարապետները եւ անոնք ըլլալ: Ենթադրութիւնը արդարեւ է նման պարագաներու եւ կրնայ Գեորգիան եւ Մանուկներուն ալ այն պատարութիւնը, որ զընտանեացեան մէջ գեղարմալու եւ մակնութեան Վարդապետութեան բարձրանալու իրենց ընտրած ճանապարհով անմիջապէս:

Այն գիւրգուտեան որ Խոսեակեան կայնակաճացուցած է «ուսանգովեք», կը բարե քէ ուրիշները նայն գիւրգուտեան Վարդապետ միտած են զնմէ: Բայց պէտք է անոնք ըլլալ եւ վերահաստատուի կարգը:

Ասիկա կրնայ ազատացնել կայ գրականութիւնը: Գրնայ խորացնել բազմութիւններէ ալ բազմութիւն անգամ խորացած կայ տարած կասկածը իր գրագիտներուն հանգէպ: Կարեւոր չէ: Նախընտանիքի է մէկ ծաղիկով բարաբարիկ, քան քէ ճիշտ ընդունիլ արագը պարտէզ մը:

Գրականութիւնը կը զարգանայ միայն այն ատեն, երբ բարեւոյնը կ'անհետնէ յանցարարներէն անմեք գաւառ հանելու գերեզմանէն ալ գաւառի ճաշելու, եւ միւսները գտակի կոմ գերեզման զրկելու:

ՄՕՐ ՍԻՐՏԸ

(Հայկական ասանգովեք)

Կայ երեսուրդ մի գայ
Թէ մի սղայ,
Միստորիկ,
Միտում էր մի աղջկայ:

Աղջիկն ասաւ.— շինմ բնա
Գու չես սիրում,
Թէ չէ գնա',
Գնա' մորդ սիրտը բերս:

Տղան մալը, գլխիկոր
Քայլ տաւ,
Լացեց, լացեց,
Աղջկայ մօտ ետ գտաւ:

Սրբ նա տեսաւ, գայրացաւ.
— Է՛լ չերեսա
Շնմէիս, ասաւ,
Միճնի սիրտը չբերս:

Տղան գնաց եւ արաց
Սարի այծեամ,
Սիրտը հանց,
Բերեց ասուց աղջկան:

Սրբ նա տեսաւ, գայրացաւ.
— Կորի՛ք այ՛ճեա,
Թէ հարազատ
Մօրդ սիրտը չբերս:

Տղան գնաց՝ մօրն սպաննեց,
Սրբ վագ կը տար
Սիրտը՝ ձեռքին,
Ուրք ստեց, ընկաւ վար:

Եւ սիրտը մօր ասաւ տխուր.
Լացակամտ, —
«Վա՛յ, խեղճ տղա,
Ոչ մի տեղդ չցտամ»...»:

1919, ԺՂՆԵ

Ս. ԻՍԱՀԱԿՅԱՆ

«ՎԱՐՊԵՏ՝ ԻՆ ՎԱՐՊԵՏՈՒՓԻՒՆՆԵՐԷՆ...»

*Իտալականի ըստաղտոյութեան մասին տանջի
լայն գաղափար մը տալու համար, կու տանք
«Միջնորդ» աստիճանին մէջ մասնանշտած
Նանքակիլու միւս փաստը, ինչ որ կը անկեղծա-
նափեամբ միտին, զուր մզելով միտի զերմա-
նորին ընտելիլը:*

ՄԱՅՐԵՆԻ ԱՉՔԸ

Երիտասարդ մը ուղեւոր երկրէ օտաք
Յուպ ի ճեռին կը դառնայ խրոնապատաս.
Մտեր փոշտ, զէմֆն ալ այրած է արեւէ –
Ո՞վ նախ արդեօք պիտ' նանչնայ աւ բարեւէ:

Այսպէս քաղաք կը մտնէ տն հին դուռնէն՝ ուր
ձիշք փազսցին զէմ մաշտաւորն արդ կը յենուք.
Ու մաշտաւորն իր բարեկամն էր այնքան սերտ,
Բաժակակից եզեր էին երկուքը մերք:

Այլ չընանչցաւ զինքն բարեկամը մաշտաւոր,
Քանզի արեւն խիտ շատ այրած էր զէմֆն անոր.
Բարեւ մը պարզ – աւ կ'արծակէ մի խոր հառաչ
կը թօթափէ ոտքին փոշին, կ'անցնի յառաջ:

Իր սիրտինն պատուհանէն դիտէ հիմա.
«Մազկատի՛ կայս, տնչալի՛դ իմ հագեցըմայ»:
Տե՛ս, չընանչնաք օրհարդն ալ զինքն արդարեւ,
Ձի զէմֆն անոր խիտ շատ այրած է արդարեւ:

Փողոցն թ վար կ'երթայ յառաջ ա՛լ այն ատեն,
Ու կը կախուի արցունք մ'անոր այրած այտէն,
Եկեղեցույ ճանրէն կ'իջնէ իր մայրիկն արդ –
Լոկ ճարեւ. ճե՛զ» կ'ըսէ անոր երիտասարդն:

Բայց տե՛ս – մայրիկն խրոնաքենէն կը հեծկըլտայ.
«Ա՛, որդեակ իմ» – կ'իյնայ անոր կուրծքին վրայ
Կրօք արեւն խիտ շատ փոխած էր զէմֆն գայն,
Մայրենի աչքն սակայն նանչցաւ որդեակն իսկոյն:

Ճ. Ն. ՎՕԿԸԼ

Բարգժ. Գ. Յ. ԿԻԻԼԵԱՆ

(«Լույս» ամսագիր, Պոսթըն, 1907, թիւ 11)

Գերմաներեն լեզուն լաւատեղեակ եւ այսուհետ լայն հասկացողութիւն ունեցող անձնուորութիւն մը կը մկայէ, թէ զով գերմաներէն գերթուածին բառացի թարգմանութիւնն է ՎՄԱՅ-յակամ Այլըն խորագրով այս ստանուորը: Թարգմանութիւնը չէ մեր մտածանշիկ ուզածը, ընդհին է: Բայց մտածելով որ գերմաներէնին ծանօթ մեր ընթերցողները մեծ համբանք մը չեն ներկայացներ, ուշադրութեան կը յանձնենք թարգմանութիւնը:

Գեղեցիկ թարգմանութիւն մը չէ, բանաստեղծական աւելնէն բոլորովին պարզուած տնտրութիւնն է: Եւ անորն ուսանալու մըն է թարգմանութիւնը, քայքայ կարեւորը այդ չէ, կարեւորը նիւթն է, յայտնուն է ու վարպետութիւնը: Այս գերթուածը աւելի զան կէս դար թողաքանդակն էրաւունքը կը վայելէ հայ գրականութեան մէջ Վրասդուաթ Որդին, Եսեկանուած: Ամենուրեք ծանօթ է Վրասդուաթ Որդին, զորանուծողն է նաեւ անոր ենթադրեալ հայրը՝ Ա. Իսահակեան: Ձեր յիշողութիւնը թարգմանելու համար կը թելադրենք, որ վերստին կարգադրուի եւ ապա կատարէք բողոքաւորութիւնը:

Արդ, մեկնելով նիւթին եւ նիւթը զարգացնելու եղանակին, քայքայը կը դառնայ այլեւս, թէ Իսահակեանի ունենէն ժողովրդական գերթուածներն մէկը համարուող այս ստանուորը, ընկերուն վրայ թափառող, դասադէժբու եւ ժողովրդականութեան հեղինակներն տեսարար զարգացուած այս Պանդուխտ Որդին, ոչ թէ Հայաստանին պահպանած զտարիւն հայ մըն է, այլ գերմանական գրականութիւնին ստեղծուած եւ վարպետն մէկը վարպետութեան շնորհիւ հայ գրականութեան մէջ սպրդած խառնածին արարած մը: Որդի մը չէ՛, որդեկիր մըն է: Պարզ: Մեզի պարտադրուած ճակատագրին, մեր աստապաւնքին ու տարածներուն մէջէն զխուսած այս Վրասդուաթը գերմանական ծագում ունի պարզապէս:

Ժողովուրդները, կրթման, իրենց հարկին հարգաւոր ցոլացումը եղող արտայայտութիւններ կը դառնան ուրիշ ժողովուրդներու իմացական կառուածներուն մէջ եւ համապատասխան ժողովուրդները միջոցով փոխադրութիւններ կը կատարեն: Բայց նման պարագաներու, փոխադրուած շանտաշտգծութեան վրայ մարշիկ չեն մտնար արձանագրել պարկէշտութեան նախադրուած ցուցանիշը, նմանազուրկամբ այսինքն Բիրբաւածին, նեւտեղազրեամբ այնինչ նեղիմակիմ բացատրութիւնները տարով:

Իր մտնէն ետք, նոր փոփոխուած լայնի աակ, քննուած ու մարդու բաւականին թարաւած նկարագրի մը յայտնաբերող Աւետիք Իսահակեան, Վրասդուաթ Որդինին հետ անհրաժեշտ ծանօթութիւնը գիտակցարար մտացութեան սարուն հետեւանքով, կասկածի աակ կը զնէ նաեւ բանաստեղծի իր պարկէշտութիւնը:

(«ՄԻՋՆԱՍՏՐԻՆ» Տարեգրք, 1950)

ՊԱՆԴՈՒԽՏ ՈՐԴԻՆ

Պարզեց

ԱԻԵՏԻՔ ԻՍԱԿԵԱՆ

Դարդը՝ սրտիս, ազգաս ու խեղճ
Յաւաքն ձեռիս, գլխիկսք.
Տա՛տ սարինքն պանդուխտ եղած՝
Նարէն դարձայ հայրենիք.
Կեանքի բնով մէջքս ծրամծ,
Միտքս շուար ու մոլոր,
Եօք սարէն, եօք ծովէն՝
Դարձայ մարդն հայրենիք:

Իմ հայրենի գեղի կանդուտ
Տեսայ մանկութ ընկերիս...
«Այ ընկեր իմ», կարօտ արտով
Նրա առաջ վագնցի,
Ասի՛ւ «Բարսի՛կ, անգին ընկեր՛ր,
Չի՛ս մանաչում քու ինձի»...
- Այլըն եւ շա՛տ փոխուեք էի...
Չընանայնչն նա ինձի:

Յուպըն ձեռիս՝ գեղը մտայ,
Անցայ եարիս ստան մարմով,
Տեսայ ետքը վարդը ձեռի՛ն՝
Մեծանի կանգնած դրոմ մտու-
Ասի՛ւ «Գուրի՛կ, ազիկ տեսիկ
Արժանացայ եւ բարով...»
Նա էլ ինձի չընամայնչն...
- Ազգաս էի ու փոշուտ...

Դարդը սրտիս՝ հասայ մեր տուն,
Տեսայ ծերակ, խեղճ մօրս.
Ասի՛ւ «Ճանի՛ր, մամբարդ մտքդ եմ,
Գիշերս ինձ հիւր կ'ընդունե՛ս»:
Ա՛յս, մէրիկ ջան... վագնս ընկուտ,
Սըրտին գրկեց ու լացեց.
- Ա՛յս, բալա՛ ջան, դարիս բալա՛,
Էդ դո՛ւն ես...»:

1902, Շուշի



ՌՕՄԱՆՕՔ ԵՒ ԺԻՒՆԻԵՔ

Կարողանան ներկայացման մը մասին է այս գանձի մը առջը, Նշան Փաշինեան Հայ մեծաբանի լուսարձական զատարաններու աշակերտութեան կողմէն արուած ներկայացումը, մեծարանի Վասպուրական սրահին մէջ, Շարաթ 22 եւ Կիրակի 28 Մայիս 1904-ին:

Եթէ կ'անգրագտանո՞ք սառք, պատճառը կարճ մը աշխարհութեան արժանի երեւոյթներն են, եւ զերանդաններէն սմանց յայտարարեան շնորհքը, կարելի է ըսել նոյնիսկ զերանդանի ընդունակութիւնները, որոնց պէտք է հետեւիլ, որոնց վրայ պէտք է քուրջուրայ:

Ուշադրութեան արժանի երեւոյթ էր ամէնէն առաջ սեփարեան նարութիւնը, զանի մը գայտարով, որն էր, ասն էր սենեակները, մուտքն ու կըրք պատկերացնելու յաջող գործը լոյսերու լաւ զարծանութիւն մը, որ քոթնի ի քոթի կը փոխազդէր հանդիսատեսը առանձն առան, սենեակէ սենեակ: Քատարը կենսոյ կ'աննէ, կենսոյ կ'աննեայ երբ զերանդաններն ու բեմազբէնները փնտաւուրէ մէջ են անարար յաջող, զնդիցիկ նոր մեծի մը, արտայայտութեան նոր միջոցի մը: Նման փնտաւուր մը կը յայտնարեմէն, եւ յաջող արդիւնքներով, մեծարանի լուսարձականներն ու իրենց զնկազարը՝ Պրն. Գ. Շահինեան:

Ազա խաղաղութեան դժուարին րոտնին մէջ կան աւազարութիւն գրուելու օրիորդներ՝ Սեղա Սուաւեան ժիւլիէթի զերով, եւ Սրբուհի Օհանեան Պէտլայի զերով ամերիկացի զեպտանին կինը: Անուշտ որ ամէնէն զժուար քաժինը փիւլիթիւնը պիտի ըլլար, թէ՛ երկարութեամբ եւ թէ՛ սիրահարի զերերուն ապերախտութեան պատճառով: Օր. Սուաւեան կրցաւ գրուել բեմը, եւ սրահը, սրովհետեւ կրցաւ մտնուլ բեմը եւ սրահը, Նոյնը կրցաւ իրականացնել Օր. Սըր-

բուհի Օհանեանը: Երկուքն ալ դասն էին զազանիք մը, որ փորձառու զերանդաններուն է, այսօրեան թէ պէտք է զերը առնել ձեռքերուն մէջ, եւ զնդիկի նման նետել վեր, ու վար, խաղալ անոր հետ, միշտ պահելով սակայն անբարեն կազուած, անսահմանի թելերով, ձեռքերուն մէջ, անոնց զնկազարութեան ենթահայ: Իրենց կեցուածքով, խոսուածքով, նստուածքով, եւ լրատութիւններով անգամ, առին մեկի ուսումնասիրուած խաղաղութեան մը հանոյքը: Իսկ եթէ սուսումնասիրութեան արդիւնք չիկն ասոնք, կը նշանակէ բնական, ինքնարբ ըմբանալը կար, ինչ որ աւելի եւս մեծ արժէք է:

Պրն. Պրն. Չափրատ, հակառակ լեզուական դժուարութիւններու, զերը լրիւ յիշելու նիշերուն, կրցաւ պահել միազգացող մեւով մը որոշ կերտուածքով տիպար մը, որուն ներկայութիւնը համեմէ է Քատարիկին:

Պրն. Վալէ Փափաղեանի Լեթիֆիքաթիւնը ամերիկացի զեպտանին, լափն աւելի ըզային էր, եւ Քատարիկին ընդհանուր միաժառութեան ու բարութեան չէր համապատասխաներ. սարսիք մտնելով մը պէտք էր այլ զերին:

Մնացեալները - Ժամկոչեան Յարութիւն (Թոմանօֆ), Մատենեան Վաղդէն (Ռուս զեպտան), Քովմասեան Յիթա (Էտտորիս), Պետրոսեան Ժիրար (Պրն. Թէրզեան Սոնա (Մարֆա), Շալեան Վրէտ (Ա. Ջիւսուր), Աթթարեան Գուլիթ (Բ. Ջիւսուր), Նալչեան Յակոբ (Լըրուս), Պաղտատարեան Զաւէն (Ապրազապետ) սարսին իրենց զերերը առանց խաղաղութիւն ընդհանուր կարողքը, ոմանք միշտ անգամ, սեղանի, զերանդանի ժայթքումներ ունեցան:

Երկու խօսք պէտք է ուզուի անշուշտ Քատարիկի հեղինակին, ֆիթըր Ռ. Քիթիօֆին, որուն զորքը լեցուն է այնքան սրամիտ տողերով, այնքան նուրբ երգիծանքով, որ մոռցնել կու տայ նոյնիսկ սակար խաղաղութիւններ եւ կը գրուէ հանդիսատեսը: Քատարիկը արժանի է խաղցունելու աւելի փորձառու խումբերու կողմէ:

Այլ փորձառու խումբերը պարտաւոր են հետեւելու այս ներկայացմամբ յայտնարեցուող Քատարիկեան սեփարուն, պարտաւոր են ստեղծել համապատասխան արուեստի միջոցներ, եւ յառաջիկան կարելիութիւններ, որպէսզի այլ ուժերը յարատեւեն, ընտանիքն, յոսովիզմն, բարձրանան ու լուսազոյն ծառայեն Հայ բեմին:

Բ. Փ.



ՀՈՒՆԳԱՐԱՑԻ ՀԱՅԱԳԻՏԸ

Հայաստանի Հեռագրական գործակալությունը քրդ-տիգիմ հետ ունեցած գրոյցի մը ընթացքին, հունգարացի երիտասարդ հայագետ Փայ Սայմա- շի յայտարարած է, թէ Հայագիտության հիւշը միշտ ի պատուի է Համգարից մէջ: Մի՞նչու Հա- մայտարային Ասային Պատերազմ, Փնջայի հա- մայտարանը ունէր հայագիտության առանձին անկիւնը: Անոք կողքին յոյս կը տեսնէր Վարու- ճիսը հաւանութիւն ամսագիրը: Ներկայիս աշ- խատանքներ կը տարուին երկու ատմագրութիւնները Վերահաստատելու ուղղութեամբ:

Հունգարացի հայագետը, երեւելիա տարի երեւանի մէջ յանձնարած է հայ ժողովուրդի պատ- մանքեան ամպիւսը, գոր կը ղեկավարէ Փրոֆ. Ա- ջուտ Արքահումեան: Իրերու թեղ պատրաստած է Վերաստագր Բ. Ի. և Արտաշէս Բ. Ի. ժամանակա- շարքումի հայ-հատմական յարաբերութիւններու պատմութիւնը: |

ՓՐՈՑ. Յ. ՔԵՇԻՇԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱՎԻՉ ԵՒԼԱՍ» ԹԵՐԹԻ

Մարտ 25-էն ի վեր, Պրաշիւնայ Սաս Փառու շուրջերն մէջ լայն կը տեսնէ զԵՂԱՍ (Հիւլադու- Յունաստան) անունով կիսամսեայ թերթ մը, (Յ էջով), որուն տէր և տնօրէն է փրոֆեսոր Յակոբ Քէշիշեան, իսկ խմբագիրը՝ Վարուճիս Աշարլաթոս: Առաջին թիւին մէկ մասը նուիրու- ած է Յունաստանի ազգային տոնին, Մարտ 25-ին, մէկ մասն ալ՝ Փառու թարգմարի մաւ- ուան, Գոնսթանտինոս թաղաքի պահպալու- թեան, Կեղզոնի Միւսիւնի կառավարութեան հաստատման, Կիւրոսի ստեղծման, Հեյլէն բա- նաստեղծ Քոսթիս Բայամաթի մահուան Չէ- ռք տարիելիցին, Սփիւռքի Հիւննական կեանքին, ևայլն:

ՏԱՀԱՆ ՏԱՀՆՈՒՐ ԱՎԱԴԵՄԻԱՅԻ ՄՐՑԱՆԱԿԸ ՏԱՀԵՏԱԻ

Յրամսեայ տողմնաւար գրագետ Շահմ Շահմար (Շահմար Քերեսեան), որ Յըրիս-

իս փրամբերն յիշուով և Արմէն կիւլիս կիւ- ժանուով կը գրէ, վերջերս յոյս ընտելած է շէնո Փանթը Յէտ (Կրակ-Կրակի գեմ) խորա- գրով շեքրտաններու հասար մը, որ պիտանա- ցած է Յրամսեան Ակադեմիայի շրջանակա- ղանքեան մրցանակին: Շահմ Շահմարի տակ տառը երատարակած միւս հասարներն ալ տրտա- նացած էին մրցանակի:

ԱՇՈՏ ՄԱՒԱՔԵԱՆ

Աշոտ Մաւաքեանի վերջին ժողովուրդը Վա- ռիւր հազար տար արեւան ասկոյ ՎՈՒԿԱՅ Տոմարի արտանայած է Պանի յարմանկարի մի- շաղաչին փաստանին, Այս Քիւլիս արթիւ, Վարական ճիկարուն ճանթ թեմարիին ևն է- րատարակած է երկու տեսկցութիւն մը, ուր Անի վերջեայ կը պարզէ իր տեսկեաները շա- ճանկարի արուեստին և ձգտումներուն մասին:

Ամերիկեան Մեթրո-Կոլաւիս Մայրը մեծ ընկերութիւնը երէք ժողովուրդներու Շաժար պա- ճանարութիւն մը ստորագրած է Մաւաքեանի ևն, որ զարմած է Պրամսեան յարմարութեան ամէնէն զտանելի և կայուն արեւելեան մե- կը: Նախկին այս ժողովուրդները, Մաւաքեան ը- կըսած է զարմունք ՎՈՒԿ-ԷՆՈՒ ա զուիտ ինքը, Թուրք Մերի ճանթ վեղը:

ՕՐ. ԷԼՎԻՆ ԳԱՋԱՆՃԵԱՆ ՌՈՉԻՆԱՅԻ ԴԵՐԸ ՍՏԱՆՁՆԵՑ

Պոսթընի երամշտանոցը իր սրտին մէջ ներ- կայացուցած է Սիվիլ Սափրիչի օփերան, որուն մասնակցած է ճանթ երգչուհի Օր. Էլվին Պա- ղանճեան՝ Ռոպինայի դերով:

Հանրութիւնը մեծապէս զնաւաստած է զժ- ղարուեստական այս մեծարկը:

ԴԵՐԱՍԱՆ ԱՐՏ. ԳՄԲԵԹԵԱՆԻ ՆՈՐ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

Մայիս 27-ին, Փարիզի (Շան զեիզի) Մա- ղիմիան շարժանկարի շինչ սրահին մէջ, տեղի ու- նեցած է ժող Ռոպինի թեմարութեան Պիմա- ղաֆա ընկերութեան պատրաստած Վէլ ֆա փեր- տիւն (Կրակուծ ճայիթ) ժողովուրդի Առաջին Տե- ազգարութիւնը:

Այս ժողովուրդին մէջ կը զարմանկան զերակա- տարները: Միջէլ Մոքիանի, Ժան-Լուի Թըն-

քիճմամբ, ժամ Գարսի, Միշկ Վիթայտի և Գարքիմ Քուլիկի կողքին՝ վեր առանձնած է Քանե փրամառայ վաստակաւոր զեբաւամ Արտաշէս Գմբէշեան, որս տիպար անձնաւորունք և արքաւանդ ցայտում խաղ՝ յատակ փոփոխարտաբանք ընդժամ է երկնայքին հրաւիրուած արքաւանդակներս շնորհմին:

Երկրորդ ժողովունքն Յիւրք անուամ է Ասպիւն Աշխարհամարտէն: Պատերազմն իւր, 1918-ին, երեք զինուորներ կը ժողովին Սեւաստաբոյի մէջ (Ռուսաստան): Յրամա զերազանեայս ևամար կը մտնէ խեղճակրակ ձուռս մը մէջ: Կը ձաւարդն Յուրքիւ, յումական կզկներք, ծակուլաւիս, Միշկերական և վերջապէս կը համին Մաթիլիս: Համարքարքիւնք կը տնէ ժամ տարի:

**ԵՐԳՉՈՒՀԻ ԺԱՆՆԻԹ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ
ՌՈՒՄԱՆՈՅ ՄԷՋ**

Ռուսահանդան պետութեան հրահրով՝ Վերջերս Ռուսահան աշխարհ և յաջող երջանակներ ևսուած է յիշատակայ երկրաւորք Երգչուհի Յր. Ժաննիթ Գուլամեան:

Մայիսի ընթացքին, Յր. Գուլամեան վէջ կզգանդակներք աւուած է: Մայիս 18-ին՝ Պուլքէն, 21-ին՝ Բոնաթանցա, 28-ին՝ Պրաշով, 29-ին՝ Գրայովա, իսկ Մայիս 24-ին՝ Քլուսի մէջ ժամակցած է Փուլիկի Վուստի պիւրային, Միշկի չերով:

Ռուսին ժամուրի ու հարգութիւնք շնորհարէն զնաւուած ևն հայ արուստագիտուհին, ոք ժամուարարք մէն յաջողութիւն արձանաչում է Փուլիկի պիւրային մէջ, հակառակ տար ար կարելիութիւնք չէ անկցած Կարմուկան փորձեր կատարելու:

Եր յաշարգիւրք զիտարարար կազմուած է գրասկան կարերիք: Սահան, իրեն հայ երգչուհի, Կարմուկանքուլիւնք անկցած է երգչու ևսու հայերէն կարերիք: Մասնաորարք ուսմէն ժողովուրդք շատ սիրած է կամուստի Վուստիկը, որ բուն Կարմուկանքիւնքուարք զմանցած է:

**ՇԱՐԼ ԱՋՆԱՒՈՒՐԻ
ՆՈՐ ԺԱՊԱՒԷՆՆԵՐԸ**

Յրամառայ տաղանգարք երգանան, երգիչ և զիրտամ Շարլ Աճաւար Կարիպային Միտրեան և Միտրեայ Կանանգանքու մէջ կուտարած յարգանքն շրայապայտանքն իւր՝ կը պատարասուի ճիշտ ժողովունքն (ֆիլմ) կարճանլու: Առային ժողովունքն իտարգիլն է. Վաստա մը Կանկիւզու Յիւրքի ժողովունքն իտարգիլն է. Վարդանիսն ևն անմէ, Ուլիսիս պէս... Եր

ԵՐԳՉՈՒՀԻ ԱՆԺԷԼ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Կիտի Փրօֆէն Յուսիս 21-ի իր քիւն մէջ արձագանգ կը համկիտանայ Յր. Անժէլ Կարապետանի վերջին յաղագրութեան: Արդարեւ, ժամեօ արուստագիտուհին ժամանկեցով կիտի Կարմուկանքին մրցանակարարիւնք, շնան է Վարդարայն Երգչուկանքան Բ. մրցանակը, երգիլով *Յանաթիս ալ Ճաստաւ...*

Անժէլ Կարապետան յատարկիայ տարի պիտի ևսուի Յիւրիլի երաժշտանքի կարծարգեմերուն, ստանլու ևամար Վիլլապայտին Երգի մրացանակք:

ԱՐԱՔՄԻ ԿԷՐՈՍԿԻ

Պրիւսէի մէջ, Վերջերս տեղի անկցաւ զուշականքէս մը, որուն ժամանկցած ևն 300 արուստագիտներ, Երգչուկանք: Ասոնք կարգին ժամուար ուղարկութեան արձանաչած է Արագի Տէրապի: Ան շարժութիւնք կը հրատարակէ իր գործին նկարը, յիշելով ասպանարար արուստագիտուհիին անցեալ ու ներկայ յաջողութիւնները:

**ԳԱՆՈՒՍՑ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՓԱՌԱՏՕՆԸ**

Կրկունքի մէջ, 16 Մայիսին և 9 Յունիսին միջև տեղի անկցած է Գայուստ Կիւլպէնկեանի տնուան ծրք երաժշտական փառատնք:

Այդ տարիս համկիս կիւն ևն վեց *սենթետիթ* նուագախումբեր, իննգ երգչախումբեր, երկու օֆիերա, երգիչներ, զուրակախումբեր և զաշնակախումբեր: Յեղի անկցած ևն զաւելի երկու Սերկայապայտանք և երեք բանախումբիւնքն, ճիւր ռանգարով՝ Շէյխփիր և երաժշտարիւնք: Շքարուս և կրօնային երաժշտարքանք Սրեք Պարիսը:

Ձեր տպագրական ամեն տեսակ գործերուն համար դիմեցէ՛ք

ՏՊԱՐԱՆ ԱՏԼԱՍ

որ սարքաւորուած է արդիական մեքենաներով եւ գոյգ տաղաշար-
մներով :

Մասնաւորաբար կը ստանճնէ գիրքերու տպագրութիւն՝ Լի-
բանանի թէ արտասահմանի համար :

Մաքուր եւ անթերի տպագրութիւն
հզնամիտ գործ

Հասցէ--

ՏՊԱՐԱՆ ԱՏԼԱՍ
Հեռ. 245402
Նամակատարի՝ 2745
Թիւ տը Ֆրանս
Պէյրուս - Լիբանան

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈՒԱՐ

ՀԱՏԱՎԱՀԱՌ 2 Լ. ՈՍԿԻ

Վարչութեան հասցէ--

DIKRAN KOUYOUMDJIAN

B. P. 587, Beyrouth - Liban

digitised by

A.R.A.R.@

